


# ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՈՒՔ Ձեռնարկ



Վարչական իրավունքի  
սկզբունքները՝ անհատների  
և պետական մարմինների  
միջև հարաբերությունների  
առնչությամբ

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԴՈՒՔ

Ձեռնարկ

Վարչական իրավունքի  
սկզբունքները՝ անհատների  
և պետական մարմինների  
միջև հարաբերությունների  
առնչությամբ

*Ֆրանսերեն հրատարակությունը՝  
L'Administration et vous - Un manuel  
ISBN 978-92-871-8735-2*

Բոլոր իրավունքները պաշտպանված  
են: Սույն հրատարակության  
որևէ մաս չի կարող թարգմանվել,  
վերարտադրվել կամ փոխանցվել  
որևէ ձևով կամ միջոցով՝  
Էլեկտրոնային (սկավառակ,  
համացանց և այլն) կամ  
մեխանիկական, այդ թվում  
պատճենահանմամբ, ձայնագրմամբ  
կամ տեղեկատվության  
պահեստավորման կամ որոնման  
ցանկացած համակարգով՝ առանց  
Հաղորդակցության տնօրինության  
(F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս կամ  
publishing@coe.int) նախնական  
գրավոր թույլտվության:

Կազմի լուսանկարներ՝ Shutterstock.  
com և Եվրոպայի խորհուրդ

Կազմի դիզայն և Էջադրում՝  
Փաստաթղթերի և  
հրապարակումների տպագրության  
բաժին (SPDP), Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհրդի  
հրատարակչություն,  
F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս  
<http://book.coe.int>

ISBN 978-92-871-8768-0

© Եվրոպայի խորհուրդ, 2018  
թվականի հոկտեմբեր  
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

# Բովանդակություն

<b>ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ</b>	<b>5</b>
Աղբյուրներ	6
Եզրութաբանություն և հիմնական հասկացություններ	6
Պետական մարմիններ և օրենքի գերակայություն	7
Հանրային ոլորտի բարեփոխում	8
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա	9
<b>ԳԼՈՒԽ I – ՆՅՈՒԹԱԻՐԱՎԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐ</b>	<b>11</b>
Սկզբունք 1. Օրինականություն և համապատասխանություն օրենքով նախատեսված նպատակին	11
Սկզբունք 2. Հավասար վերաբերմունք	14
Սկզբունք 3. Օբյեկտիվություն և անաչառություն	17
Սկզբունք 4. Համաչափություն	18
Սկզբունք 5. Իրավական որոշակիություն	20
Սկզբունք 6. Թափանցիկություն	24
Սկզբունք 7. Մասնավոր կյանքի անձեռնմխելիություն և անձնական տվյալների պաշտպանություն	28
<b>ԳԼՈՒԽ II – ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐ</b>	<b>33</b>
Սկզբունք 8. Մատչելիություն	33
Սկզբունք 9. Մասնակցություն	36
Սկզբունք 10. Լսված լինելու իրավունք	38
Սկզբունք 11. Ներկայացուցչություն և աջակցություն	41
Սկզբունք 12. Ժամկետներ	42
Սկզբունք 13. Վարչական որոշումների ձևը և ծանուցումը	43
Սկզբունք 14. Վարչական որոշումների կատարումը	45
Սկզբունք 15. Վարչական պատժամիջոցներ	47
<b>ԳԼՈՒԽ III – ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈՆՀԱՏՈՒՑՈՒՄԸ և ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐԸ</b>	<b>51</b>
Սկզբունք 16. Պատասխանատվություն և հատուցում	51
<b>ԳԼՈՒԽ IV – ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐ և ԲՈՂՈՔՆԵՐ</b>	<b>59</b>
Սկզբունք 17. Ներքին վերանայում	60
Սկզբունք 18. Արտադատական կարգով վերանայում	61
Սկզբունք 19. Բողոքարկման իրավունք	63
Սկզբունք 20. Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանություն	68
Սկզբունք 21. Դատական որոշումների կատարում	70

<b>ՀԱՎԵԼՎԱԾ I – ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՆՇՎԱԾ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐԻՆ</b>	<b>71</b>
Կոնվենցիաներ	71
Նախարարների կոմիտեի առաջարկությունները և բանաձևերը	73
<b>ՀԱՎԵԼՎԱԾ II – ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՈՐՆ ԱՌՆՉՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՆՇՎԱԾ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐԻՆ</b>	<b>77</b>
Թվարկված՝ այբբենական կարգով	77
Թվարկված՝ ըստ սկզբունքների	80

# Ներածություն

---

**Մ**արդիկ իրենց առօրյա կյանքի շատ ասպեկտների առնչությամբ ապավինում են պետական մարմիններին: Շատ դեպքերում պետական մարմնի կողմից կայացված որոշումները կարող են կարևոր հետևանքներ ունենալ յուրաքանչյուր անհատի տնտեսական և սոցիալական բարեկեցության համար: Հետևաբար, կարևոր է, որ իրավական համակարգերը նախատեսեն և կիրառեն վարչական իրավունքի այնպիսի սկզբունքներ, որոնք արդյունավետ են պետական մարմինների արդար և պատշաճ գործունեության նկատմամբ հանրային վստահության հաստատման և պահպանման հարցում: Սույն ձեռնարկում սահմանված սկզբունքներն առաջնային կարևորություն ունեն պետական մարմինների հետ փոխհարաբերություններում անհատների իրավունքների և շահերի պաշտպանության հարցում՝ թե՛ վերջիններիս կողմից գործողությունների կամ ծառայությունների վերաբերյալ անհատապես կամ հավաքականորեն ներկայացված պահանջների, թե՛ պետական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ ձեռնարկված գործողությունների մասով: Այս սկզբունքները ներառում են որոշումների կայացման այն գործընթացները, որոնցով անցնում են պետական պաշտոնատար անձինք, նրանց կողմից կայացվող վարչական որոշումների որակը, ինչպես նաև հանրության համար այդ որոշումները վիճարկելու հնարավորությունները, և տրիբունալների, դատարանների կամ այլ ոչ դատական մարմինների դերը դրանք վերանայելու գործընթացում:

Սույն ձեռնարկում նշված սկզբունքները սովորաբար վերաբերում են պետական մարմինների կողմից տնտեսական և սոցիալական հարցերով կայացված որոշումներին (այսուհետ՝ վարչական որոշումներ), օրինակ՝ առևտրային գործունեության որևէ տեսակ իրականացնելու մասին դիմումների, շինարարության կամ հողամասի կառուցապատման կամ դրա նպատակային նշանակությունը փոփոխելու թույլտվության, տեղական դպրոց ընդունելության, հանրային բնակարանների հատկացման, ինչպես նաև հիվանդանոցային և բուժքույրական օգնության տրամադրման առնչությամբ: Որոշումներն առավել հաճախ ընդունվում են տարածքային և տեղական մակարդակում՝ կախված հանրային ծառայության բնույթից: Սկզբունքները

կիրառելի կլինեն նաև կենտրոնական և դաշնային պետական կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների նկատմամբ, օրինակ՝ հարկային հարցերի, տրանսպորտային միջոցների լիցենզավորման և անձնագիր տրամադրելու մասին դիմումների հետ կապված որոշումների նկատմամբ: Այն դեպքում, երբ որոշումների կայացումն իրականացվում է համացանցային հարթակի միջոցով, պետական մարմնի ֆիզիկական գտնվելու վայրը կարող է եսկան չլինել: Այնուամենայնիվ, սկզբունքները կիրառվում են հավասարապես՝ անկախ գտնվելու վայրից կամ այն բանից, թե՛ ծառայությունը մատուցվում է համացանցային, թե՛ թվային հարթակի միջոցով: Հաշվի առնելով պետական մարմինների կողմից տրամադրվող առցանց ծառայությունների առանձնահատուկ բնույթը՝ հատկապես կարևոր է, որ նրանց կողմից ձեռնարկվեն քայլեր ապահովելու համար այս ձեռնարկում ամրագրված սկզբունքների պատշաճ կիրառությունը:

## Աղբյուրներ

Սույն ձեռնարկն ամրագրում և բացատրում է Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այն սկզբունքները, որոնք վերաբերում են պետական մարմինների և նրանց կողմից սպասարկվող բնակչության միջև հարաբերություններին: Եվրոպայի խորհրդի այն փաստաթղթերը, որոնցից վերցված են այս սկզբունքները, թվարկված են հավելված I-ում: Ընթերցողը պետք է նկատի ունենա, որ այդ փաստաթղթերը հեղինակավոր տեքստեր են, քանի որ դրանք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև քաղաքական համաձայնության արդյունք են և ընդունվել են (և, համապատասխան հանգամանքներում, բացվել ստորագրման համար) Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից: Թեև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկությունները և բանաձևերն իրավական առումով պարտադիր չեն դրա անդամ պետությունների համար, սակայն դրանք ունեն քաղաքական և բարոյական հեղինակություն յուրաքանչյուր անդամ պետության կողմից դրանց ընդունման համար տրված համաձայնության ուժով (եթե, իհարկե, և այնքանով, որքանով նրանք հայտնել են վերապահում տեքստի վերաբերյալ դրանց ընդունման պահին) և այնքանով, որքանով դրանք լայնորեն կիրառվում են անդամ պետությունների իրավունքում, քաղաքականության մեջ ու գործելակերպում:

Ուշադրություն է հրավիրվում Եվրոպական միության (ԵՄ) մի փաստաթղթի վրա, որը նման է այս ձեռնարկին՝ «Գործիքակազմ գործող մասնագետների համար՝ պետական վարչարարության որակի վերաբերյալ» (2017 թվականի հրատարակություն, հասանելի է միայն անգլերենով):

## Եզրութաբանություն և հիմնական հասկացություններ

Ժամանակի ընթացքում Եվրոպայի խորհրդի կողմից օգտագործվող եզրութաբանությունն անխուսափելիորեն կատարելագործվել է, և դա արտացոլվում է դրա՝ վարչական իրավունքի ոլորտին առնչվող տեքստերում: Որպես ընդհանուր կանոն, սույն ձեռնարկի համար ընդունվում են Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7

առաջարկությունում օգտագործված եզրութաբանությունը և դրանում պարունակվող սահմանումները:

- ▶ «Վարչական որոշումները» սույն ձեռնարկի համատեքստում հիմնականում վերաբերում են մեկ կամ մի քանի անհատների առնչությամբ անհատական միջոցների հետ կապված պետական մարմինների կողմից ընդունվող ոչ կարգավորիչ որոշումներին: Վարչական որոշման արդյունքում պետական պաշտոնատար անձանց կողմից ձեռնարկվող գործողությունները ներկայացնում են այդ որոշման իրականացումը կամ կատարումը, և դրանք առանձին, անկախ որոշումներ չեն: Ընդհանուր կիրառության կարգավորիչ որոշումները նույնպես ընդգրկվում են (հրամաններ, ենթաօրենսդրական իրավական ակտեր և կանոնակարգեր): Ձեռնարկը չի վերաբերում դատական գործառնությունների իրականացման կամ քրեական գործով քննությանը պետական մարմինների մասնակցության մասով ընդունվող որոշումներին կամ բացառապես պետական մարմինների ներքին կազմակերպման կամ գործունեության վերաբերյալ որոշումներին:
- ▶ «Պետական մարմին», երբեմն վկայակոչվում է նաև որպես վարչական մարմին կամ պետական վարչակազմ, նշանակում է հանրային իրավունքի հիման վրա ստեղծված մարմին ազգային, տարածքային կամ տեղական մակարդակում՝ պետական ծառայություն տրամադրելու կամ հանուն հանրային շահի գործելու նպատակով, ինչպես նաև՝ ցանկացած մասնավոր իրավաբանական անձ, որին վերապահված են այդպիսի լիազորություններ:
- ▶ «Հայեցողական լիազորություն» նշանակում է այնպիսի լիազորություն, որով պետական մարմինն տրվում է իր կողմից կայացվող որոշումների բնույթի մասով հայեցողության որոշակի աստիճան՝ հնարավորություն տալով վերջինիս ընտրելու իրավաբանորեն ընդունելի մի քանի լուծումներից այն մեկը, որն այն համարում է առավել նպատակահարմար:
- ▶ «Անհատները» վերաբերում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց (այսինքն՝ օրենքով ստեղծված մարմիններին), ինչպես նաև այն անձանց, որոնք, ազգային իրավունքի ուժով, իրավունք ունեն հատուկ կոլեկտիվ շահ հետապնդելու:
- ▶ «Պետական պաշտոնատար անձը» վերաբերում է օրենքով կամ պայմանագրային հիմունքներով պետական մարմինների կամ գերատեսչությունների կողմից աշխատանքի ընդունված և պետական քյուլքեից աշխատավարձ ստացող՝ աշխատակազմի ցանկացած անդամի, բացառությամբ ընտրված ներկայացուցիչների: Սույն ձեռնարկի նպատակներով այս եզրույթը ներառում է մասնավոր իրավաբանական անձի կողմից աշխատանքի ընդունված անձնակազմը, որն իրականացնում է հանրային կամ քվազի-հանրային գործառնություն:

## Պետական մարմիններ և օրենքի գերակայություն

Իրենց գործառնություններն իրականացնելիս պետական մարմինները պետք է անհատական շահերը հավասարակշռեն իրենց կողմից սպասարկվող համայնքի շահերի, այսինքն՝ «հանրային շահի» հետ: Վարչական իրավունքը



կարգավորում է պետական մարմինների կողմից լիազորությունների իրականացումը և նախատեսում է վերահսկողություն դրանց կիրառման նկատմամբ: Որոշ երկրներում առկա են հատուկ վարչական իրավական վարույթներ և դատարաններ՝ այդ լիազորությունների իրականացման արդյունքում ծագած վեճերը լուծելու նպատակով, մինչդեռ մյուս երկրներում այդպիսի վեճերը լուծվում են սովորական դատարանների կողմից: Շատ դեպքերում պետական մարմինների կողմից ընդունված որոշումների արտադատական կարգով վերանայումը կարող է նույնպես հասանելի լինել:

Հաշվի առնելով պետական մարմինների՝ ժողովրդավարական հասարակություններում զբաղեցրած արտոնյալ տեղը և նրանց դերի հանրային բնույթը՝ բնական է, որ օրենքի գերակայությունն այս ձեռնարկում նշված շատ սկզբունքների հիմնական աղբյուրն է: Օրենքի գերակայությամբ ապահովվում է, որ բոլորը՝ անհատները և պետական մարմինները, ենթարկվեն օրենքին, որ առկա լինի իրավական որոշակիություն, և բոլորն իմանան, որ իրենց իրավունքներն ու պարտականությունները սահմանված են օրենքով, որ պետական մարմինները չեն կարող գործել կամայականորեն, որ օրենքի պատշաճ կիրառումն ապահովվի անկախ և անաչառ դատական համակարգի կողմից, որի վճիռները կատարվում են, և որ հարգվեն մարդու իրավունքները, հատկապես խտրականության արգելքի և հավասար վերաբերմունքի սկզբունքները:<sup>1</sup>

Այս սկզբունքները պետական մարմիններին դեռևս տալիս են նրանց կողմից կայացվող որոշումներում հայեցողության իրավական սահմանի հնարավորություն, ինչի դեպքում նրանց հայեցողությանն է մտնում, թե ինչպես հանրային գործերը կառավարեն արդար և արդյունավետորեն:

### **Հանրային ոլորտի բարեփոխում**

Ժամանակի ընթացքում սեփականաշնորհումն ու ազգայնացումը կարող են փոփոխել հանրային ոլորտը և դրա կողմից մատուցվող ծառայությունները: Փոփոխություն կարող է առաջանալ նաև ֆինանսավորման համաձայնությունների փոփոխման արդյունքում, երբ պետությունը որոշում է, որ հատուկ դեպքերում այլևս պատասխանատու չէ որոշակի ծառայությունների ուղղակի մատուցման համար (օրինակ՝ առողջապահության և կրթության ոլորտներում): Փոխարենը պետությունը կարող է որոշել ծառայություններ մատուցելու պարտավորությունը փոխանցել մասնավոր գերատեսչության կամ, հնարավոր է, կամավոր հատվածին, որի գործողություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են ֆինանսավորվել պետական ֆինանսական միջոցներից: Բացի այդ, ապակենտրոնացումը կամ դաշնայնացումը կարող է մատուցվող որոշ հանրային ծառայություններ ավելի մոտեցնել անհատին, մինչդեռ կենտրոնացումը կարող է դրանք հեռացնել, եթե կենտրոնացված

1. Օրենքի գերակայության օգտակար սահմանում է ամրագրված «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Իրավունքի գերակայության մասին զեկույցում», CDL-AD (2011)003rev, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված՝ «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկում», CDL-AD(2016)007:

գերատեսչությունն իր ծառայությունները չի մատուցում տեղական գրասենյակի միջոցով: Անկախ համատեքստից՝ սույն ձեռնարկում նշված սկզբունքները վերաբերելի են այնքան ժամանակ, քանի դեռ մատուցվող ծառայությունը և դրա առնչությամբ որոշումների կայացման գործընթացը պահպանում են հանրային բնույթ: Սա է նաև պատճառը, որ այս սկզբունքները կիրառելի են ոչ միայն պետական պաշտոնատար անձանց, այլ նաև մասնավոր մարմինների դեպքում, որոնք իրականացնում են հանրային կամ քվազի-հանրային գործառույթներ (տե՛ս վերևում՝ «պետական պաշտոնատար անձի» սահմանումը):

## Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Պետական մարմինների կողմից կայացվող որոշումներից շատերը վերաբերում են անհատի իրավունքներին և ազատություններին, որոնք պաշտպանված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (ETS No. 5, այսուհետ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա): Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի պետական մարմինների համար սահմանված՝ որևէ հիմքով որևէ մեկի նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու ընդհանուր արգելքը, ինչպիսիք են օրինակ՝ Թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածում նշվածները,<sup>2</sup> ինչպես նաև արդար դատաքննության (6-րդ հոդված) և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի (13-րդ հոդված) իրավունքները: Այլ իրավունքներ, ինչպիսիք են անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը (8-րդ հոդված), սեփականության պաշտպանության իրավունքը (Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված) և կրթության իրավունքը (Թիվ 1 արձանագրության 2-րդ հոդված), վերաբերելի են պետական մարմինների կողմից այնպիսի բնորոշ հարցերի վերաբերյալ կայացվող որոշումներին, ինչպիսիք են հողօգտագործումը, շինարարության վերահսկողությունը, ձեռնարկատիրական գործունեության և մասնագիտական մարմինների կարգավորումը, ուսումնառությունը, կենսաթոշակները, սոցիալական ապահովության վճարները և երեխաների խնամքին առնչվող վարույթները: 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության երաշխիքները կկիրառվեն այն ընթացակարգերի նկատմամբ, որոնք հնարավորություն են տալիս վիճարկելու պետական մարմինների որոշումները (տե՛ս IV գլուխը): 6-րդ հոդվածում նշված՝ անձի քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները որոշելուն արված հղումը ներառում է անհատների և պետական մարմնի միջև իրավաբանական վեճերը՝ պայմանով, որ դրանց արդյունքը վճռորոշ է անհատի մասնավոր իրավունքների և պարտականությունների համար (*Ռինգայզեն ընդդեմ Ավստրիայի* [Ringelstein v. Austria]): Վեճերի որոշ տեսակներ բացառվել են 6-րդ հոդվածից: Դրանք ծագում են պետական ինքնիշխանության իրականացումից, երբեմն կոչվում են պետական մարմնի «ծանրակշիռ» բացառիկ իրավունքներ և ներառում

2. Այդ հիմքերն են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությանը պատկանելը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

են վեճեր հարկման (*Ֆերրազինին ընդդեմ Իտալիայի* [Ferrazzini v. Italy]),  
ներգադրի (*Մաույան ընդդեմ Ֆրանսիայի* [Maaouia v. France]) և  
ընտրություններում թեկնածությունն առաջադրելու (*Պիեռ-Բլոխն ընդդեմ  
Ֆրանսիայի* [Pierre-Bloch v. France]) առնչությամբ: Պետական պաշտոնատար  
անձինք օգտվում են 6-րդ հոդվածի պաշտպանությունից նաև իրենց  
պետական գործատուի հետ ունեցած վեճերի առնչությամբ: Նրանք միայն  
կարկվեն այդ պաշտպանությունից, եթե ազգային իրավունքով նրանց հատուկ  
մերժվի վեճի հատուկ հանգամանքներում դատարանի մատչելիությունը, և  
եթե այդպիսի բացառումը կարող է տվյալ պետության կողմից հիմնավորվել  
օբյեկտիվ հիմքերով (այն է՝ երբ առկա է վստահության և հավատարմության  
հատուկ կապ պետական պաշտոնատար անձի և պետության միջև, և  
քննարկվող վեճի առարկան առնչվում է պետական իշխանության  
իրականացմանը, կամ այն կասկածի տակ է դրել այդ հատուկ կապը) (*Վիլհո  
Էշկելինեն և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [Vilho Eskelinen and Others v. Finland]):  
Նշենք նաև, որ վարույթը որպես վարչական իրավունքի ընթացակարգեր  
բնութագրելը (այլ ոչ թե որպես քաղաքացիական իրավունքի ընթացակարգ)  
չի խոչընդոտի 6-րդ հոդվածի կիրառումը, քանի որ Մարդու իրավունքների  
եվրոպական դատարանն իր կողմից Կոնվենցիայի կիրառման նպատակներով  
կիրառում է ազգային իրավական գործընթացների ինքնավար  
մեկնաբանություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք կարևոր վճիռներ,  
որոնք վերաբերում են սույն ձեռնարկում նշված սկզբունքներին կամ ճանաչում  
են դրանց կարևորությունը, ընտրվել են այդ սկզբունքների կիրառումը  
լուսաբանելու համար, սակայն հարկ է հիշել, որ սկզբունքներն ինքնին,  
իհարկե, այդ վճիռների առարկան չեն: Ընտրված համապատասխան գործերը  
թվարկված են հավելված II-ում:

## Գլուխ I

# Նյութաիրավական սկզբունքներ

Սույն գլխում պարունակվող սկզբունքները կիրառելի են պետական մարմինների նկատմամբ այն դեպքում, երբ վերջիններս որոշում են հարցեր, որոնք ազդում են այն մարդկանց իրավունքների և շահերի վրա, որոնք ապրում կամ աշխատում են այն տարածքներում, որոնք նրանք ղեկավարում են, կամ որտեղ հանրային ծառայություններ են մատուցում:

Այս սկզբունքները վերաբերում են վարչական որոշումների որակին: Դրանք արտացոլում են օրենքի գերակայության առանցքային տարրերը (օբյեկտիվություն, անաչառություն, օրինականություն), ինչպես նաև համայնքի և պետական մարմինների միջև լիովին թափանցիկ և մասնակցային միջավայրի սոցիալական անհրաժեշտությունը:

### Սկզբունք 1. Օրինականություն և համապատասխանություն օրենքով նախատեսված նպատակին

Պետական մարմինները պետք է գործեն օրենքին համապատասխան և իրենց լիազորությունները սահմանող կանոնների շրջանակներում: Նրանք չպետք է գործեն կամայականորեն:

## Աղբյուր

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 2)

## Մեկնաբանություն

Պետական մարմինների կողմից կայացվող որոշումների բովանդակությունը և դրանց կայացման եղանակը պետք է հիմնված լինեն օրենքի վրա: Եթե պետական մարմինը գործի իր լիազորություններից դուրս կամ դրա սահմաններից դուրս (ultra vires), ապա այդ գործողությունն անօրինական

կլինի: Որպեսզի հանրությունը հասկանա պետական մարմնի լիազորությունների բնույթն ու ծավալը, այդ լիազորությունները պետք է լինեն հստակ, ճշգրիտ և պետք է լայնորեն հրապարակվեն:

Պետական մարմինները պետք է գործեն այնտեղ, որտեղ նրանք ունեն գործելու իրավական պարտականություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքները դուրս են նրանց վերահսկողությունից (*force majeure*): *Force majeure*-ն ընդունվում է որպես պայմանագրային պարտավորությունը չկատարելու հիմնավոր պատճառ: Այս համատեքստում պետությունը պետք է ապահովի, որ պետական մարմիններն ունենան անհրաժեշտ ռեսուրսներ իրենց իրավական պարտականությունները կատարելու համար, կամ անհրաժեշտ լիազորություններ՝ այդպիսի ռեսուրսներն իրենց սեփական միջոցներով ապահովելու համար (օրինակ՝ տեղական հարկեր): Պետական մարմինները պետք է գործեն օրենքին և օրենքով սահմանված իրենց լիազորություններին համապատասխան, ինչը չկատարելու դեպքում վերջիններս կրում են անօրինական վարչական որոշումներ կայացնելու կամ իրենց լիազորություններից դուրս կամ դրանց սահմաններից դուրս գործելու ռիսկ: Պետական մարմինների կամայական գործողությունները կանխելու նպատակով վերջիններս պետք է գործեն օբյեկտիվորեն և անաչառորեն (տե՛ս ստորև՝ 3-րդ սկզբունքը):

Ոչ ոք չպետք է օգտվի պետական մարմինների անօրինական գործողություններից: Անօրինական որոշումները պետք է անվավեր ճանաչվեն՝ ելնելով ցանկացած շահից, որն իրավաչափորեն ձեռք է բերվել այն անհատների կողմից, որոնք ապավինում են վիճարկվող որոշումներին (տե՛ս ստորև՝ IV գլուխը):

Այն պատճառները, որոնց համար պետական մարմիններն օգտագործում են իրենց լիազորությունները, պետք է համապատասխանեն այն պատճառներին, որոնց համար այդ լիազորությունները շնորհվել են, ինչպես սահմանված է օրենքով: Պետական մարմինները չպետք է իրենց լիազորություններն օգտագործեն ոչ պատշաճ պատճառով կամ նպատակով, նույնիսկ եթե արդյունքը կարող է նույնը լինել: Այս սկզբունքը լուսաբանվում է «պետական իշխանությունը չարաշահելու» (*détournement de pouvoir*) դոկտրինով՝ համաձայն ֆրանսիական իրավունքի, որտեղ վարչական որոշումը չի կայացվում հանուն հանրային շահի: Օրինակ՝ երբ որևէ գյուղի գյուղապետ մերժում է բար աշխատացնելու լիցենզիա տրամադրելու դիմումը՝ իր սեփական բարի հետ մրցակցությունը կանխելու նպատակով: Այն կիրառվում է նաև այն դեպքում, երբ վարչական մարմինը որոշում է կայացնում՝ հիմնվելով հանրային շահը պաշտպանելու իր լիազորության վրա, սակայն, երբ որոշումն իրականում կայացվում է ոչ թե հանրային շահը, այլ ցանկացած այլ շահ պաշտպանելու նպատակով: Օրինակ՝ երբ իշխանությունն իրացվում է պահպանելու հասարակական պարկեշտությունը՝ արգելելով անհատներին հազնվել կամ հանվել հանրային լողափում, բացառությամբ վարձակալության համար հասանելի հատուկ նախատեսված խցիկների, սակայն երբ այս արգելքի հիմնական նպատակն է օգուտ բերել նրանց, ովքեր վարձակալության են տալիս այդպիսի խցիկներ:

Պետական մարմնի լիազորությունների մեկնաբանման հետ կապված անորոշությունները կարող են լուծվել՝ վկայակոչելով համապատասխան

օրենսդրության նախաբանը կամ դրա ընդունմանը հանգեցնող նախապատրաստական փաստաթղթերը, եթե դա թույլատրվում է ազգային իրավունքով:

Իրավունքի համապատասխան աղբյուրները, այս սկզբունքի նպատակներով, պայմանավորված կլինեն յուրաքանչյուր պետության իրավական համակարգով, բայց սովորաբար հղում կկատարեն պետության սահմանադրությանը, օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին: Կարևոր են նաև դրա ներպետական դատարանների որոշումներն ու կարգադրությունները և (կամ) իրավունքի ընդհանուր սկզբունքները: Վարչական ուղեցույցները նույնպես կարող են լինել իրավունքի աղբյուր այնքանով, որքանով դրանք կարող են վկայակոչվել ներպետական դատարանների կողմից: Միջազգային իրավունքի սովորույթային և կոնվենցիոն կանոնները նույնպես կարևոր կլինեն այն իրավագործություններում, որտեղ դրանք ունեն օրենքի ուժ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան իրավունքի հիմնական աղբյուր է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի [Prokopovich v. Russia]* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի կողմից զբաղեցրած՝ պետական սեփականություն հանդիսացող բնակարանը երրորդ կողմին վերահատկացնելու մասին որոշումը հանգեցրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման, քանի որ այն չի ունեցել որևէ իրավական հիմք ներպետական իրավունքում: Ի հակադրություն, *Չինտարասն ընդդեմ Շվեդիայի [Xintaras v. Sweden]* գործում Դատարանը գտել է, որ դիմումատուի վարորդական իրավունքի վկայականն անվավեր ճանաչելը չի խախտել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված նրա գույքային իրավունքները, քանի որ դա նախատեսված է եղել ներպետական իրավունքում և հետապնդել է շվեդական հասարակության ընդհանուր շահը՝ արդարացի հավասարակշռություն հաստատելով այդ շահի և դիմումատուի անձնական շահերի միջև: *Սթրեյչն ընդդեմ Միացյալ Թագավորության [Stretch v. the United Kingdom]* գործում դիմումատուն բողոքել է, որ իրեն գրկել են տեղական իշխանությունների կողմից տրված՝ վարձակալությունը թարմացնելու հնարավորությունից օգտվելու արտոնությունից: Միացյալ Թագավորության կառավարությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պնդել է, որ *ultra vires*-ի դոկտրինով կարևոր երաշխիք է տրամադրվում ներպետական իրավունքով իրենց տրված իրավասություններից դուրս գործող պետական մարմինների կողմից լիազորությունների չարաշահման դեմ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի վիճարկել այս փաստարկը և նշել է, որ վկայակոչված դոկտրինն արտացոլում է օրենքի գերակայությունը, ինչի վրա հիմնականում հիմնված է հենց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: *Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի [Lashmankin and Others v. Russia]* գործում, որը վերաբերում էր Ռուսաստանի վարչական մարմինների կողմից հանրային միջոցառումների անցկացման վայրի,

Ժամանակի և կարգի նկատմամբ կիրառված սահմանափակումներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ հիմնարար իրավունքների վրա ազդող հարցերում դա կհակասեր օրենքի գերակայությանը՝ ժողովրդավարական հասարակության հիմնական սկզբունքներից մեկին, որն ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, գործադիրին տրված իրավական հայեցողությամբ, որը պետք է արտահայտվեր ակթերի իշխանության տեսանկյունից: Օրենքը պետք է բավարար հստակ նշի ցանկացած այդպիսի հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը:

*Սանդեյ Թայմզս ընդդեմ Միացյալ Թագավորության* (թիվ 1) [*The Sunday Times v. the United Kingdom (No. 1)*] գործում դիմումատունը՝ բրիտանական թերթը, վիճարկել է հողված հրապարակելու արգելքը, որը, ըստ իշխանությունների, կհամարվեր արհամարհանք դատարանի նկատմամբ, քանի որ այն կազդեր դատական գործի կողմերի միջև ընթացող բանակցությունների վրա: Գործը վերաբերում էր մասնավոր անձանց կողմից դեղեր արտադրողի դեմ ներկայացված պնդումներին առ այն, որ պատասխանողի կողմից արտադրված դեղամիջոցը լուրջ վնաս էր հասցրել իրենց երեխաների առողջությանը: *Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Tolstoy Miloslavsky v. the United Kingdom*] գործում բրիտանական դատարանները դիմումատուից պահանջել էին վճարել 1,5 միլիոն ֆունտ ստեռլինգ՝ որպես հատուցում զրպարտչական նյութեր հրապարակելու համար: Դատարանը նաև արգելել էր նյութը պարունակող հոդվածի հետագա հրապարակումը: Դիմումատուն փորձել էր բողոքարկել, սակայն նրան կարգադրել էին վճարել 124 900 ֆունտ ստեռլինգ՝ որպես պայման ծախսերի ապահովության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դիմումատուն պնդել էր, որ խախտվել է իր արտահայտվելու ազատությունը, և անհարկի սահմանափակվել է առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բողոք ներկայացնելու իր իրավունքը: Երկու գործերով էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «օրենք» բառը «օրենքով սահմանված» արտահայտության մեջ ներառում է ոչ միայն օրենքները, այլ նաև չգրված օրենքը:

## Սկզբունք 2. Հավասար վերաբերմունք

Պետական մարմինները պետք է համանման իրավիճակներում անհատներին վերաբերվեն նույն կերպ: Տարբերվող ցանկացած վերաբերմունք պետք է օբյեկտիվորեն հիմնավորված լինի:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հողված 3)
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Թիվ 12 արձանագրություն

## Մեկնաբանություն

Պետական մարմինները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն խտրական վերաբերմունք դրսևորեն անհատների նկատմամբ: Հավասար վերաբերմունքի սկզբունքով պահանջվում է, որ համանման իրավիճակներում գտնվող անհատների նկատմամբ հավասար վերաբերմունք դրսևորվի: Սա նշանակում է, որ օրենքով նախատեսված ցանկացած իրավունքից օգուվելը պետք է հասանելի լինի բոլոր անձանց՝ առանց որևէ հիմքի խտրականության, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությանը պատկանելը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը, եթե վերաբերմունքի տարբերությունը չի կարող օբյեկտիվորեն հիմնավորվել: Նույն կերպ պետական մարմինները չպետք է խտրական վերաբերմունք դրսևորեն անհատների նկատմամբ այս հիմքերից որևէ մեկով (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրության 1-ին հոդված): Հետևաբար, եթե երկու կամ ավելի դեպքեր օբյեկտիվորեն նույնն են, ապա պետական մարմինները պետք է նույն կերպ վերաբերվեն դրանց:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան չի արգելում վերաբերմունքի տարբերություններ այն դեպքում, երբ դրանք հիմնված են տարբեր փաստական հանգամանքների օբյեկտիվ գնահատման վրա, և եթե արդարացի հավասարակշռություն է հաստատվել համայնքի շահը պաշտպանելու և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները հարգելու միջև: Կոնվենցիայի կողմերն ունեն հայեցողության որոշակի շրջանակ՝ գնահատելու, թե արդյոք և ինչ չափով են միևնույն իրավիճակներում տարբերություններն արդարացնում վերաբերմունքի տարբերությունը: Հայեցողության շրջանակի սահմանները տարբերվում են ըստ ներկայացված առարկայի և փաստերի, ընդ որում, վերջնական որոշումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննության առարկան է: Դատարանը վճռել է, որ եթե որևէ քաղաքականություն կամ ընդհանուր միջոցառում անհամաչափորեն կանխակալ հետևանքներ է ունենում մի խումբ անձանց համար, ապա դրա խտրական համարվելու հնարավորությունը չի կարող բացառվել նույնիսկ այն դեպքում, երբ այն հատուկ ուղղված չէ տվյալ խմբին:

Հավասար վերաբերմունքի սկզբունքը չի խոչընդոտում, որ պետական մարմինները ժամանակի ընթացքում վարչական քաղաքականության և գործելակերպի փոփոխությունների արդյունքում այլ կերպ վերաբերվեն անձանց՝ պայմանով, որ այդպիսի փոփոխություններն օբյեկտիվորեն հիմնավորված լինեն և չկատարվեն կոնկրետ խմբի կամ խմբերի այլ կերպ վերաբերվելու նպատակով: Պետական մարմինները պետք է հաշվի առնեն այն փաստը, որ որոշ անհատներ կարող են ունենալ իրավաչափ ակնկալիքներ կամ ձեռք են բերել իրավաչափ շահեր ավելի վաղ իրականացված քաղաքականության կամ գործելակերպի արդյունքում (տե՛ս ստորև՝ 5-րդ սկզբունքը), այսպիսով, եթե պետական մարմինը որոշում կայացնի փոփոխել քաղաքականությունը կամ գործելակերպը, ապա շատ կարևոր է նախապես տեղեկացնել հանրությանն այդ մասին:

Կարևոր է ընդգծել, որ այս սկզբունքի առումով երեխաների պարագայում հատուկ ուշադրություն է պահանջվում: Երեխաներին պետական մարմինների



հետ ունեցած իրենց հարաբերություններում թե՛ ուղղակիորեն, թե՛ անուղղակիորեն պետք է համարել և վերաբերվել որպես իրավունքների լիարժեք կրողների, և պետք է նրանց իրավունք տալ իրացնելու իրենց բոլոր իրավունքներն այնպես, որ հաշվի առնվեն սեփական տեսակետները ձևավորելու նրանց կարողությունը, ինչպես նաև նրանց գործի հանգամանքները: Երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում պետական մարմինները պետք է ապահովեն, որ երեխայի լավագույն շահերն ունենան առաջնային նշանակություն: Այն դեպքերում, երբ երեխան կարող է ձևավորել իր սեփական տեսակետները, նա պետք է կարողանա ազատորեն արտահայտել դրանք, և այդ տեսակետները պետք է պատշաճորեն հաշվի առնվեն՝ երեխայի տարիքին և հասունությանը համապատասխան (տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 3-րդ հոդվածը<sup>3</sup> և 12-րդ հոդվածը<sup>4</sup>):

Հավասարության սկզբունքը չի կարող հիմք ընդունվել նախկինում կայացված ապօրինի որոշումը կամ այլ դեպքերի նկատմամբ այն կիրառելու գործելակերպն արդարացնելու համար: Պատշաճ ընթացքն այն է, որ պետական մարմինն այնքանով, որքանով հնարավոր է, չեղարկի ավելի վաղ կայացված որոշումը: Եթե նախորդ դեպքում չի կիրառվել տուգանք կամ պատժամիջոց այնպիսի հանգամանքներում, երբ այն պետք է կիրառված լիներ, դա չի խոչընդոտի, որ պետական մարմինը հետագայում մեկ այլ դեպքում կիրառի այդ տուգանքը կամ պատժամիջոցը:

3. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշված է.  
«1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ռազմադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:
2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ռազմության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:
3. Մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողությունն սահմանելու իմաստով:»:
4. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածում նշված է.  
1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային՝ երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերելով նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ռազմադրություն:  
2. Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, լավելու թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:»:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Չարբ Ադամին ընդդեմ Մալթայի [Zarb Adami v. Malta]* գործում դիմումատուն բողոքել է, որ իրեն մատուցված՝ երդվյալ ատենակալների ծառայությունը խտրական բնույթ է կրել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ 4.3.դ հոդվածի համակցությամբ, վճռել է, որ խտրականությունը նշանակում է համեմատաբար նմանատիպ իրավիճակներում գտնվող մարդկանց տարբեր կերպ վերաբերվել՝ առանց օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման: Այն դեպքում, երբ առկա է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքի իրացման հետ կապված վերաբերմունքի տարբերություն, ձեռնարկված գործողությունները պետք է իրավաչափ նպատակ հետապնդեն և պետք է «կիրառված միջոցների և իրականացման համար նախատեսված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն» լինի:

*Նյարոեն ընդդեմ Ֆրանսիայի [Gnahore v. France]* գործում, որում դիմումատուն բողոքում էր, որ իր անչափահաս որդուն հեռացրել են իրենից և տվել ինսամատար ծնողներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նմանատիպ գործերում երեխայի շահը պետք է վեր դասվի բոլոր այլ նկատառումներից:

### Սկզբունք 3. Օբյեկտիվություն և անաչառություն

Պետական մարմիններն իրենց լիազորություններն իրականացնում են հաշվի առնելով միայն վերաբերելի հարցերը: Նրանք չպետք է գործեն կողմնակալ ձևով կամ ընկալվեն որպես այդպես գործող:

### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 4)
- ▶ «Եվրոպայում պետական պաշտոնատար անձանց կարգավիճակի մասին» թիվ R (2000) 6 առաջարկություն (Սկզբունք 13)

### Մեկնաբանություն

Իր որոշումը կայացնելիս պետական մարմինը պետք է հաշվի առնի կոնկրետ վարչական որոշմանը վերաբերող բոլոր գործոնները՝ յուրաքանչյուր գործոնին տալով իր ուրույն կշիռը: Ոչ վերաբերելի գործոնները պետք է հանվեն ուսումնասիրության շրջանակից: Վարչական որոշման վրա չպետք է ազդեն որոշումը կայացնող պետական պաշտոնատար անձի անձնական շահերը կամ նախապաշարմունքները: Պետք է խուսափել նույնիսկ կողմնակալության շղարշից:

Պետական մարմինները պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականություններն անաչառ

կերպով կատարելու համար՝ անկախ իրենց անձնական համոզմունքներից և շահերից: Ոչ մի պետական պաշտոնատար անձ չպետք է ներգրավվի վարչական այնպիսի որոշման կայացմանը, որը վերաբերում է իր սեփական ֆինանսական կամ այլ անձնական շահերին կամ իր ընտանիքի, ընկերների կամ հակառակորդների շահերին: Նա չպետք է ներգրավված լինի իր կայացրած վարչական որոշման դեմ որևէ բողոքարկման գործընթացում: Կարող են առաջանալ այլ հանգամանքներ, որոնք կարող են խաթարել նրա անաչառությունը, օրինակ՝ «ընկերների կամ հակառակորդների» դեպքում, որոնց նկատմամբ պետական պաշտոնատար անձն ունի դրական կամ բացասական նախատրամադրվածություն կամ որոնց հետ պաշտոնատար անձն սերտ փոխհարաբերությունների մեջ է (օրինակ՝ ամուսնալուծված ամուսին):

Ավելին, պետական պաշտոնատար անձինք, իրենց հանրային գործառույթներն իրականացնելիս, ենթարկվում են այդ գործառույթներին բնորոշ պարտականություններին: Այս պարտականությունները ներառում են խոհեմություն, հաշվետվողականություն, չեզոքություն և, առհասարակ, հավատարմություն ժողովրդավարական ինստիտուտներին և հարգանք օրենքի գերակայության նկատմամբ: Շահերի բախումից և կոռուպցիայից խուսափելու համար պետական պաշտոնատար անձանց նկատմամբ կարող են կիրառվել սահմանափակումներ՝ կապված երկրորդ աշխատանքի և քաղաքական գործունեությանը մասնակցելու հետ:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [Ahmed and Others v. the United Kingdom]* գործում տեղական կառավարման մարմիններում իրենց պաշտոնները պահպանելու համար դիմումատուներն ստիպված էին հրաժարվել կուսակցությունների անունից իրենց քաղաքական գործունեությունից: Նրանք պնդում էին, որ դա անելու պահանջը, այլ դրույթների հետ մեկտեղ, խախտում էր ընտրական գործընթացին լիարժեք մասնակցության իրենց իրավունքը, որը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որևէ խախտում չի գտել՝ ընդունելով, որ սահմանափակումները ծառայել են քաղաքացիական ծառայողների քաղաքական անաչառության ապահովման իրավաչափ նպատակին:

### Սկզբունք 4. Համաչափություն

Պետական մարմնի կողմից իր լիազորությունների կատարման ընթացքում ձեռնարկված միջոցառումները չպետք է լինեն չափազանց խիստ՝ անհատների իրավունքների և շահերի վրա դրանց ազդեցության առումով, և պետք է շարունակվեն միայն այնքան, որքան անհրաժեշտ է և այն չափով, որքան անհրաժեշտ է ցանկալի նպատակին հասնելու համար:

## Աղբյուր

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 5)

## Մեկնաբանություն

Համաչափությունը համապարփակ պահանջ է մի պետությունում, որը ղեկավարվում է օրենքի գերակայությամբ: Պետական մարմինները կարող են սահմանափակել անհատների իրավունքները՝ ի տարբերություն պետության, միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է հանրային շահը պաշտպանելու համար: Համայնքի ընդհանուր շահի և անհատների հիմնարար իրավունքները պաշտպանելու պահանջի միջև պետք է հաստատվի «արդարացի հավասարակշռություն»:

Համաչափության սկզբունքը կխախտվի, եթե չպահպանվեն հետևյալ պահանջները.

- i. Պետք է ողջամիտ հարաբերակցություն լինի պետական մարմնի կողմից հետապնդվող նպատակների և դրանց հասնելու համար ընտրված միջոցների միջև: Անհատի իրավունքների ցանկացած սահմանափակում կամ միջամտություն այդ իրավունքներին պետք է լինի պատշաճ և խիստ անհրաժեշտ, իսկ նպատակները չեն կարող իրականացվել այլ միջոցներով: Չափազանց խիստ միջոցներ կիրառելու արգելքը պետական մարմիններին պարտավորեցնում է օգտագործել միայն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են ցանկալի արդյունքի հասնելու համար:
- ii. Պետք է ողջամիտ հարաբերակցություն լինի անհատի նկատմամբ կիրառված սահմանափակումների և պաշտպանության ենթակա հանրային շահի միջև: Անհատի նկատմամբ կիրառված այս սահմանափակումը պետք է ողջամտորեն առնչվի այն օգուտին, որից հանրությունն օգտվում է:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության [Soering v. the United Kingdom]* գործում դիմումատուն բողոքել է, որ իր հանձնումն Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ նա ենթարկվելու էր մահապատժի, խախտել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը: *Հայթեն Չապսկան ընդդեմ Լեհաստանի [Hutten-Czapska v. Poland]* գործում դիմումատուն Լեհաստանի այն բազմաթիվ տանտերերից մեկն էր, որը տուժել էր բնակարանների վարձակալության հարցերը կարգավորող սահմանափակող համակարգից: Երկու գործերով էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ամբողջ Եռությունը համայնքի ընդհանուր շահին առնչվող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն փնտրելն է»: Տե՛ս նաև *Չինտարասն*

ընդդեմ Շվեդիայի [Xintaras v. Sweden] գործը, որում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի վարորդական իրավունքի վկայականն անվավեր ճանաչելը չի խախտել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված նրա գույքային իրավունքները: Դատարանը վճռել է, որ վարորդական իրավունքի վկայականն անվավեր ճանաչելը նախատեսված է եղել ներպետական իրավունքում և որ այն հետապնդել է շվեդական հասարակության ընդհանուր շահի և դիմումատուի անհատական շահերի միջև արդարացի հավասարակշռություն հաստատելու իրավաչափ նպատակ:

## Սկզբունք 5. Իրավական որոշակիություն

Պետական մարմինների կողմից ընդունված վարչական որոշումները պետք է լինեն կանխատեսելի, որպեսզի անհատները կարողանան գործել համապատասխան ձևով: Դրանք չպետք է ունենան հետադարձ ուժ, եթե դա նախատեսված չէ օրենքով կամ եթե դրանք անձանց օգտին չեն: Չի կարող միջամտություն լինել անհատների կողմից ձեռք բերված իրավունքներին կամ իրավաչափ ակնկալիքներին, որոնք վերաբերում են պետական մարմնի կողմից կայացվելիք որոշումներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում:

## Աղբյուր

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդվածներ 6, 21)

## Մեկնաբանություն

Իրավական որոշակիությունը կարևոր է դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության և օրենքի գերակայության համար: Այս սկզբունքը սերտորեն կապված է օրինականության սկզբունքի հետ (Սկզբունք 1), քանի որ այն նույնպես վերաբերում է կանխատեսելիության գաղափարին: Իրավական որոշակիությամբ նույնպես պահանջվում է, որ օրենքը լինի հստակ, ճշգրիտ և կանխատեսելի (տե՛ս նաև ստորև՝ Սկզբունք 13), որպեսզի անհատները հասկանան, թե պետական մարմիններն իրենցից ինչ են ակնկալում և թե իրենք ինչ կարող են ակնկալել պետական մարմիններից: Հանրության վստահության համար հիմնարար նշանակություն ունի, թե ինչպես են պետական մարմինները կիրառում օրենքը:

Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա իրավաչափ վստահություն ունենալ պետական մարմինների նկատմամբ, որպեսզի իր վարքագիծը կարգավորի լիարժեք գիտելիքներով այն մասին, թե ինչպես են գործելու պետական մարմինները: Ըստ այդմ, պետական մարմինները պետք է հետևողական լինեն իրենց որոշումների կայացման մեջ և չպետք է գործեն կամայականորեն: Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա հուսալիորեն ապավինել պետական մարմինների կողմից ընդունված վարչական որոշումներին, որոնց որոշումները

և գործողությունները պետք է մշտապես հիմնված լինեն որոշակի իրավիճակը կարգավորող օրենքի վրա: Օրենքը պետք է լինի հստակ ձևակերպված և հեշտությամբ հասանելի հանրության լայն շրջանակի համար. օրենքը նաև պետք է ճիշտ կիրառվի: Պետական մարմինների կողմից վարչական որոշումների չեղարկումն առաջացնում է որոշակի հարցեր իրավական որոշակիության առումով և առանձին քննարկվում է ստորև:

## Չեղարկումը

Այն դեպքում, երբ պետական մարմինը ցանկանում է չեղարկել վարչական որոշումը, այն պետք է զգուշավորություն ցուցաբերի, որպեսզի չխախտի իրավական որոշակիության սկզբունքը և, մասնավորապես, չմիջամտի անհատի ձեռք բերած իրավունքներին: Համապատասխանաբար, պետական մարմնի կողմից վարչական որոշումների չեղարկումը թույլատրվում է միայն հետևյալ հանգամանքներում.

- ▶ այն դեպքերում, երբ սկզբնական վարչական որոշումն անօրինական է և (i) չկա պաշտպանելու ենթակա որևէ իրավաչափ ակնկալիք, կամ (ii) որոշումը չեղարկելու դեպքում հանրային շահը գերակշռում է որոշումը պահպանելու դեպքում շահագրգիռ անձի իրավունքներին ու շահերին, և
- ▶ այն դեպքերում, երբ սկզբնական վարչական որոշումն անօրինական է և (i) շահագրգիռ անձը որոշումը պահպանելու հարցում որևէ իրավաչափ ակնկալիք չունի, կամ (ii) համապատասխան փաստերն ու հանգամանքները փոփոխվել են, և չեղարկելու դեպքում հանրային շահը գերակշռում է որոշումը պահպանելու դեպքում շահագրգիռ անձի իրավունքներին ու շահերին:

Վարչական որոշումը չեղարկելն ինքնին վարչական որոշում է, որի նկատմամբ ամբողջությամբ կիրառվում են սույն ձեռնարկի նյութափրավական և ընթացակարգային սկզբունքները: Չեղարկելու հետ կապված առանձնահատուկ խնդիրը մի կողմից օրինականության սկզբունքի և հանրային շահի միջև հաճախակի բախումն է, և մյուս կողմից՝ որոշումը պահպանելու հարցում անհատի իրավաչափ ակնկալիքը պաշտպանելը: Ազգային իրավունքով կարող է սահմանվել, թե վարչական որոշումները որքանով կարող են չեղարկվել: Անդամ պետությունների մեծ մասում պետական մարմինները, որոշակի պայմաններում, կարող են իրենց ակտերն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղարկել կամ անհատի պահանջով (տե՛ս ստորև՝ Սկզբունք 18), կամ իրենց սեփական նախաձեռնությամբ:

Եթե նախնական որոշումը կայացնելու պահին համապատասխան փաստերը և հանգամանքները լիովին հայտնի չեն եղել պետական մարմնին և եթե հայտնի լինելու դեպքում կհանգեցնեին մեկ այլ որոշման, կամ եթե տվյալ անձը չի կատարել վարչական որոշման կամ կիրառելի օրենքի մեջ նշված պայմանները, երբ որոշումը կայացվել է, ապա այդ դեպքում, ճշգրիտ հանգամանքներով պայմանավորված՝ ազգային իրավունքով պետք է սահմանվի՝ արդյոք նախնական որոշումը եղել է օրինական, թե՛ անօրինական:

Կախված այն հանգամանքից, թե շահագրգիռ անձը որքանով է տեղյակ եղել կամ որքանով պետք է տեղյակ լիներ վարչական որոշման անօրինականության մասին, և կախված հանրային շահին սպառնացող վտանգից՝ որոշումը

կարող է չեղարկվել՝ ուժի մեջ մտնելով հենց չեղարկման օրը կամ նույնիսկ հետադարձ ուժով՝ որոշումը կայացնելու օրվա դրությամբ:

Պաշտպանելու ենթակա որևէ իրավաչափ ակնկալիք առկա չէ, եթե շահագրգիռ անձը գիտեր կամ պետք է ողջամտորեն իմանար, որ նախնական որոշումն անօրինական է, կամ եթե տվյալ անձը նախնական որոշման նպատակներով պետական մարմին տրամադրել է ոչ ճիշտ կամ թերի տեղեկություններ:

Յավանական է, որ նախնական որոշումը կայացնելուց հետո անցած ժամանակի տևողությունը կդառնա որոշումը չեղարկելու դեպքում հանրային շահի և դրա պահպանման դեպքում ազդեցություն կրած անձի իրավաչափ ակնկալիքի միջև հավասարակշռության հարցում գնահատման ենթակա գործոն: Որքան շատ ժամանակ անցնի, այնքան ավելի մեծ կշիռ կտրվի անհատի իրավաչափ ակնկալիքին:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Մարքս ընդդեմ Բելգիայի [Marckx v. Belgium]* գործում դիմումատուն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն, բողոքել է, որ ամուսնությունից և արտամուսնական կապից ծնված երեխաների նկատմամբ կիրառվել են ժառանգության տարբեր կանոններ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը Կոնվենցիայի անքակտելի մասն է: Կոնվենցիայի նախաբանը հայտարարում է, որ օրենքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից մեկը իրավական որոշակիությունն է, Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մի մասն է: *Բրումարեսկու ընդդեմ Ռումինիայի [Brumarescu v. Romania]* գործում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարել է, որ միջամտություն է եղել դիմումատուի գույքային իրավունքին՝ երաշխավորված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, այն առումով, որ Արդարադատության գերագույն դատարանը բեկանել էր ավելի ցածր ատյանի դատարանի կողմից կայացված՝ դիմումատուին տուն շնորհելու վերաբերյալ վերջնական վճիռը՝ չնայած այն հանգամանքին, որ վճիռը կատարվել էր: *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության [Khan v. the United Kingdom]* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ Միացյալ Թագավորության իշխանությունների կողմից գաղտնալսման սարքի օգտագործումն օրենքին չի համապատասխանել՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով, քանի որ գոյություն չի ունեցել այդպիսի սարքերի օգտագործումը կարգավորող որևէ օրենսդրական համակարգ, քանի որ այդ գործընթացը ղեկավարվում էր Ներքին գործերի նախարարության հրահանգներով, որոնք ո՛չ իրավաբանորեն էին պարտադիր, ո՛չ էլ հանրությանն ուղղակիորեն հասանելի էին:

*Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի [Rysovskyy v. Ukraine]* գործում գյուղիստրիտը չեղարկել էր հողիատկացման մասին ավելի վաղ ընդունած իր որոշումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները պարտավոր են սահմանել ներքին ընթացակարգեր, որոնք խթանում են գույքային շահեր շոշափող քաղաքացիական գործարքների

առնչությամբ իրավական որոշակիությունը: Դատարանը վճռել է, որ արդյունավետ կառավարման սկզբունքը չպետք է խոչընդոտի իշխանություններին շտկել պատահական սխալները՝ նույնիսկ այն սխալները, որոնք իրենց սեփական անփութության արդյունք են: Մյուս կողմից՝ հին «սխալը» շտկելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափորեն միջամտի նոր իրավունքին, որը ձեռք է բերվել անհատի կողմից՝ բարեխղճորեն ապավինելով պետական մարմինների գործողությունների օրինականությանը: Այլ կերպ ասած՝ պետական այն մարմինները, որոնք չեն կարողանում գործի դնել կամ պահպանել իրենց սեփական ընթացակարգերը, չպետք է իրավունք ունենան օգուտ քաղելու իրենց ոչ օրինական գործողություններից կամ խուսափելու իրենց պարտականություններից: Պետական մարմնի կողմից թույլ տրված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի հենց ինքը՝ պետությունը, և սխալները չպետք է շտկվեն այդ շահագրգիռ անհատների հաշվին: Սխալմամբ շնորհված գույքային իրավունքը չեղարկելու համատեքստում «արդյունավետ կառավարման» սկզբունքը կարող է իշխանություններին պարտավորեցնել ոչ միայն անհապաղ գործել իրենց սխալը շտկելու հարցում, այլև պարտադրել պատշաճ փոխհատուցում վճարել կամ պատշաճ վերականգնման այլ գործողություն ձեռնարկել այն անձի նկատմամբ, ով հողը ձեռք է բերել բարեխղճորեն (տե՛ս ստորև՝ Սկզբունք 17):

*Բիլանի Նագին ընդդեմ Հունգարիայի [Bélané Nagy v. Hungary]* գործում դիմումատու ընդդեմ է, որ մասնագիտական համատեքստում առողջության խանգարումը գնահատելու մասով կիրառվող մեթոդի վերաբերյալ ընդունված նոր օրենսդրության հիման վրա հաշմանդամության կենսաթոշակի իր իրավունքից իրեն զրկելը խախտել է իր սեփականության պաշտպանության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես, գտել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում էր տիկին Նագիի գործի նկատմամբ, քանի որ նա իրավաչափ ակնկալիք է ունեցել, որ ինքը շարունակելու է ստանալ նախկին օրենսդրության հիման վրա իրեն նշանակված կենսաթոշակը: Որոշվել էր, որ նրա կենսաթոշակը վերացվել էր օրենքին (նոր օրենսդրությանը) համապատասխան և իրավաչափ նպատակ է հետապնդել (պետական միջոցների խնայողություն): Այնուամենայնիվ, Դատարանը վճռել է, որ կենսաթոշակի վերացումը համաչափ չի եղել, քանի որ այն հանգեցրել է խոցելի անձի միակ զգալի եկամտի աղքատից լիովին զրկման՝ բխելով հետադարձ ուժ ունեցող օրենսդրությունից, որը տիկին Նագիի գործի նկատմամբ կիրառելի որևէ անցումային կարգավորում չէր նախատեսում:

«Իրավաչափ ակնկալիք» հասկացությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում, առաջին անգամ մշակվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Փայն Վելլի Դիվելոպմենթս» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Իռլանդիայի [Pine Valley Developments Ltd and Others v. Ireland] գործում: Այդ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ «իրավաչափ ակնկալիք» առաջացել է այն ժամանակ, երբ տրվել է մասշտաբային շինարարության պլանավորման թույլտվությունը, որի հիման վրա դիմումատու ընկերությունները գնել են հողատարածքներ՝ դրանք հետագայում բարեկարգելու նպատակով: Դատարանը վճռել է, որ



պլանավորման թույլտվությունը, որը չէր կարող չեղարկվել պլանավորման հարցերով պատասխանատու մարմնի կողմից, «դիմումատու ընկերությունների գույքի բաղկացուցիչ մասն էր»:

«Իրավաչափ ակնկալիք» հասկացության մեկ այլ հայեցակետ արտացոլվել է *Պրեսոսու Նավիերա Կոմպանի Էս. Էյ.-ը և այլք ընդդեմ Բելգիայի [Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium]* գործում: Այս գործը վերաբերում էր ենթադրաբար բելգիացի օդաչուների անփութության հետևանքով ծովում տեղի ունեցած վթարներից առաջացած վնասներին: Քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ ներպետական կանոնների համաձայն՝ այդպիսի պահանջներ ներկայացնելու իրավունքն առաջանում էր անմիջապես այդ վնասը հասցվելուց հետո: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ պահանջները որակել է որպես «ակտիվներ», որոնք առաջացնում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանություն: Այն այնուհետև նշել է, որ Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումների հիման վրա դիմումատուները կարող էին պնդել, որ իրենք ունեցել են «իրավաչափ ակնկալիք», որ տվյալ վթարներից բխող իրենց պահանջները որոշվելու էին քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ ընդհանուր օրենսդրությանը համապատասխան: Այս գործով ի հայտ եկած «իրավաչափ ակնկալիքն» ինքնին գույքային շահի բաղկացուցիչ մաս չէր. այն վերաբերում էր այն ձևին, թե ինչպես պետք է որպես «ակտիվ» որակված պահանջը լուծվեր՝ համաձայն ներպետական իրավունքի, և մասնավորապես, այն փաստին, որ ազգային դատարանների սահմանված նախադեպային իրավունքը կշարունակելու կիրառվել արդեն իսկ վրա հասած վնասի նկատմամբ: *Կոպեկին ընդդեմ Սլովակիայի [Kopecky v. Slovakia]* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել է այնպիսի իրավիճակներ, երբ «իրավաչափ ակնկալիքի» առումով պահանջ չէր առաջանում: Տվյալ գործում Դատարանը դիտարկել է, թե արդյոք դիմումատուի՝ գույքը վերականգնելու վերաբերյալ պահանջը, այն դեպքում, երբ նա չէր կարող կատարել ազգային իրավունքով դրա վերադարձման համար նախատեսված պայմաններից մեկը, համարվում էր «ունեցվածք» Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

## Սկզբունք 6. Թափանցիկություն

Պետական մարմինները պետք է թույլ տան յուրաքանչյուրին մատչելիություն ունենալ իրենց կողմից պահվող պաշտոնական փաստաթղթերին: Մատչելիությունը տրամադրվում է առանց խտրականության: Պետական մարմինները նաև պարտավոր են տեղեկություններ տրամադրել իրենց աշխատանքի և որոշումների վերաբերյալ, և այդ պարտականությունը տարածվում է պաշտոնական փաստաթղթերի հրապարակման վրա:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 10)
- ▶ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ Rec(2002)2 առաջարկություն
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (հոդվածներ 8, 10)
- ▶ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

## Մեկնաբանություն

Թափանցիկության սկզբունքն ապահովում է, որ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց աշխատանքն իրականացվի բաց ձևով: Սա ամրապնդում է հանրային վստահությունը և անհատների իրավունքների պաշտպանությունը: Ավելին, թափանցիկությունը խրախուսում է մասնակցությունը: Ընդհանուր առմամբ ընդունված է, որ ժողովրդավարությունները կարող են ավելի արդյունավետ գործել, երբ հանրությունը լիարժեք տեղեկացված է հանրային կյանքին վերաբերող հարցերի մասին: Իրագեկ հանրությունն ավելի լավ է պատրաստված պետական մարմինների որոշումներին և քաղաքականություններին մասնակցություն ունենալուն, ինչպես նաև դրանք ընդունելուն և դրանց հավատարիմ մնալուն (տե՛ս ստորև՝ Սկզբունք 9): Պետական մարմինները նույնպես օգտվում են հանրության կողմից ստացված արձագանքներից: Ուստի, ցանկալի է, որ պետական մարմինները թույլ տան բաց ձևով մուտք ունենալ իրենց կողմից վարվող փաստաթղթերին՝ հաշվի առնելով անխուսափելի բացառությունները և սահմանափակումները:

Միջազգային իրավունքում չկա հանրությանը տեղեկություններ տարածելու մասով պետական մարմինների վրա դրված որևէ դրական պարտականություն: Ինչպես նշված է վերևում՝ պետք է խրախուսել, որ նրանք հնարավորինս շատ տեղեկություններ տրամադրեն իրենց կայացրած որոշումների վերաբերյալ:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության կանոններով պետք է հարգվեն մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները, մասնավորապես՝ թվային կամ էլեկտրոնային ֆայլերում պահվող տվյալների մասով (տե՛ս ստորև՝ Սկզբունք 7):

Պաշտոնական փաստաթղթերը ներառում են ցանկացած ձևով գրանցված բոլոր տեղեկությունները, որոնք պետական մարմինների կողմից կազմվել կամ ստացվել և պահվում են իրենց լիազորությունների իրականացման ընթացքում, սակայն չեն ներառում նախապատրաստման փուլում գտնվող փաստաթղթերը: Պաշտոնական փաստաթղթերին մատչելիություն հայցող անձից չպետք է պահանջվի մեկնաբանել այդպիսի հարցում ներկայացնելու պատճառները, կամ, ավելին, պահանջվի, որ նա տվյալ պաշտոնական փաստաթղթերի բովանդակության նկատմամբ ցուցաբերի ուղղակի կամ անձնական հետաքրքրություն: Այդպիսի հարցումներ ներկայացնելու համար

Նախատեսված ձևականությունները պետք է հասցվեն նվազագույնի: Պետական մարմինները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը, սակայն միայն օրենսդրության մեջ հստակ նշված բացառությունների հիման վրա: Այդպիսի սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության մեջ և պետք է լինեն համաչափ:

Տեղեկությունները պետական մարմնի կողմից պետք է տրամադրվեն ողջամիտ ժամկետում: Ակնհայտ է, որ հանրության կողմից տեղեկատվություն պահանջելու չափից ավելի բազմաթիվ հարցումները կարող են զգալի ծանրաբեռնվածություն առաջացնել պետական պաշտոնատար անձանց համար: Հարցումներին ընթացք տալը կարող է հանգեցնել լավ և արդյունավետ վարչարարության հետ անհամատեղելի ձգձգումների: Ողջամիտ ժամկետը գնահատելու հիմնական գործոնները ներառում են ստացման և տրամադրման ենթակա տեղեկության բնույթը և ծավալը: Տեղեկությունը կարող է տրամադրվել կամ բանավոր, կամ գրավոր: Պետք է նաև թույլատրվի փաստաթղթերի և ֆայլերի ստուգումը: Այն փաստը, որ պետական մարմինները վճար են գանձում պահանջվող տեղեկությունները տրամադրելու հետ կապված ծախսերը հոգալու համար (պատճենելը, տպելը, փոստով ուղարկելը և այլն), համատեղելի է թափանցիկության սկզբունքի և ստորև ներկայացված 8-րդ սկզբունքով նախատեսված՝ մատչելիության սկզբունքի հետ:

Պաշտոնական փաստաթղթերին մատչելիության մերժումը կարող է հիմնավորված լինել պետական մարմնի կողմից՝ կապված որոշակի տեսակի ներքին փաստաթղթերի հետ, ինչպիսիք են՝ պետական մարմնի շրջանակներում փոխանակված անձնական փաստաթղթերը կամ այն փաստաթղթերը, որոնք պատրաստվել են որպես ներքին աշխատանքային փաստաթղթեր: Յուրաքանչյուր աշխատանքային միջավայր, ներառյալ՝ պետական մարմինների աշխատանքային միջավայրը, ունի «մասնավոր ոլորտ», որտեղ աշխատանքը կատարվում է բավականին ոչ ֆորմալ ձևով, և որը պետք է պաշտպանված լինի:

Պաշտոնական փաստաթղթերին հանրային մատչելիության ավելի բարձր չափանիշներ կարելի է գտնել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (CETS No. 205): Այս կոնվենցիան դեռևս պետք է ուժի մեջ մտնի:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Լուեզոն ընդդեմ Ֆրանսիայի [Loiseau v. France]* գործում դիմումատուն, որը միջնակարգ դպրոցի նախկին ուսուցիչ էր, բողոքել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, որ իշխանությունները բավականին երկար ժամանակ չեն կարողացել կատարել մի վճիռ, որը նրանց պարտավորեցնում էր իրեն տրամադրել իր գորակոչին, իր սոցիալական ապահովագրության վճարներին և իր աշխատավարձի վճարման քաղվածքներին վերաբերող փաստաթղթերի պատճենները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դժվար է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից բխեցնել պետական մարմինների

կողմից պահվող վարչական տվյալների և փաստաթղթերի մատչելիության ընդհանուր իրավունք: Այնուամենայնիվ, Դատարանը հետևողականորեն ընդունել է, որ հանրությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունք: *Տե՛ս*, օրինակ, *Օբզերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Observer and Guardian v. the United Kingdom*] գործը, որում դիմումատուները բողոքել են, որ վեճի արդյունքին սպասելու ընթացքում մամուլի իրապարակումների վրա ժամանակավոր դատական արգելանք դնելը հակասում էր արտահայտվելու ազատությանը, ինչպես երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով. և *Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի* [*Thorgeir Thorgeirson v. Iceland*] գործը, որում դիմումատուն բողոքում էր, որ իր դատապարտումը և զրպարտության համար իր նկատմամբ կիրառված պատիժը միջամտություն էին արտահայտվելու ազատության իր իրավունքին:

Թափանցիկության մասով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Նախադեպային իրավունքը մշակվել է մամուլի ազատության առնչությամբ: Այդպիսի գործերում Դատարանը մանրամասն ուսումնասիրում է ազգային մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները, որոնք կարող են մամուլի՝ հասարակության «վերահսկող մարմնի» մեջ կոտրել հանրության իրավաչափ մտահոգությունների հարցերով հանրային քննարկումներին մասնակցելու ցանկությունը: Այս համատեքստում ներառված են այն միջոցառումները, որոնք պարզապես ավելի են բարդացնում տեղեկատվության մատչելիությունը: Տե՛ս *Բլադետ Տրոմսոն և Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի* [*Bladet Tromso and Stensaas v. Norway*] գործը, որում դիմումատուները՝ թերթի մի խմբագրություն ու նրա գլխավոր խմբագիրը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն բողոքել են ներպետական դատարանների կողմից իրենց նկատմամբ կիրառված տուգանքների առնչությամբ այն հայտարարությունները հրապարակելու համար, որոնք դատարանների կողմից համարվել են զրպարտություն. և *Ջերսիլդն ընդդեմ Դանիայի* [*Jersild v. Denmark*] գործը, որում դիմումատուն, որպես լրագրող, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պնդել է, որ իր դատապարտումն ու ռափստական դիտողությունների տարածմանն օժանդակելու և դրդելու համար իր նկատմամբ կիրառված պատիժը խախտել են արտահայտվելու ազատության իր իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով: *Մագյար Յելսինկի Բիզոցագան ընդդեմ Յունգարայի* [*Magyar Helsinki Bizottsag v. Hungary*] գործում դիմումատուն, որպես հասարակական կազմակերպություն, բողոքել է, որ պաշտոնական փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության համար իր հարցումը մերժվել է՝ խախտելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ տեղեկություններ ստանալու իրավունքը (Կոնվենցիայի 10-րդ հոդված), ըստ էության, արգելում է կառավարություններին անձին սահմանափակել այնպիսի տեղեկություններ ստանալուց, որոնք մյուսները ցանկանում են կամ կարող է ցանկանան հաղորդել նրան: Այնուամենայնիվ, տեղեկություն ստանալու իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես պետության կողմից իր սեփական նախաձեռնությամբ տեղեկություններ հավաքելու և տարածելու դրական պարտավորություն սահմանող:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, որպես այդպիսին, անհատների համար չի առաջացնում պետական մարմինների կողմից պահվող տեղեկատվության մատչելիության իրավունք և ոչ էլ պարտավորեցնում է այդ տեղեկությունները հաղորդել անհատներին: Այդպիսի իրավունք, այնուամենայնիվ, կարող է առաջանալ, նախ, երբ տեղեկությունների հրապարակումը պարտադրվել է դատական կարգադրությամբ, և, երկրորդ, այն դեպքում, երբ տեղեկատվության մատչելիությունը կարևոր դեր է խաղում անհատի կողմից իր արտահայտվելու ազատության իրավունքի իրացման, մասնավորապես՝ «տեղեկություններ ստանալու և տրամադրելու» համար, երբ մերժումը կարող է համարվել միջամտություն այդ իրավունքին: *Գուջան ընդդեմ Մոլդովայի* [Guja v. Moldova] գործում դիմումատուն՝ հետախուզության նախկին աշխատակից, բողոքել է հետախուզական ծառայությունների ապօրինի գործունեության վերաբերյալ տեղեկությունները բացահայտելու համար իր նկատմամբ կիրառված քրեական դատապարտման առնչությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ ժողովրդավարական հասարակության մեջ կառավարության գործողությունները կամ անգործությունը պետք է ենթարկվեն ոչ միայն օրենսդիր և դատական իշխանությունների, այլ նաև ՉԼՄ-ների և հանրային կարծիքի մանրամասն ուսումնասիրությանը: Կոնկրետ տեղեկություններ բացահայտելու հարցում հանրային շահը երբեմն կարող է այնքան ծանրակշիռ լինել, որ կարող է գերազանցել չհրապարակման պարտականությանը:

*Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի* [Rysovskyy v. Ukraine] գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները պարտավոր են սահմանել ներքին ընթացակարգեր, որոնք ավելացնում են իրենց գործառնությունների թափանցիկությունն ու հստակությունը, նվազեցնում են սխալների ռիսկը և խթանում են գույքային շահեր շոշափող քաղաքացիական գործարքների առնչությամբ իրավական որոշակիությունը: Դատարանը հետևողականորեն հաստատել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների համաձայն պետությունների վրա դրված դրական պարտականությունը՝ տրամադրելու մատչելիություն կարևոր տեղեկատվությանը՝ անհատներին հնարավորություն տալով գնահատելու իրենց առողջությանը և կյանքին սպառնացող վտանգները: Տե՛ս, օրինակ, *Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի* [Vilnes and Others v. Norway] գործը, որում դիմումատուները տեղեկացված չէին կառավարության համար իրենց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության պատճառով իրենց առողջությանը սպառնացող վտանգի մասին. և *Բուդայևան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Budayeva and Others v. Russia] գործը, որում դիմումատուի հարազատները կորցրել էին իրենց կյանքը բնական աղետի պատճառով, քանի որ կառավարությունը չէր կարողացել նրանց ժամանակին տեղեկացնել մոտալուտ աղետի մասին:

## Սկզբունք 7. Մասնավոր կյանքի անձեռնմխելիություն և անձնական տվյալների պաշտպանություն

Թվային կամ ցանկացած այլ ձևաչափով պահվող անձնական տվյալները մշակելիս պետական մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ

բոլոր միջոցները՝ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և անձնական տվյալների պաշտպանության նրանց իրավունքը երաշխավորելու համար:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 9)
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (հոդվածներ 8, 10)
- ▶ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա և այս կոնվենցիան փոփոխող արձանագրություն

## Մեկնաբանություն

Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակումը (ներառյալ հավաքելը) կարևոր նշանակություն ունի հանրության հետ նրանց հարաբերությունների համատեքստում: Պետական մարմինները պետք է հարգեն անհատների անձնական կյանքը և անձնական տվյալների պաշտպանության նրանց իրավունքը:

Պետական մարմինները պետք է ապահովեն, որ մարդկանց թույլ տրվի մատչելիություն ունենալ իրենց կողմից պահվող անձնական տվյալներին, որպեսզի անհատները կարողանան ստուգել, թե ինչպես են մշակվում իրենց անձնական տվյալները, դրանց ճշգրտությունը և, անհրաժեշտության դեպքում, նրանց հնարավորություն տրվի իրականացնելու այլ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու իրավունքները:

Անձնական տվյալների մատչելիության, դրանք ուղղելու և ոչնչացնելու իրավունքները ճանաչվել են դեռևս 1981 թվականից՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայում (ETS No. 108, այսուհետ՝ 108 Կոնվենցիա): 108 Կոնվենցիան նպատակ ունի հնարավորություն ընձեռելու անհատներին՝

- ▶ պարզելու տվյալների մշակման առկայությունը, դրա հիմնական նպատակները, ինչպես նաև վերահսկիչի ինքնությունը և մշտական բնակության կամ գործունեության հիմնական վայրը:
- ▶ ողջամիտ պարբերականությամբ և առանց ավելորդ հետաձգման կամ ծախսի ստանալու հաստատում, թե արդյոք անձնական տվյալները պահպանվում են և ստանալու այդ տվյալները հասանելի ձևով:
- ▶ հասնելու անձնական տվյալների ուղղմանը կամ ոչնչացմանը, եթե դրանք մշակվել են ներպետական իրավունքի դրույթների խախտմամբ՝ կիրառելով Կոնվենցիայի հիմնական սկզբունքները, և
- ▶ օգտվելու իրավական պաշտպանությունից:

108 Կոնվենցիայի՝ արձանագրությամբ կատարված փոփոխությունները<sup>5</sup> նախատեսում են անհատի պաշտպանության լրացուցիչ իրավունքներ: Դրանք մասնավորապես ներառում են՝

- ▶ չենթարկվել անհատի վրա Էականորեն ազդող այնպիսի որոշման, որը հիմնված է բացառապես տվյալների ավտոմատացված մշակման վրա՝ առանց հաշվի առնելու անհատի տեսակետները.
- ▶ ըստ պահանջի ծանոթանալ տվյալների մշակման հիմքում ընկած պատճառաբանություններին, երբ այդպիսի մշակման արդյունքները կիրառվում են իր նկատմամբ.
- ▶ ցանկացած պահի առարկել, իր իրավիճակին վերաբերող հիմքերով, անձնական տվյալների մշակմանը, եթե վերահսկիչը չի ներկայացրել իրավաչափ հիմքեր մշակման համար, որոնք գերակայում են անհատի շահերը կամ իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Կարևոր է, որ պետական մարմիններն անձնական տվյալները մշակեն օրինական և արդար ձևով: Այդ նպատակով նրանք պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր նախագրուշական միջոցները: Տվյալները պետք է մշակվեն միայն բացահայտ, հստակ և իրավաչափ նպատակներով: Նպատակները, որոնց համար տվյալները մշակվում են, պետք է լինեն համարժեք, համապատասխան և ոչ ավելորդ: Տվյալները պետք է լինեն ճշգրիտ և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն: Դրանք պետք է պահպանվեն այնպիսի ձևով, որը հնարավորություն է տալիս անհատին նույնականացնել միայն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է այն նպատակների համար, որոնց համար այդ տվյալները մշակվում են:

Անձնական տվյալների որոշակի տեսակներ, որոնք կոչվում են «զգայուն տվյալներ», չեն կարող մշակվել, քանի դեռ ներպետական իրավունքով չեն ապահովվում պատշաճ երաշխիքներ, որոնք լրացնում են 108 Կոնվենցիայի երաշխիքները: Դրանք, մասնավորապես, ներառում են հետևյալ տվյալների մշակումը.

- ▶ գենետիկ տվյալներ.
- ▶ անձնական տվյալներ, որոնք վերաբերում են հանցագործություններին, քրեական վարույթներին և դատապարտումներին և անվտանգության հետ կապված միջոցառումներին.
- ▶ անձին միանշանակորեն նույնականացնող կենսաչափական տվյալներ.
- ▶ անձնական տվյալներ, որոնք բացահայտում են ռասայական կամ էթնիկ ծագումը, քաղաքական կարծիքը, արհմիություններին անդամակցությունը, կրոնական կամ այլ համոզմունքները, առողջությունը կամ սեռական կյանքը:

Պետական մարմինների կողմից պետք է ձեռնարկվեն անվտանգության հետ կապված համապատասխան միջոցառումներ՝ նրանց կողմից պահվող անձնական տվյալների պաշտպանության համար այնպիսի ռիսկերի դեմ,

5. «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրություն (CETS No. 223), ընդունված՝ 2018 թվականի մայիսի 18-ին և ստորագրման համար բաց՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ից:

ինչպիսիք են անձնական տվյալներին պատահական կամ չարտոնված մուտքը, դրանց ոչնչացումը, կորուստը, օգտագործումը, փոփոխումը կամ բացահայտումը: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի մի շարք առաջարկություններով հստակեցվում են, թե ինչպես պետք է կիրառվեն 108 Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքները պետական մարմինների պարտականությունների տարբեր ոլորտներում, մասնավորապես՝

- ▶ գբաղվածության տվյալներ (Առաջարկություն CM/Rec(2015)5),
- ▶ պրոֆիլավորում (Առաջարկություն CM/Rec(2010)13),<sup>6</sup>
- ▶ վիճակագրություն (Առաջարկություն թիվ R (97) 18),
- ▶ բժշկական տվյալներ (Առաջարկություն թիվ R (97) 5),
- ▶ հեռահաղորդակցություն (Առաջարկություն թիվ R (95) 4),
- ▶ երրորդ կողմերին ցանցով փոխանցվող տվյալներ (Առաջարկություն թիվ R (91) 10),
- ▶ ոստիկանության տվյալներ (Առաջարկություն թիվ R (87) 15),<sup>7</sup>
- ▶ սոցիալական անվտանգության տվյալներ (Առաջարկություն թիվ R (86) 1):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձնական տվյալների պաշտպանության հետ կապված իր նախադեպային իրավունքում նպատակ ունի արդարացի հավասարակշռություն հաստատելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթների կիրառման («անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք») և այդ իրավունքի՝ այլ հիմնարար իրավունքների հետ կիրառման միջև (ինչպես, օրինակ, Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքը):

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի [Klass and Others v. Germany]* գործում դիմումատուները բողոքել են Գերմանիայի օրենսդրությունից, որն իշխանություններին հնարավորություն էր տալիս վերահսկելու իրենց նամակագրությունը և հեռախոսային հաղորդակցությունը՝ առանց իշխանություններին պարտավորեցնելու իրենց տեղեկացնել հետազայում իրենց դեմ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ քաղաքացիների գաղտնի հսկողության հետ կապված լիազորությունները Կոնվենցիայի համաձայն հանդուրժելի են միայն այնքանով, որքանով դրանք խիստ անհրաժեշտ են ժողովրդավարական

6. Տե՛ս նաև *Մեծ տվյալների աշխարհում անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության վերաբերյալ ուղեցույցները*, որոնք ընդունվել են «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի կողմից՝ 2017 թվականի հունվարին:

7. Տե՛ս նաև *Ոստիկանության ոլորտում անձնական տվյալների օգտագործման գործնական ուղեցույցը*, որն ընդունվել է «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի կողմից՝ 2018 թվականի փետրվարին:



ինստիտուտները պաշտպանելու համար: *Ս.-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*S. and Marper v. the United Kingdom*] գործում դիմումատուն բողոքել է, որ իշխանությունների կողմից ձեռք բերված ԴՆԹ-ն և մատնահետքերը կարող էին անորոշ ժամանակով պահվել և օգտագործվել այլ նպատակների համար, քան այն նպատակները, որոնց համար դրանք ձեռք էին բերվել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ անհատի անձնական կյանքին վերաբերող տվյալների պարզապես պահելը համարվում է միջամտություն մասնավոր կյանքի իրավունքին: *Հարալամբին ընդդեմ Ռումինիայի* [*Haralambie v. Romania*] գործում Դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական կյանքը հարգելու իրավունք) խախտում, որում խոչընդոտներ էին դրվում դիմումատուի՝ գաղտնի ծառայությունների կողմից իր վերաբերյալ ստեղծված անձնական գործին ծանոթանալու ճանապարհին: Դատարանը վերահաստատել է այն անձանց կենսական հետաքրքրությունը, որոնք պետական մարմինների կողմից պահվող անձնական գործերի սուբյեկտն են, կարողանալու մուտք ունենալ դրանց, և շեշտել է, որ իշխանությունները պարտավոր են ապահովել այդպիսի տեղեկությունների մատչելիության արդյունավետ ընթացակարգ: *Կ.Հ.-ն և այլք ընդդեմ Սլովակիայի* [*K.H. and Others v. Slovakia*] գործում Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, որում դիմումատուներին թույլ չէր տրվել լուսապատճենել իրենց բժշկական փաստաթղթերը: Դատարանը համարել է, որ դիմումատուներին չպետք է պարտավորեցնելին հիմնավորել, թե ինչու էին նրանց անհրաժեշտ լուսապատճենները: Տվյալները տիրապետող մարմնի գործն էր ցույց տալ պահանջի հետ չհամաձայնելու պարտադիր պատճառները:

Ի հակադրություն, *Սեգերշտեդտ Վիբերգը և այլք ընդդեմ Շվեդիայի* [*Segerstedt-Wiberg and Others v. Sweden*] գործում Դատարանը վճռել է, որ Շվեդիայի իշխանությունները չեն խախտել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը: Հաշվի առնելով նրանց հասանելի՝ հայեցողական լիազորությունների լայն շրջանակը՝ իշխանություններն իրավունք ունեին համարելու, որ ազգային անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի շահերը գերակշռում են դիմումատուների՝ Անվտանգության մարմնի ոստիկանական բաժանմունքի կողմից վարվող գրանցամատյանում նրանց մասին տեղեկատվության ամբողջ ծավալին ծանոթանալու շահին: *Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Gaskin v. the United Kingdom*] գործում դիմումատուն բողոքել է վատ վերաբերմունքից այն ժամանակահատվածում, երբ ինքը գտնվել է տեղական իշխանությունների ինսամբլի տակ և ապրել է ինսամատար ծնողների հետ. նա դիմել է տեղական իշխանությունների կողմից պահվող իր գործի վերաբերյալ գրառումներին մուտք ունենալու համար, սակայն նրա պահանջը մերժվել է: Դատարանը վճռել է, որ հանրային գրառումների գաղտնիությունը կարող է կարևոր լինել՝ օբյեկտիվ և հուսալի տեղեկատվություն ապահովելու համար: Գաղտնիությունը կարող է անհրաժեշտ լինել նաև երրորդ անձանց պաշտպանելու համար: Համակարգը կհամապատասխանի համաչափության սկզբունքին, եթե այն թույլ է տալիս մուտք ունենալ գրառումներին կամ այն դեպքում, երբ տրամադրողը համաձայն է, կամ եթե անկախ մարմինը թույլատրել է մուտք գործել այն դեպքում, երբ տրամադրողը չի կարող պատասխանել մուտքի խնդրանքին կամ հրաժարվում է համաձայնությունից:

## Գլուխ II

# Ընթացակարգային սկզբունքներ

Սույն գլխում պարունակվող ընթացակարգային սկզբունքները կիրառվում են որոշումների կայացման գործընթացների նկատմամբ, երբ պետական մարմինները որոշում են այնպիսի հարցեր, որոնք ազդում են այն մարդկանց իրավունքների և շահերի վրա, որոնք ապրում կամ աշխատում են իրենց կառավարման տարածքներում կամ այն տարածքներում, որտեղ իրենք հանրային ծառայություններ են մատուցում: Շատ դեպքերում անհատների կողմից գրավոր կամ առցանց հարցումը կուղարկվի պետական մարմին՝ որոշման կամ ծառայության համար: Գործընթացը կարող է լինել պաշտոնական կամ ոչ պաշտոնական՝ կախված ծառայությունից և պահանջի առարկայից: Հարցմանն ընթացք տալը կախված կլինի դրա համեմատական բարդությունից և կարևորությունից, մասնավորապես՝ այն հանգամանքից, թե արդյոք կայացվելիք որոշումը կազդի կամ չի ազդի հանրության այլ անդամների, կազմակերպությունների կամ բիզնեսների վրա և, եթե այո, ապա՝ նրանցից քանիսի՞ վրա: Այս ընթացակարգային սկզբունքներն արտացոլում են օրենքի գերակայության հիմնական տարրերը՝ այնպես, ինչպես այն պետք է կիրառվի ժողովրդավարական հասարակության մեջ՝ մարդու իրավունքների հիման վրա:

### Սկզբունք 8. Մատչելիություն

Պետական մարմինները ստանում և պատասխանում են անհատների կողմից ներկայացված՝ այնպիսի վարչական որոշումներ կայացնելու պահանջներին, որոնք վերաբերում են իրենց իրավասությանն առնչվող հարցերին և որոնց առնչությամբ տվյալ անհատներն ունեն իրավաչափ շահ, ներառյալ՝ վարչական ընթացակարգ նախաձեռնելու հնարավորությունը:

### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդվածներ 13, 15)

- ▶ Տեղական և տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ CM/Rec(2007)4 առաջարկություն (Ուղեցույցներ 31,32, 33, 34)
- ▶ Տեղական հանրային ծառայությունների և այդ ծառայություններից օգտվողների իրավունքների վերաբերյալ թիվ R (97) 7 առաջարկություն (թարմացվել է CM/Rec(2007)4 առաջարկությամբ) (Ուղեցույց 9)
- ▶ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիա (հոդված 10.2)
- ▶ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (հոդված 10)

## Մեկնաբանություն

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պետական մարմիններից պահանջելու որոշում կայացնել իրենց իրավասության ներքո գտնվող հարցերի վերաբերյալ, մասնավորապես այն դեպքերում, երբ ծառայություններ են մատուցվում օգուտներ ստանալու իրավունք ունեցող անձանց:

Պետական մարմինները պետք է հասանելի դարձնեն իրենց իրավասությունների վերաբերյալ տեղեկությունները: Նրանք նաև պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, թե ինչպես անհատները կարող են հատուկ դիմումներ ներկայացնել և ներառել ուղղորդում այն մասին, թե ինչպես պետք է ձևաթղթերը լրացվեն՝ հետագա ընթացակարգերի հետ միասին: Եթե անհատը չի օգտագործում համապատասխան ձևաթուղթը, ապա դա չպետք է հիմք հանդիսանա նրա դիմումի ավտոմատ մերժման համար: Փոխարենը, պետական մարմնի պաշտոնատար անձինք պետք է օժանդակեն անհատին ճիշտ ձևով լրացնելու համապատասխան ձևաթուղթը, կամ, այլապես, տան համապատասխան ուղղորդում՝ ապահովելու համար, որ պետական մարմինն ունենա այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են՝ պատշաճորեն հիմնավորված որոշում կայացնելու համար: Պետական մարմինները պետք է ողջունելի և աջակցող վերաբերմունք ցուցաբերեն այն անհատների նկատմամբ, ովքեր իրենց են դիմում տեղեկատվություն ստանալու հարցումով, մասնավորապես երեխաների կամ այլ խոցելի անձանց դեպքում:

Ուղղորդում և տեղեկություն տրամադրելիս պետական պաշտոնատար անձինք պետք է անաչառ գործեն և ապահովեն, որ բոլոր անձինք հավասար վերաբերմունքի արժանանան և ստանան նույն աստիճանի օբյեկտիվ տեղեկություններ կամ ուղղորդում, մասնավորապես, երբ որոշումը կարող է վերաբերել մի քանի անձանց (տե՛ս վերևում՝ Սկզբունք 2): Ուղղորդելը կարող է տարածվել փաստաթղթերի կազմման կամ լրացման վրա, բայց չպետք է պարունակի խորհրդատվություն, քանի որ դա կարող է ազդել պետական մարմնի չեզոքության վրա, և դա, հավանաբար, կարող է հիմք հանդիսանալ ցանկացած վարչական որոշման դեմ հաջող բողոքարկման համար՝ այն կայացնելու եղանակի առնչությամբ:

Պետական մարմինը պարտավոր է պատասխանել ստացված բոլոր հարցումներին, բայց պարտադիր չէ, որ այն նույնպիսի ուշադրություն դարձնի ակնհայտորեն չարաշահող հարցումներին, մասնավորապես, եթե դրանք կրկնվող են կամ ներկայացվում են մեծ թվով: Ազգային իրավունքով է որոշվում,

թե պետական մարմինները որքանով են ընդունելու փոքրամասնությունների կամ օտար լեզուներով ներկայացված հարցումները և թե արդյոք օտար կամ փոքրամասնությունների լեզվով ներկայացված հարցումները կարող են ընդունվել և դրանց կարող է հետագա ընթացք տրվել, եթե անհատը չի տիրապետում իրավասու պետական մարմնի պաշտոնական լեզվին: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան (ETS No. 148) և «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան (ETS No. 157) նախատեսում են պետական մարմինների և պետական ծառայություն մատուցողների կողմից տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների օգտագործման հետ կապված պարտավորություններ այն դեպքում, երբ այդպես է պահանջում անձանց թիվը կամ նրանց ավանդական ներկայությունը: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան նախատեսում է, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձինք կարող են ներկայացնել բանավոր կամ գրավոր հարցումներ և ստանալ պատասխան այդ լեզուներով:

Այն դեպքում, երբ դիմում է ներկայացվում այնպիսի պետական մարմին, որն իրավասու մարմինը չէ, հնարավորության դեպքում այն պետք է դիմումը փոխանցի իրավասու մարմնին և, համապատասխանաբար, այդ մասին ծանուցի շահագրգիռ անձին: Դիմումը փոխանցելու փոխարեն դիմումը վերադարձնելը կարող է խելամիտ լինել, եթե իրավասու մարմինը հստակ չի կարող նույնականացվել կամ պատկանում է պետական կառավարման մարմնի բոլորովին այլ ճյուղի: Այդպիսի դեպքերում շահագրգիռ անհատները պետք է տեղեկացվեն:

Անհատներից կարող է պահանջվել իրենց ներդրումն ունենալ պետական մարմնի կողմից իրենց հարցմանն ընթացք տալու հետ կապված այնպիսի ծախսերը հոգալու հարցում, ինչպիսիք են հատուկ ընթացակարգերի համար գանձվող վճարները: Այնուամենայնիվ, գանձվող ցանկացած վճար պետք է լինի արդար և ողջամիտ, և չխախտի լսված լինելու իրավունքը (տե՛ս ստորև՝ Սկզբունք 10): Ավելին, վարչական ընթացակարգերը պետք է մշակված լինեն այնպես, որ վճարները լինեն հնարավորինս նվազագույնը:

Վարչական ընթացակարգերի պարզեցումը կարևոր նշանակություն ունի պետական մարմիններն անհատների համար մատչելի դարձնելու հարցում: Տեղական և տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ CM/Rec(2007)4 առաջարկությամբ կոչ է արվում հանրային ծառայությունները մշակել և կազմակերպել ոչ թե պետական մարմինների կարիքների, այլ հանրության կարիքների լույսի ներքո: Օրինակ՝ պետք է պարզեցնել և արդիականացնել վարչական և իրավաբանական լեզուն՝ պահպանելով այդ լեզվին հարիր խստությունը: Վարչական ընթացակարգերը պետք է կազմակերպվեն ամենաարդյունավետ և ծախսարդյունավետ եղանակով և լինեն օգտագործողի համար հարմար: Պետք է ռացիոնալացվեն ընդունման տարածքները և ընթացակարգերը, տրամադրվեն բազմատեսակ սպասարկման հաշվիչներ և ներմուծվեն շարժական գրասենյակներ: Նախապատվությունը պետք է տրվի միասնական չափանիշների սահմանմանը, որոնք պարզ և վավեր են տեղական և տարածքային հանրային բոլոր ծառայությունների համար, և որոնք բոլոր օգտվողները կարող են

հասկանալ, հարգել և որոնց կարող են ապավինել: Տե՛ս նաև Տեղական հանրային ծառայությունների և դրանց օգտագործողների իրավունքների վերաբերյալ ավելի վաղ ներկայացված թիվ R (97) 7 առաջարկությունը, որը թարմացվել է CM/Rec(2007)4 առաջարկությամբ:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Մարկովը և Մարկովան ընդդեմ Ուկրաինայի [Markov and Markova v. Ukraine]* գործում տիկին Մարկովան բողոքել է, որ երկար ժամանակ ինքը չէր կարողանում ամուսնանալ պարոն Մարկովի հետ, քանի որ պետական մարմինը հրաժարվում էր նրան տրամադրել նրա առաջին կնոջից ամուսնալուծությունը հաստատող փաստաթուղթն այն հիմքով, որ պարոն Մարկովը ազատագրվման ձևով պատիժ էր կրում և չէր կարող տվյալ մարմնի գրասենյակ այցելել անձամբ: Թեև գանգատը մերժվել է՝ վեցամսյա կանոնը չպահպանելու համար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ամուսնալուծության վկայական տալը իրավասու մարմնի կողմից մերժելը համարվում էր միջամտություն պարոն Մարկովի հետ ամուսնանալու՝ տիկին Մարկովայի իրավունքին՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ հոդվածի:

*Կուխարեսը և Կուխարեսան ընդդեմ Լատվիայի [Kuharec alias Kuhareca v. Latvia]* գործում դիմումատուն բողոքել է, որ իր ազգանունն իր պաշտոնական փաստաթղթերում սխալ էր գրված: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ լեզվական ազատությունը չի պատկանում մարդու իրավունքների և ազատությունների այն շարքին, որը կարգավորվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Ղատարանը նշել է՝ բացառությամբ 5.2-րդ հոդվածում (որևէ անձի ձերբակալման պատճառների մասին տվյալ անձի համար հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացված լինելու իրավունք) և 6.3.ա և 6.3.ե հոդվածներում (որևէ անձի դեմ առաջադրված մեղադրանքի բնույթն ու հիմքն այդ անձի համար հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացված լինելու իրավունքը, ինչպես նաև թարգմանչի կողմից օգնություն ստանալու իրավունքը, եթե մեղադրվողը չի հասկանում կամ խոսում այն լեզվով, որը գործածվում է դատարանում) նշված հատուկ իրավունքների, Կոնվենցիան *per se* (ինքնին) չի երաշխավորում պետական մարմինների հետ շփոմներում որոշակի լեզու օգտագործելու իրավունքը կամ որևէ մեկի նախընտրած լեզվով տեղեկություններ ստանալու իրավունքը:

### Սկզբունք 9. Մասնակցություն

Յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա մասնակցելու պետական մարմինների կողմից վարչական այն որոշումների նախապատրաստմանն ու իրականացմանը, որոնք ազդում են իր իրավունքների կամ շահերի վրա:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 15)
- ▶ Տեղական և տարածքային հանրային ծառայությունների վերաբերյալ CM/Rec(2007)4 առաջարկություն (Ուղեցույցներ 40, 41, 42, 43, 44)
- ▶ Տեղական հանրային ծառայությունների և այդ ծառայություններից օգտվողների իրավունքների վերաբերյալ թիվ R (97) 7 առաջարկություն (թարմացվել է CM/Rec(2007)4 առաջարկությամբ) (Ուղեցույցներ 14, 15)
- ▶ Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկություն (Սկզբունք IV)

## Մեկնաբանություն

Անհատների (որպես հանրային ծառայություններից օգտվողների) մասնակցությունը իրենց վրա ազդող վարչական որոշումների նախապատրաստմանն ու իրականացմանը մի միջոց է, որն օգնում է հանրությանը մոտեցնել պետական մարմին: Հանրության մասնակցությունը պետք է ամեն հնարավորության դեպքում խրախուսել՝ ապահովելու համար, որ հանրության շահը հաշվի է առնվում՝ չխթանելով կորպորատիվիզմը կամ որոշումներ կայացնելու գործընթացի չափից ավելի դանդաղեցումը: Միայն հրատապ գործողությունը կարող է իրավաչափ հիմք համարվել՝ պետական մարմինների կողմից մասնակցության սկզբունքն անտեսելու համար:

Հանրության մասնակցության կարելի է հասնել հանրության անդամների՝ ժամանակավոր համատեղ հանձնաժողովներում կամ քաղաքային հանձնաժողովներում կամ խորհուրդներում մասնակցությամբ: Մեկ այլ հնարավոր եղանակ է ամենամյա հանդիպումների կազմակերպումը՝ ներգրավելով ծառայություններ մատուցողների ներկայացուցիչներին և օգտագործողներին, որոնք կհանդիպեն և համաձայնեցված օրակարգի հիման վրա կքննարկեն վարչական որոշումների նախապատրաստումը կամ իրականացումը:

Հանրության արդյունավետ մասնակցությունը կարող է ենթադրել քաղաքացիական հասարակության ներգրավվածություն՝ հաշվի առնելով դրա աշխատանքը հանրության տարբեր հատվածների հետ և առօրյա կյանքի փորձը տվյալ վայրում: Քաղաքացիական հասարակությունը կարող է օգնել պետական մարմիններին ավելի լավ հասկանալ և բավարարել հանրության սպասումները՝ սոցիալական, մշակութային կամ կրթական ծառայություններ մատուցելիս, օրինակ՝ մանկապարտեզների, դպրոցական սննդի, դպրոցական տրանսպորտի, գրադարանների, շրջակա միջավայրի, տարեցների աջակցության և դպրոցում դժվարություն ունեցող երեխաների առողջության պահպանման և աջակցության տրամադրման մասով:

Երբ պետական մարմինն առաջարկում է ընդունել ոչ կանոնակարգային որոշում, որը կարող է ազդել անորոշ թվով կամ մեծ թվով մարդկանց իրավունքների և շահերի վրա, մասնավորապես տեղական մակարդակում (օրինակ՝ մեծ շինարարական նախագծերի, հողօգտագործման փոփոխության, առողջապահական կամ կրթական քաղաքականության վերաբերյալ), այն

պետք է սահմանի այնպիսի ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին: Այդպիսի մասնակցությունը կարող է լինել գրավոր դիտարկումների, լսումների, իրավասու մարմնի խորհրդատվական մարմնում ներկայացուցչության, խորհրդատվությունների և (կամ) հանրային հարցումների ձևով: Մասնակցության որ ձևն էլ ընտրվի, կարևոր է, որ հանրությունը հստակ տեղեկացված լինի ներկայացված առաջարկների վերաբերյալ և հնարավորություն ունենա լիարժեք արտահայտելու իր տեսակետները:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Հաթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [Hatton and Others v. the United Kingdom]* գործում դիմումատուները, ովքեր ապրում էին Հիթրոու օդանավակայանի հարևանությամբ, բողոքում էին, որ գիշերային թռիչքների վերաբերյալ կառավարության քաղաքականությունը խախտում էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունել է, որ անհրաժեշտ է ապահովել անհատների ներգրավվածությունն այնպիսի որոշումների կայացման գործընթացում, որոնք հանգեցնում են որոշումների կայացման, որոնք կարող են ազդել կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վրա:

*Թաշքնը և այլք ընդդեմ Թուրքիայի [Taşkin and Others v. Turkey]* գործում դիմումատուն, որը բնակվում էր ոսկու հանքի մոտ, վիճարկում էր ազգային իշխանությունների՝ հանքավայրում ցիանիդացման գործողությունների գործընթաց օգտագործելու թույլտվություն տրամադրելու որոշումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ պետական մարմինները պետք է որոշեն շրջակա միջավայրի և տնտեսական քաղաքականության բարդ հարցեր, նրանք պետք է ապահովեն, որ որոշումների կայացման գործընթացը հաշվի է առնում այն անձանց իրավունքներն ու շահերը, որոնց՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները կարող են ազդեցություն կրել: Շահագրգիռ անձինք պետք է նաև կարողանան դատարանում բողոքարկել ցանկացած որոշում, գործողություն կամ անգործություն այն դեպքում, երբ նրանք համարում են, որ որոշումների կայացման գործընթացում իրենց շահերին կամ իրենց մեկնաբանություններին բավարար կարևորություն չի տրվել (տե՛ս ստորև՝ Սկզբունք 20):

### Սկզբունք 10. Լաված լինելու իրավունք

Նախքան պետական մարմինը կկայացնի որևէ վարչական որոշում, որը կազդի անհատի իրավունքների կամ շահերի վրա, տվյալ անձին պետք է հնարավորություն տրվի արտահայտելու իր տեսակետները և տեղեկություններ ու փաստարկներ ներկայացնելու պետական մարմնին:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդվածներ 14, 15)
- ▶ Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկություն (Սկզբունք IV, VIII)
- ▶ Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության մասին (77) 31 բանաձև (Սկզբունք I)

## Մեկնաբանություն

Լսված լինելու իրավունքը ժողովրդավարական պետության արդյունավետ կառավարման հիմնական սկզբունքն է: Դրա համար կարևոր է պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը, որպեսզի անհատները հնարավորություն ունենան ներկայացնելու համապատասխան և արդյունավետ փաստարկներ՝ առաջարկվող վարչական այն որոշումների հետ կապված, որոնք կազդեն կամ կարող են ազդել իրենց իրավունքների կամ շահերի վրա (տե՛ս վերևում՝ Սկզբունք 6): Ընթացակարգերը և այն հարցերը, որոնք պետք է հաշվի առնվեն, կախված կլինեն այն հանգամանքից, թե արդյոք վարչական որոշումը վերաբերում է անհատական, թե՛ հավաքական շահերին:

Այն դեպքերում, երբ անհատի իրավունքներն ու շահերն անմիջականորեն և բացասական ազդեցություն կկրեն, նա պետք է ժամանակին և համապատասխան միջոցներով տեղեկացվի, որպեսզի փաստարկներ ներկայացնելու հնարավորություն ունենա: Փաստարկները կարող են լինել գրավոր կամ ներկայացվել բանավոր՝ լսումների կամ հանդիպումների ընթացքում: Երկու դեպքում էլ փաստարկները կարող են ներառել փաստաթղթային ապացույցներ (ներառյալ զեկույցներ, պլաններ և լուսանկարներ), կարծիքներ և (կամ) հայտարարություններ: Կարևոր է, որ անհատներին տրվի բավարար ժամանակ իրենց փաստարկները ներկայացնելու համար՝ նախքան պետական մարմնի կողմից որոշում կայացնելը:

Փաստարկներ ներկայացնել ցանկացող անձանց աջակցելու համար հանրային մարմինը պետք է ապահովի փաստերի, փաստարկների և ապացույցների, ինչպես նաև այն իրավական հիմքի լիարժեք բացահայտում, որի հիման վրա նա մտադիր է կայացնել իր որոշումը: Այլ կողմերի ներկայացրած փաստարկները նույնպես պետք է հասանելի լինեն հանրության համար: Անհատներին պետք է թույլատրվի վարչական ընթացակարգի ընթացքում ներկայացնելու փաստարկներ մեկից ավելի անգամ, մասնավորապես, եթե ընթացակարգը երկար է, և նոր տարրեր են ի հայտ եկել: Անհատները նաև պետք է իրավունք ունենան պատասխանելու պետական մարմնի կամ այլ կողմերի կողմից ներկայացված փաստարկներին:

Անհատները, որոնք ազդեցություն են կրում կամ կարող են ազդեցություն կրել այլ պետությունում կամ իրավագործությունում գտնվող պետական մարմինների (մասնավորապես՝ անդրսահմանային կամ սահմանամերձ շրջանների պետական մարմինները) կողմից կայացված որոշումներից, պետք է կարողանան մասնակցել և իրացնել լսված լինելու իրենց իրավունքն



այդ պետության կամ իրավագործության պետական մարմնի կողմից իրականացվող համապատասխան վարչական ընթացակարգում առանց խտրականության:

Շատ դեպքերում պետական մարմինների որոշումները վերաբերում են մեծ թվով անձանց՝ հաճախ նույն տարածքում (օրինակ՝ հիմնական կայանքների, արդյունաբերական գործարանների, քաղաքային և գյուղական պլանավորման համատեքստում): Կարող են տուժել նաև հարևան կամ այլ նահանգներում բնակվող անձինք: Իրականում, սահմանամերձ շրջանների տեղական իշխանությունները գնալով ավելի ու ավելի են ձեռնարկում անդրսահմանային բնույթի հանրային աշխատանքներ: Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկությունը մի կողմից հավասարակշռում է լավ և արդյունավետ վարչարարության պահանջները, մյուս կողմից՝ մեծ թվով անձանց արդար և արդյունավետ պաշտպանությունը, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում, վարչական ակտերի միջազգային ազդեցություններից տուժած անձանց: Լսված լինելու իրավունքն այս համատեքստում կարևոր սկզբունք է: Կարևոր է, որ ստեղծվեն համակարգեր՝ դյուրացնելու համար այնպիսի համապատասխան վարչական ընթացակարգերին մասնակցությունը, ինչպիսիք են հանրային քննարկումները, հանրային լուծումներն ու խորհրդատվական մարմինների ստեղծումը: Վարչական ընթացակարգերի մասին ծանուցումը կարող է կատարվել հանրային ծանուցումների հրապարակման միջոցով: Այն դեպքում, երբ վարչական որոշումները վերաբերում են մեկ այլ պետության կամ իրավագործության սահմանամերձ տարածքներում ապրող և աշխատող մարդկանց, պետական մարմինները պետք է ձեռնարկեն քայլեր, որպեսզի այդ մարդիկ նույնպես հնարավորություն ունենան արդյունավետորեն մասնակցելու որոշումների կայացման գործընթացին՝ ամենայն հավանականությամբ այլ պետության կամ իրավագործության համապատասխան պետական մարմինների հետ համատեղ համակարգմամբ:

Երբ անհրաժեշտ է անհապաղ վարչական գործողություն (օրինակ՝ անումալ եղանակային պայմաններ՝ ջրհեղեղ, երաշտ, անտառային հրդեհ և այլն), կարող է հնարավոր չլինել լիովին պահպանել այս սկզբունքը, որը շահագրգիռ անձանց ընձեռում է նախքան վարչական որոշումներ կայացնելը լսված լինելու իրավունք: Այնուամենայնիվ, որքանով հնարավոր է, այն անհատները, ովքեր հավանաբար ազդեցություն են կրելու պետական մարմինների կողմից այդպիսի իրադարձությունների առնչությամբ ձեռնարկված ցանկացած գործողությունից, պետք է լիարժեքորեն ներգրավված լինեն պետական մարմինների կողմից համապատասխան արտակարգ իրավիճակների պլանների նախապատրաստման գործընթացում և ստանան խորհրդատվություն այդ հարցերով:

## **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը**

*ՄքՄայքլն ընդդեմ Միացյալ Թագավորության [McMichael v. the United Kingdom] և Բուշեմին ընդդեմ Իտալիայի [Buscemi v. Italy] գործերում, որոնք*

երկուսն էլ վերաբերում էին երեխաների խնամակալության վերաբերյալ ազգային մարմինների որոշումներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի պարունակում ընթացակարգային հստակ պահանջներ, միջամտության միջոցառումների հանգեցնող՝ որոշումների կայացման գործընթացը պետք է լինի արդար և բավարար չափով հարգանք ապահովի 8-րդ հոդվածով երաշխավորված շահերի նկատմամբ: Հաշվի առնելով կայացվելիք որոշումների լուրջ բնույթը՝ ծնողները պետք է ներգրավված լինեն որոշումների կայացման գործընթացում, որպեսզի հնարավոր լինի ապահովել նրանց շահերի պատշաճ պաշտպանվածությունը: Եթե ոչ, ապա նրանց ընտանեկան կյանքին միջամտությունը չի համարվի «անհրաժեշտ»՝ 8-րդ հոդվածի իմաստով:

## Սկզբունք 11. Ներկայացուցչություն և աջակցություն

Եթե պետական մարմինը մտադիր է մերժել անհատի պահանջը, կամ գտնում է, որ հավանական է, որ պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն կմերժվի, ապա այն պետք է անհատին հնարավորություն տա ներկայացված լինելու կամ այլ կերպ օժանդակություն ստանալու՝ իր տեսակետներն առաջ քաշելիս, մասնավորապես, եթե վարչական որոշումը կարող է ուղղակիորեն և բացասաբար անդրադառնալ նրա իրավունքների կամ շահերի վրա:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 14)
- ▶ Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկություն (Սկզբունք II)
- ▶ Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության մասին (77) 31 բանաձև. (Սկզբունք III)

## Մեկնաբանություն

Կարևոր է, որ անհատը պատշաճ կերպով նշանակի մեկ այլ անձի, որն իրեն կներկայացնի և հանդես կգա իր անունից: Որոշ դեպքերում հարկ կլինի, որ պետական մարմինը ստուգի, որ ներկայացուցիչն ունի գործելու համար անհրաժեշտ լիազորություն: Հիմնականում, եթե ոչ բոլոր դեպքերում, ներկայացուցչության և աջակցության հետ կապված ծախսերը կրում է տվյալ անհատը, ոչ թե պետական մարմինը: Մեծ թվով անձանց առնչվող վարչական ընթացակարգի համատեքստում պետական մարմինները կարող են պահանջել, որ այդ անձինք ներկայացվեն մեկ կամ մի քանի ներկայացուցիչների կամ ասոցիացիաների կամ այլ կազմակերպությունների կողմից:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպայի իրավունքը

Շահալն ընդդեմ Միացյալ Թագավորության [Chahal v. the United Kingdom] գործում դիմումատուն պետք է արտաքսվեր ՅՆԵՄ-ի արտաքսության անվտանգության հիմքով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է նրա իրավունքների խախտում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով, *inter alia*, որ պարոն Շահալն օրինական ձևով ներկայացված չի եղել պետական այն մարմնի (խորհրդատվական կոմիտեի) առաջ, որը քննել էր Շահալի արտաքսման հրամանի դեմ նրա կողմից ներկայացված բողոքը:

### Սկզբունք 12. Ժամկետներ

Վարչական ընթացակարգերը, որոնք կարող են հանգեցնել անհատի իրավունքների կամ շահերի վրա ազդող որոշման, պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

#### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 7)
- ▶ Վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացման վերաբերյալ թիվ R (80) 2 առաջարկություն (Սկզբունքներ 5, 10)

#### Մեկնաբանություն

Պետական մարմինները պետք է որոշումներ կայացնեն ազգային իրավունքով սահմանված ժամկետներում կամ ողջամիտ ժամկետում՝ այդպիսով բոլոր կողմերի համար ապահովելով իրավական որոշակիություն: Եթե վարչական ընթացակարգը պետք է ընթանա փուլերով, ապա կարևոր է, որ յուրաքանչյուր փուլ ավարտվի հնարավորինս արագ և վերջնական որոշումը կայացվի գործընթացը սկսվելուց հետո ողջամիտ ժամկետում: Սկզբունքը կիրառվում է՝ անկախ այն հանգամանքից, թե՞ վարչական ընթացակարգը նախաձեռնել է հենց ինքը՝ պետական մարմինը, թե՞ անհատը: Ողջամիտ ժամկետը կախված է կայացվելիք որոշման բնույթից և դրան հաջորդող վարչական ընթացակարգից: Բոլոր դեպքերում, պետական մարմինների կողմից սահմանված ժամկետները պետք է արտացոլեն արդյունավետ վարչարարության սկզբունքները:

Եթե սահմանված ժամկետները նկարագրված են, դրանք կարող են վերաբերել վարչական ընթացակարգի յուրաքանչյուր փուլի, օրինակ՝ դիմումներ ներկայացնելուն, հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելուն կամ առաջարկվող որոշմամբ պետական մարմնից կամ շահագրգիռ այլ անձանցից ստացված հարցումներին պատասխանելուն: Պետական մարմիններին խրախուսելու համար, որպեսզի անհապաղ ձևով պատասխանեն անհատների պահանջներին, ազգային իրավունքով պետք է սահմանվի ժամկետ, որում

կկայացվի բացասական կամ դրական որոշում և կնախատեսվի ներքին կամ դատական վերանայում, եթե պետական մարմինը չարձագանքի պահանջին կամ որոշում չկայացնի:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաճախակի եզրակացրել է, որ այն դեպքում, երբ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարց է առաջանում, որը ներառում է մարդու այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսին է սեփականության իրավունքը, արդյունավետ վարչարարության սկզբունքը պահանջում է, որ պետական մարմինները գործեն անհապաղ և համապատասխան ու հետևողական ձևով: Տե՛ս, օրինակ՝ *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [*Beyeler v. Italy*] գործը, որում դիմումատուն պնդել է, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ հաստատելով, որ Իտալիայի իշխանությունները, խախտելով Կոնվենցիայով սահմանված պայմանները, յուրացրել են մի կտավ, որի օրինական սեփականատերը, ըստ իր պնդման, ինքն էր. տե՛ս նաև՝ *Օներյոլդզն ընդդեմ Թուրքիայի* [*Oneryildiz v. Turkey*] գործը, որում դիմումատուն բողոքել է, համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, որ իր հարազատները մահացել են աղբափոսի մոտ տեղի ունեցած վթարի հետևանքով, և որ նրանց մահվան հետ կապված որևէ արդյունավետ քննություն չի իրականացվել. *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*] գործում դիմումատուն բողոքել է, որ իրեն վաղաժամ կենսաթոշակի անցնելու իրավունքից զրկելը հանգեցրել է իրեն իր սեփականությունից ապօրինի զրկման. *Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի* [*Rysovskyy v. Ukraine*] (փաստերը նկարագրված են վերոհիշյալ Սկզբունք 5-ում). և *Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի* [*Dubetska and Others v. Ukraine*] գործը, որում դիմումատուները բողոքել են իրենց ընտանիքների և տների վրա արդյունաբերական աղտոտման բացասական հետևանքներից: Դատարանը վճռել է, որ դիմումատուներին հասանելի ընթացակարգային երաշխիքները կարող են դառնալ չգործող, իսկ պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել Կոնվենցիայի համաձայն, եթե որոշումների կայացման ընթացակարգն անհիմն երկար է կամ եթե կայացված որոշումը երկար ժամանակ չի կատարվում:

### Սկզբունք 13. Վարչական որոշումների ձևը և ծանուցումը

Վարչական որոշումները պետք է ձևակերպվեն պարզ, հստակ և հասկանալի ձևով: Դրանք պետք է ներառեն որոշման պատճառները և նշեն համապատասխան իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա որոշումները կայացվել են: Եթե որոշումը բացասաբար է ազդում անհատի իրավունքների կամ շահերի վրա, ապա այն պետք է պարունակի տեղեկություններ իրավական պաշտպանության հասանելի միջոցների և բողոքարկման ընթացակարգերի, ինչպես նաև համապատասխան ժամկետների վերաբերյալ:

Անհատները պետք է անձամբ ծանուցվեն որոշման մասին: Միայն բացառիկ հանգամանքներում, կամ եթե որոշումը վերաբերում է մեծ թվով անձանց, կարող են օգտագործվել հրապարակման ընդհանուր եղանակներ:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդվածներ 17, 18)
- ▶ Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկություն (Սկզբունք VI)
- ▶ Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության մասին (77) 31 բանաձև (Սկզբունք IV)

## Մեկնաբանություն

Վարչական որոշման ձևն ու ծանուցումը հատկապես կարևոր են պետական մարմինների կողմից ընդունված պաշտոնական որոշումների համատեքստում: Իրավական համակարգերի մեծ մասում պատշաճորեն չծանուցված վարչական որոշումը վավեր է, բայց քանի դեռ շահագրգիռ անձն անձամբ չի ծանուցվել, այն չի կարող իրավական հետևանքներ ունենալ նրա նկատմամբ:

Վարչական որոշումը պետք է պարունակի որոշման պատճառները, քանի որ դրանք հիմք են իրավասու վարչական կամ դատական մարմնի կողմից վերանայման համար: Պետական մարմինը պետք է սահմանի իր պատճառաբանությունը, ցույց տա, որ ինքը գործել է իրեն վերապահված օրինական լիազորությունների շրջանակներում և ցույց տա, որ որոշումը կայացվել է համապատասխան պատճառներով և ոչ թե կամայականորեն (տե՛ս վերևում I գլխում նախատեսված նյութաիրավական սկզբունքները):

Թեև որոշումը պետք է նաև բացատրի, թե ինչ իրավական պաշտպանության միջոցներ ու ընթացակարգեր են հասանելի շահագրգիռ անհատին, պարտադիր չէ, որ այն ներառի բոլոր հնարավոր հասանելի իրավական պաշտպանության միջոցներն ու ընթացակարգերը, ինչպիսիք են՝ սահմանադրական դատարան կամ օմբուդսմենին դիմելը:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Դը ժուֆրը դը լա Պդադելն ընդդեմ Ֆրանսիայի [De Geouffre de la Pradelle v. France]* գործը վերաբերում էր Պետական խորհրդի մատչելիության հարցին՝ վիճարկելու համար այն իրամանի օրինականությունը, որը բնութագրում էր տարածքը որպես չնաշխարհիկ գեղեցկություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի) խախտում, քանի որ Ֆրանսիայի պետական մարմինները

Նրան ծանուցել էին իրենց որոշման մասին միայն այն ժամկետի ավարտից հետո, որի ընթացքում կարող էր բողոք ներկայացվել:

«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի [Meltex Ltd and Movsesyan v. Armenia] գործը վերաբերում էր հեռարձակման լիցենզիա ձեռք բերելու վարչական ընթացակարգի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ լիցենզավորման գործընթացում լիցենզավորման չափորոշիչների կիրառման եղանակը պետք է կամայականության դեմ երաշխիքներ տրամադրի, և որ լիցենզավորող մարմինը հեռարձակման լիցենզիան մերժելիս պետք է ապահովի պատշաճ պատճառաբանություն:

## Սկզբունք 14. Վարչական որոշումների կատարումը

Անհատների իրավունքների կամ շահերի վրա ազդող վարչական որոշումները պետք է կատարվեն ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով համապատասխան բոլոր շահերը:

### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 20)
- ▶ Վարչական իրավունքի ոլորտում վարչական և դատական որոշումների կատարման վերաբերյալ Rec(2003)16 առաջարկություն (Սկզբունքներ 1.1, 1.2)

### Մեկնաբանություն

Սկզբունք 14-ը վերաբերում է վարչական որոշումների իրականացմանը: Վարչական իրավունքի որոշակի համակարգերում սովորաբար հղում է կատարվում պետական մարմնի կողմից ընդունված պաշտոնական վարչական որոշման «կատարմանը» կամ «կատարման ապահովմանը», այլ ոչ թե դրա իրականացմանը: Այլ համակարգերում կամ համատեքստերում առավել նպատակահարմար է պետական մարմնի որոշման «իրականացում» եզրույթը: Վարչական որոշման իրականացումը, կատարման ապահովումը կամ կատարումը (ներառյալ հարկադիր կատարումը) կարող է ինքնին պահանջել մեկ կամ մի քանի հետագա որոշումներ (ներառյալ՝ ֆիզիկական գործողությունները):

Պետական մարմիններն անհատներին պետք է տրամադրեն ողջամիտ ժամանակահատված՝ կատարելու համար վարչական որոշումներով նրանց վրա դրված պարտավորությունները՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի, ինչպիսի պարագայում նրանք պետք է պատշաճորեն ներկայացնեն դրա պատճառները: Այն դեպքերում, երբ որոշումն անհատին տալիս է իրավունքներ կամ օգուտներ, այն պետք է պետական մարմինների կողմից իրականացվի հնարավորինս շուտ: Դա չկատարելն ինքնին կարող է ենթակա լինել վերանայման (տե՛ս ստորև՝ Գլուխ IV): Եթե օրենքով այլ բան նախատեսված

չէ, ապա բողոք ներկայացնելն ինքնաբերաբար կասեցնում է որոշման իրականացումը կամ կատարումը՝ բողոքի արդյունքին սպասելու ընթացքում: Պետական մարմինների կողմից կայացված վարչական որոշումների իրականացումը կամ կատարումը պետք է ենթակա լինի տարբեր երաշխիքների, օրինակ՝ պետք է հստակ ամրագրված լինի օրենքով և լինի համաչափ: Վարչական որոշումները պետք է նաև հստակ սահմանեն այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն դրանց իրականացման կամ կատարման համար: Վարչական որոշումները չպետք է հետադարձ ուժ ունենան և չպետք է ուժի մեջ մտնեն ավելի վաղ, քան դրանց ընդունման կամ հրապարակման ամսաթիվը: Բացառիկ հանգամանքներում, որոշ երկրներ (ինչպես օրինակ՝ Ֆրանսիան) դատավորին հնարավորություն են տալիս թույլատրել վարչական որոշման հետադարձ կիրառումը՝ ազգային իրավունքով նախատեսված սահմաններում: Բացի հրատապ դեպքերից, վարչական որոշումներն ուժի մեջ են մտնում միայն այն ժամանակ, երբ դրանք պատշաճորեն հրապարակվում են: Վարչական որոշումը գործողության մեջ դնելու պատասխանատվությունը կրում է այդ որոշումը կայացրած պետական մարմինը:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի [Dubetska and Others v. Ukraine]* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը խախտվել է, *inter alia*, արդյունաբերական աղտոտումից տուժած տարածքից դիմումատուների ընտանիքներին տեղափոխելու մասին տեղական իշխանությունների որոշման կատարումը կառավարության կողմից ուշացնելու հետևանքով: *Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի [Agrokompleks v. Ukraine]* գործում դիմումատու ընկերությունը բողոքել է 1993 թվականին այլ ընկերության դեմ իր կողմից հարուցված պարտքերի վերականգնման վարույթների երկարության և ենթադրյալ անարդարության մասին, որոնք շարունակվել են մինչև 2004 թվականը: Այն նշել է, որ դատարանները խախտել են *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքը՝ վերագնահատելով այն պարտքի չափը, որը վերջնական դատական որոշմամբ սահմանվել էր որպես իրեն վճարման ենթակա գումար: Այն նաև պնդել է, որ գործը քննող դատարանները չէին կարող համարվել անաչառ կամ անկախ՝ հաշվի առնելով պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից նրանց վրա գործադրվող ինտենսիվ ճնշումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6.1 հոդվածի համաձայն «անկախ և անաչառ տրիբունալի» կողմից դատավարությունն ապահովելու մատով պետության պարտավորության շրջանակը չի սահմանափակվում միայն դատական համակարգով: Պարտավորություններ են դրվում նաև գործադիր, օրենսդիր և ցանկացած այլ պետական մարմնի վրա՝ հարգելու դատարանների վճիռներն ու որոշումները և հետևելու դրանց՝ նույնիսկ դրանց հետ համաձայն չլինելու դեպքում: Դատարանների հեղինակության նկատմամբ հարգանքն անփոխարինելի նախապայման է դատարանների նկատմամբ հանրության

վատահոլության և, ավելի լայն իմաստով, օրենքի գերակայության համար: Դատական համակարգի անկախության և անաչառության սահմանադրական երաշխիքներն ինքնին բավարար չեն. դրանք պետք է նաև արդյունավետորեն ներառվեն ամենօրյա վարչական դիրքորոշումների և գործելակերպերի մեջ: *Յորնսբին ընդդեմ Յունաստանի* [*Hornsby v. Greece*] գործում դիմումատուները բողոքել են, որ վարչական մարմինների կողմից Գերագույն վարչական դատարանի վճիռների կատարումը մերժելը խախտել է նրանց քաղաքացիական իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Դատարանը եզրակացրել է, որ վերջնական, կատարման ենթակա դատական որոշումը կատարելու համար անհրաժեշտ միջոցներ ավելի քան հինգ տարի շարունակ չձեռնարկելով՝ Յունաստանի իշխանությունները Կոնվենցիայի 6.1 հոդվածը զրկել են բոլոր օգտակար ազդեցություններից:

## Սկզբունք 15. Վարչական պատժամիջոցներ

Վարչական պատժամիջոցները սահմանվում են օրենքով և պետական մարմինների կողմից անհատների նկատմամբ կիրառվում են միայն հստակ սահմանված պայմանների շրջանակներում:

### Աղբյուրներ

- ▶ Վարչական պատժամիջոցների վերաբերյալ թիվ R (91) 1 առաջարկություն
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (հոդված 6)

### Մեկնաբանություն

Սկզբունք 15-ը կիրառվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել վարչական կանոնի խախտում, կամ երբ հնարավոր չի եղել կատարել վարչական որոշումը: Սա չի վերաբերում այն միջոցառումներին, որոնք պետական մարմինները պարտավոր են ձեռնարկել քաղաքացիական վարույթի կամ կարգապահական տույժերի արդյունքում, որոնք վարչական պատժամիջոցներ չեն համարվում:

Օրինակ՝ լիցենզիա տրամադրելու կամ այն թարմացնելու պահանջը մերժելն այն հիմքով, որ դիմումատուն այլևս չի բավարարում անհրաժեշտ պահանջները, չի համարվում վարչական պատժամիջոց: Ի տարբերություն պատժիչ լիսենյու հանգամանքի՝ լիցենզիան արգելելը կամ այն վերացնելը կարող է պայմանավորված լինել նոր օրենքներով, որոնք նախատեսված են, օրինակ, շրջակա միջավայրը կամ հանրության առողջությունը պաշտպանելու համար:

Վարչական պատժամիջոցները պետական մարմինների կողմից կարող են սահմանվել տուգանքի կամ ցանկացած այլ դրամական կամ ոչ դրամական միջոցների կիրառմամբ: Այնուամենայնիվ, վարչական պատժամիջոցներին դիմելը պետք է համապատասխանի ստորև նշված պայմաններին.

- i. Վարչական պատժամիջոցները պետք է սահմանված լինեն ազգային



իրավունքով և համաչափ լինեն իրական խախտմանը:

- ii. Վարչական պատժամիջոցի հանգեցնող վարչական ընթացակարգը պետք է ավարտվի ողջամիտ ժամկետում և ենթակա լինի «արդար դատաքննության» երաշխիքների, ներառյալ՝ վարույթը եզրափակող որոշումը: Պետական մարմինը պետք է սահմանի ինչպես վարչական կանոնի խախտումը, այնպես էլ դրա համար տվյալ անհատի պատասխանատվությունը:
- iii. Անհատը չի կարող նույն արարքի համար երկու անգամ ենթարկվել վարչական պատժամիջոցի՝ նույն սոցիալական կամ հանրային շահը պաշտպանող տարբեր կանոնների հիման վրա: Եթե նույն արարքն առանձին շահեր պաշտպանող կանոնների հիման վրա երկու կամ ավելի վարչական մարմինների գործողությունների տեղիք է տալիս, ապա նրանց կողմից պետք է հաշվի առնվեն մյուսների կողմից կիրառված պատժամիջոցները:
- iv. Վարչական պատժամիջոցներ չեն կարող կիրառվել անհատի կողմից կատարված այն արարքի առնչությամբ, որը կատարվելու պահին անօրինական չի եղել կամ չի հակասել համապատասխան վարչական կանոնին:
- v. Վարչական պատժամիջոց նախատեսող վարչական որոշման օրինականությունը ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված անկախ և անաչառ դատարանի կողմից:

Պետական մարմիններն իրավասու են ստեղծել վարչական պատժամիջոցների պատշաճ համակարգեր, որպեսզի ապահովեն անհատների կողմից իրենց որոշումների կատարումը: Որպեսզի հնարավոր լինի ապահովել, որ վարչական պատժամիջոցները կիրառվեն օրինականորեն, պետական մարմինների՝ պատժամիջոցներ կիրառելու լիազորությունը պետք է նախատեսված լինի օրենսդրությամբ: Օրենսդրությամբ պետք է նաև սահմանվի ֆինանսական պատժամիջոցների այն մակարդակը, որը կարող է պետական մարմինների կողմից կիրառվել հատուկ հանգամանքներում, և պետք է նախատեսվեն այն դեպքերը, երբ պատժամիջոցներով կարող է սահմանափակվել հիմնարար իրավունքների իրականացումը: Հայեցողական լիզորությունների շրջանակը կարող է սահմանել համապատասխան պետական մարմինը՝ որոշելու համար այն հատուկ հանգամանքները, որոնց դեպքում կարող են կիրառվել կոնկրետ պատժամիջոցները:

«Արդար դատաքննության» երաշխիքները, որոնք վարչական պատժամիջոց կիրառելու նախապայման են, արտացոլում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում պարունակվող պաշտպանության միջոցները և պետք է կիրառվեն ըստ անհրաժեշտության: Փոքր դրամական տույժեր ենթադրող մանր խախտումների դեպքում այդպիսի երաշխիքները կարող են ավելի ճկուն ձևով կիրառվել, եթե տվյալ անձը համաձայն է: Որոշ դեպքերում, մասնավորապես կայանման տուգանքների դեպքում, լավ և արդյունավետ վարչարարությամբ կարող է պահանջվել պարզեցված ընթացակարգերի կիրառում, նույնիսկ եթե շահագրգիռ անձը համաձայն չէ: Բացի դրանից, եթե պարզվում է, որ անհատը խախտել է որոշակի վարչական կանոն, և այդ խախտման համար նախատեսված պատժամիջոցները փոփոխվել են կամ փոխարինվել՝ նախքան համապատասխան տուգանքի

տեսակը կամ մակարդակը որոշելը, ապա նա պետք է իրավունք ունենա օգտվելու իր համար առավել բարենպաստ պատժամիջոցի մակարդակից կամ տեսակից:

Տուգանքներից բացի՝ վարչական պատժամիջոցների օրինակներ են գանձումների ավելացումը, ապրանքների բռնագանձումը, բիզնեսի փակումը կարգադրելը, մասնագիտական գործունեությամբ զբաղվելու արգելքը, կամ լիցենզիաների, թույլտվությունների կամ արտոնագրերի կասեցումը կամ վերացումը: Արդյոք որևէ կոնկրետ ակտ համարվում է վարչական պատժամիջոց, թե ոչ, պայմանավորված կլինի համապատասխան վարչական կանոններով:

Քրեական վարույթին վերաբերող՝ արդար դատաքննության երաշխիքները կկիրառվեն այն դեպքում, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարի, որ, չնայած վարույթների՝ որպես քաղաքացիական կամ վարչական ազգային դատակարգմանը, վարույթները, ըստ էության, պետք է համարվեն քրեական: Այս երաշխիքները պահանջում են, որ վարչական պատասխանատվության ենթարկված ցանկացած անձ, որն օրենք է խախտել, տեղեկացվի պատճառների, ինչպես նաև ապացույցների բնույթի մասին: Անձին պետք է տրամադրվի բավարար ժամանակ իր գործը նախապատրաստելու համար, պետք է ընձեռնվի հնարավորություն, որպեսզի անձը լսվի՝ նախքան ցանկացած որոշում կայացվելը, և պատժամիջոցը կիրառելու պատճառները (եթե այդպիսի որոշում կայացվի) պետք է սահմանվեն համապատասխան վարչական որոշման մեջ:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Ա. Մենարինի Դայգնոսթիքս Ս.ռ.լ.-ն ընդդեմ Իտալիայի [A. Menarini Diagnostics S.r.l. v. Italy]* գործում ԱԳԿՄ-ն (AGCM), որը մրցակցության համար պատասխանատու անկախ պետական մարմին էր, դիմումատու ընկերությանը տուգանել էր վեց միլիոն եվրոյով՝ շաքարախտի փստորոշման թեստերի շուկայում անարդար մրցակցության համար: Ընկերության կողմից այդ որոշման դեմ վարչական դատարան, Consiglio di Stato (Պետական խորհուրդ) և Վճռաբեկ դատարան ներկայացված բոլոր բողոքները մերժվել են: Հաշվի առնելով գործի գանազան ասպեկտները և դրանց համապատասխան կշիռը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարել է, որ դիմումատու ընկերության նկատմամբ կիրառված տուգանքը քրեական պատիժ էր, հետևաբար, կիրառելի էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6.1 հոդվածի քրեական տարրը: Այնուամենայնիվ, Դատարանն այս դրույթի խախտում չի արձանագրել, քանի որ վարչական որոշումը պատշաճ կերպով վերանայվել է լիարժեք իրավագործություն ունեցող դատական մարմինների կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն չափորոշիչները, որոնք կիրառվում են պարզելու համար, թե արդյոք մեղադրանքը քրեական բնույթ է կրում, թե ոչ, սովորաբար հայտնի են որպես «Էնգելի չափորոշիչներ», որոնք անվանվել են *Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների [Engel and Others v. the Netherlands]* գործի անունով, որում դիմումատուները բողոքել են

պարտադիր գինվորական ծառայությունն իրականացնելիս իրենց նկատմամբ կիրառված տարբեր կարգապահական տույժերի և միջոցների առնչությամբ: Առաջին չափորոշիչն ազգային իրավունքի համաձայն իրավախախտման իրավական դասակարգումն է, երկրորդը՝ իրավախախտման բուն եղթյունը, իսկ երրորդը՝ պատժի ծանրության աստիճանը, որը տվյալ անձը կարող է կրել: Երկրորդ և երրորդ չափորոշիչներն այլընտրանքային են, այլ ոչ պարտադիր կոմուլյատիվ: Այնուամենայնիվ, սա չի բացառում կոմուլյատիվ մոտեցումն այն դեպքում, երբ յուրաքանչյուր չափորոշիչի առանձին վերլուծությունը հնարավոր չի դարձնում քրեական մեղադրանքի առկայության հետ կապված հստակ եզրակացության գալը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության մասով պարտավորությունների նպատակներով դասակարգումը չի որոշվում ազգային դասակարգմամբ, չնայած որ ազգային դասակարգումը և իրավախախտման հիմնական բնույթը կարևոր գործոններ են:

## Գլուխ III

# Պետական մարմինների պատասխանատվությու- նը, փոխհատուցումը և իրավական պաշտպանության մյուս միջոցները

**Ս**ույն գլխում պարունակվող սկզբունքը վերաբերում է պետական մարմինների պատասխանատվությանը և նրանց գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված վնասի կամ կորստի համար փոխհատուցում տրամադրելու մասով նրանց վրա դրված պարտավորությանը:

Դատարանների միջոցով այն պետական մարմինների պատասխանատվությունը սահմանելու նպատակով անհատների համար գործողությունների կարգ ապահովելը, որոնք իրենց անօրինական կամ անզգուշությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով անհատներին պատճառել են վնաս կամ կորուստ (կամ սպառնացել են դա անել), օրենքի գերակայության վրա հիմնված հասարակության հիմնարար սկզբունք է: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջ է:

### Սկզբունք 16. Պատասխանատվություն և հատուցում

Պետական մարմիններն օրենքով պատասխանատվություն են կրում իրենց անօրինական կամ անզգուշությամբ կատարված գործողությունների կամ անգործության, և անհատների կողմից դրա հետևանքով կրած ցանկացած վնասի կամ կորստի համար: Պետական մարմինները պետք է լիարժեք հատուցեն այդպիսի ցանկացած վնաս կամ կորուստ՝ ներառյալ այն վնասներն ու կորուստները, որոնք պատճառվել են պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով, ինչպես նաև, ազգային իրավունքով սահմանված լինելու դեպքում՝ առանց մեղքի պատասխանատվության արդյունքում: Հատուցում տրամադրելու

վերաբերյալ դատական կարգադրությունները կամ վարչական որոշումները պետք է կատարվեն ողջամիտ ժամկետում:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 23)
- ▶ Հանրային պատասխանատվության վերաբերյալ թիվ R (84) 15 առաջարկություն
- ▶ Վարչական մարմինների և մասնավոր կողմերի միջև դատական քննության այլընտրանքների վերաբերյալ Rec(2001)9 առաջարկություն
- ▶ Պատարանների գերծանրաբեռնվածությունը կանխելու և նվազեցնելու միջոցների վերաբերյալ թիվ R (86) 12 առաջարկություն
- ▶ Արդարադատության մատչելիության խթանմանն ուղղված միջոցների վերաբերյալ թիվ R (81) 7 առաջարկություն
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (հոդված 13)
- ▶ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա (հոդված 5)

## Մեկնաբանություն

### Պատասխանատվությունը

Այս սկզբունքը վերաբերում է անօրինական կամ անզգուշությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով անհատին կորուստ կամ վնաս պատճառելու համար նրա նկատմամբ պետական մարմնի պատասխանատվությանը: Սկզբունքը չի տարածվում անհատների կողմից կրած այնպիսի կորստի կամ վնասի վրա, որոնք պատճառվել են հանցավոր գործունեության մեջ ներգրավված պետական պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով, և չի վերաբերում պաշտոնատար անձանց և պետական մարմինների միջև զբաղվածության հարցերին:

Պատասխանատվությունը ծագում է բոլոր այն դեպքերում, երբ անհատները տվյալ վնասը կամ կորուստը կրում են այն պատճառով, որ պետական մարմինը չի պահպանել վարքագծի այն չափանիշները, որոնք օրենքով ողջամտորեն ակնկալվում է, որ պետք է բավարարվեն: Այն դեպքում ևս, երբ պետական մարմինը չի գործել ո՛չ անօրինական կերպով, ո՛չ անզգուշորեն, ո՛չ էլ դրսևորել է այնպիսի վարքագիծ, ինչպիսին կարող էր ողջամտորեն ակնկալվել դրանից, ազգային իրավունքով կարող է պատասխանատվություն սահմանվել պետական մարմինների նկատմամբ, եթե ակնհայտ անարդար կլինի անհատների կողմից այն վնասը կամ կորուստ միայնակ կրելը, որը պատճառվել է պետական մարմնի գործողության կամ անգործության հետևանքով:

Պետական մարմինը պատասխանատվություն է կրում ֆիզիկական վնասի կամ ֆինանսական կորստի և, նույնիսկ, ոչ նյութական վնասի համար (օրինակ՝ հեղինակությանը հասցված վնաս), եթե դա նախատեսված է ազգային իրավունքով: Պետք է պետական մարմնի գործողության կամ անգործության և կրած վնասի կամ կորստի միջև առկա լինի ուղղակի պատճառահետևանքային կապ:

Վարքագծի այն չափանիշները, որոնք օրենքով կարող են ողջամտորեն ակնկալվել պետական մարմիններից պահպանելու նպատակով, կախված են նրանց գործառույթներից և նրանց տիրապետության ներքո առկա միջոցներից: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ բոլոր հնարավորությունները՝ կատարելու առաջադրանքների լայն շրջանակ և մեծ թվով ու բազմազան ծառայություններ մատուցելու համայնքին: Այդ ծառայությունների սահմանումը, շրջանակն ու բնույթը սահմանվում են օրենքով:

Առանց իրավական հիմքի և իր լիազորությունների սահմաններից դուրս գործող պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ անգործության հետևանքով անհատի կրած վնասը կամ կորուստը ևս կարող է հանգեցնել պետական մարմնի պատասխանատվությանը: Պետական մարմնի պատասխանատվությունն այս հանգամանքներում կախված կլինի պետական պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործառույթներից և նրա գործողությունների հանգամանքներից, մասնավորապես՝ այն հանգամանքից, թե արդյոք գործողությունները կամ անգործությունն այնպիսի բնույթ են կրել, որ տուժած անձին մոլորության մեջ են գցել՝ ստիպելով կարծել, թե պաշտոնատար անձը գործել է իր լիազորությունների շրջանակներում, և թե արդյո՞ք պետական մարմինը չի կարողացել բավարար վերահսկողություն իրականացնել պաշտոնատար անձի գործողությունների նկատմամբ կամ հստակ բացատրել պաշտոնատար անձի դերը տվյալ իրավիճակում: Որոշ իրավական համակարգեր տարբերակում են տվյալ պաշտոնատար անձի անձնական պատասխանատվությունը (*faute personnelle detachable*) և վարչական սխալը (*faute de service*), որի դեպքում պատասխանատու է պետական մարմինը:

Պետական մարմինները, որպես կանոն, պատասխանատվությունից ազատվում են *force majeure* (ֆորս մաժորային) իրավիճակներում, երբ ի հայտ են գալիս պետական մարմնի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներ, որոնք հաճախ անկանխատեսելի են և կարող են անխուսափելի հետևանքներ ունենալ: Պատասխանատվություն չի նախատեսվում նաև այն դեպքում, երբ վնասը կամ կորուստը պատճառվում է երրորդ կողմի կողմից՝ իրադարձությունների շղթայում նշանակալի միջամտության հետևանքով: Նման դեպքերում պատասխանատվությունը սովորաբար կրում է երրորդ կողմը:

Անհատի իրավունքներն ու իրավաչափ շահերը կարող են խախտվել, և կարող է պատճառվել վնաս կամ կորուստ ոչ միայն այն դեպքում, երբ պետական մարմինը գործում է անօրինականորեն կամ անզգուշորեն, կամ չի դրսևորում պատշաճ վարքագիծ, այլ նաև որոշակի այլ իրավիճակներում, օրինակ՝ երբ գործում է օրինականորեն, բայց ոչ պատշաճ կերպով: Այս դեպքերում պետք է սահմանվեն չափորոշիչներ որոշելու համար այն դեպքերը, թե երբ է վնասի կամ կորստի բեռը կրում միայն տուժած անձը և երբ է այդ

բեռը կրում համայնքը: Սոցիալական համերաշխության ընդհանուր ընդունված սկզբունքը պահանջում է, որ հանրությունն ընդունի անհարմարությունների, վնասների կամ կորուստների մի ամբողջ շարք՝ որպես հասարակության ամենօրյա կյանքի նորմալ հետևանք, որոնք չափազանց մեծ կամ լուրջ չեն և բնակչության վրա ազդում են որպես ամբողջություն: Եվ հակառակը, երբ վնասը կամ կորուստը չափազանց մեծ է կամ լուրջ, և տուժում է միայն մեկ անձ կամ մի քանի անհատներ կամ անհատների խմբեր, և անարդար կլինի, որ այդ անձինք կրեն վնասի կամ կորստի ամբողջ բեռը, ապա նրանք պետք է փոխհատուցում ստանան: Համապատասխանաբար, Հանրային պատասխանատվության վերաբերյալ թիվ R (84) 15 առաջարկությամբ անդամ պետություններից ակնկալվում է իրենց ազգային իրավունքում նախատեսել տուժած անձին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ կանոններ՝ բոլոր այն դեպքերում, երբ ակնհայտ անարդար կլիներ վնասի կամ կորստի բեռը նրա կողմից միայնակ կրելը:

Հանրային պատասխանատվության սկզբունքը չի պահանջում պետական մարմիններին վերաբերող օրենքի և ընթացակարգերի առանձին համակարգ՝ հատուկ հանրային կամ վարչական իրավունքի դատարաններով: Յուրաքանչյուր պետություն սկզբունքը կկիրառի իր իրավական համակարգին առավել նպատակահարմար ձևով: Որոշ պետություններում պետական մարմինները պետք է համապատասխանեն նույն կանոններին, որոնց ենթարկվում են անհատները, մինչդեռ այլ պետություններում պետական մարմինների նկատմամբ կիրառվում է պատասխանատվության առանձին համակարգ, քանի որ համարվում է, որ պետական մարմինների իրավական պարտականությունների հետ կապված անհրաժեշտ են հատուկ սկզբունքներ՝ հաշվի առնելու համար նրանց գործողությունների առանձնահատուկ բնույթը և այն փաստը, որ դրանք ձեռնարկվում են հանրային շահից ելնելով:

Հանրային պատասխանատվության վերաբերյալ հատուկ կանոններ կարող են կիրառվել որոշ անդամ պետություններում զինված ուժերի և հանրային որոշ ծառայությունների առնչությամբ, ինչպիսիք են՝ փոստային, հեռահաղորդակցման և տրանսպորտային ծառայությունները:

Ցանկացած պարագայում, պետական մարմինների պատասխանատվության վերաբերյալ կանոնները չպետք է տարբերակեն անհատներին՝ ազգային պատկանելության, սեռի, ռասայի, մաշկի գույնի, սոցիալական ծագման հիմքերով կամ որևէ այլ հիմքով:

## Հատուցումը

Պետական մարմինները, ընդհանուր առմամբ, պետք է լիարժեք հատուցեն անհատներին՝ պետական մարմինների թե՛ լիազորությունների սահմաններում, և թե՛ դրանցից դուրս վերջիններիս անօրինական կամ անզուգուղծությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով նրանց կրած վնասի կամ կորստի համար:

Ազգային իրավունքով կարող է պետական մարմինների համար սահմանվել պարտավորություն՝ հատուցելու այն վնասի կամ կորստի համար, որը չի առաջացել պետական մարմինների անօրինական կամ անզուգուղծությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով, սակայն ակնհայտ անարդար կլիներ, եթե տուժած անհատը միայնակ կրեր այդպիսի

վնասը կամ կորուստը: Այդպիսի դեպքերում հատուցումը կարող է մասնակի լինել՝ պայմանով, որ այն արդարացի է:

Երբ պետական մարմինը պատշաճ կերպով չի կատարում իր իրավական պարտականությունները, ինչը հանգեցնում է անհատի համար վնասի կամ կորստի, հատուցումը պետք է հասանելի լինի անհատի համար՝ անկախ այն պետական պաշտոնատար անձանց որևէ անձնական պատասխանատվությունից, որոնք կարող են պատճառած լինել վնասը կամ կորուստը:

«Հատուցում» եզրույթն այս համատեքստում նշանակում է պետական մարմինների գործողությունների կամ անգործության հետևանքով անհատի կողմից կրած ցանկացած վնասի կամ կորստի փոխհատուցման բոլոր հնարավոր ձևերը: Այն ներառում է փոխհատուցում՝ դրամական վճարման ձևով կամ այլ միջոցներով, որոնք ուղղված են փոխհատուցելու անհատին այն վնասի կամ կորստի համար, որը չի կարող ուղղակիորեն վերականգնվել: Այն նաև ներառում է ռեստիտուցիան (երբ պայմանագիրը չեղյալ է հայտարարվում, կամ վերականգնվում են նախքան պայմանագրի կնքումը գործող նախկին իրավունքները կամ արտոնությունները)՝ առանց մեղքի պատասխանատվության կամ պետական պաշտոնատար անձի կողմից կատարված կոռուպցիոն գործողության արդյունքում: Հատուցման բնույթը և ձևը կարող են տարբեր լինել և կսահմանվեն ազգային իրավունքով, ներառյալ՝ փոխհատուցվող վնասի տեսակները: Հատուցման մակարդակը կարող է նվազեցվել, կամ հատուցումը կարող է ամբողջությամբ մերժվել, եթե անհատը կամ այն անձը, որի համար անհատը պատասխանատու է ազգային իրավունքի համաձայն, նպաստել է պատճառված վնասին կամ կորստին կամ որի համար համարվում է բացառապես պատասխանատու:

«Լրիվ հատուցման» սկզբունքը նշանակում է, որ անհատին փոխհատուցվում է անօրինական կամ անզգուշությամբ կատարված գործողությամբ պատճառված բոլոր վնասների համար այնքանով, որքանով դրան կարող է տրվել դրամական արժեք և տրամադրվել պատշաճ փոխհատուցում: Շատ իրավական համակարգերում փոխհատուցումը ներառում է ինչպես անմիջական նյութական վնասը, այնպես էլ հետագա կորուստը:

«Արդարացի հատուցումը» սահմանվում է հետևյալ գործոնների հիման վրա. այն հանրային շահի բնույթը, որի պատճառով անհատը կրում է վնաս կամ կորուստ, դեպքի տարածվածությունը և գործողության բացառիկ լինելու աստիճանը կամ այն փաստը, որ պատճառված վնասը կամ կորուստը բացառիկ է եղել: Չինված ծառայությունների, ինչպես նաև փոստային, հեռահաղորդակցման և տրանսպորտային ծառայությունների համար հանրային պատասխանատվության հատուկ կանոնների դեպքում հատուցման մակարդակը պետք է լինի առնվազն համարժեք:

Այն դեպքերում, երբ անհատի կողմից կրած վնասը կամ կորուստը պատճառվել է պետական պաշտոնատար անձի կողմից, իրավական համակարգերը կտարբերվեն այն առումով, թե արդյոք անհատը կարող է ընտրել պահանջ ներկայացնել ընդդեմ գործատու-պետական մարմնի կամ ենթադրյալ պատասխանատու պետական պաշտոնատար անձի (կամ միաժամանակ երկուսի), կամ, թե արդյոք անհատը պետք է անպայմանորեն պահանջ ներկայացնի ընդդեմ պետական մարմնի (տվյալ մարմնի հայեցողությանը



թողնելով պաշտոնատար անձի նկատմամբ հետագայում միջոցներ ձեռնարկելը, եթե այն այդպես ցանկանա): Եվրոպայի խորհուրդն առաջարկում է այն փոխգիշումային լուծումը, որ պետությունները չպետք է խոչընդոտեն անհատին տվյալ պետական մարմնի նկատմամբ ուղղակիորեն վարույթ հարուցելու իր իրավունքի իրացման գործում. ընդ որում, ինչպես պետական մարմինը, այնպես էլ անհատը կարող են իրենց անձնական կարողության սահմաններում իրավական վարույթ հարուցել պետական պաշտոնատար անձանց նկատմամբ: Այնուամենայնիվ, եթե վնասը կամ կորուստն օրինական գործողության արդյունք է, ապա չպետք է լինի որևէ իրավական հիմք, որով պետական մարմինը պետք է հատուցի պետական պաշտոնատար անձի կողմից փոխհատուցման ենթակա այն գումարը, որը վերջինս վճարել է կամ կարգադրություն է ստացել վճարելու վնաս կրած անհատին:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի (ETS No. 174) անդամ պետություններից պահանջվում է համապատասխան ընթացակարգեր սահմանել փոխհատուցման այն պահանջների վերաբերյալ, որոնք ներկայացվում են պետության դեմ այն անձանց կողմից, որոնք վնաս կամ կորուստ են կրել իրենց գործառույթների իրականացման շրջանակներում գործող պետական պաշտոնատար անձանց կոռուպցիոն արարքի հետևանքով (5-րդ հոդված):

Հատուցման համար պետական մարմնի դեմ դատական հայց ներկայացնելու անհատի իրավունքը ենթակա չէ նախնական պարտադիր կամ կամավոր վարչական հաշտեցման ընթացակարգերի: Այնուամենայնիվ, ազգային իրավունքով կարող է նախատեսվել, որ անհատները նախքան այդպիսի հայց ներկայացնելը նախ պետք է փորձեն վեճը լուծել հաշտեցմամբ: Հաշտեցումը և վեճերի լուծման այլընտրանքային մյուս մեխանիզմները (միջնորդություն, բանակցությունների միջոցով կարգավորում և արբիտրաժ), որոնք նպատակաուղղված են հասնելու բարեկամական կարգավորումների՝ առանց ծախսատար դատական վարույթների անհրաժեշտության, իսկապես հստակ առաջարկվում են Եվրոպայի խորհրդի կողմից (տե՛ս ստորև՝ Սկզբունք 17): Եթե առկա են այդպիսի մեխանիզմներ, ապա դրանք չպետք է գործեն այնպես, որ կարողանան կանխել կամ խոչընդոտել անհատներին իրականացնել իրենց իրավաչափ իրավունքները կամ խոչընդոտել նրանց՝ իրենց գործերը դատարաններ ներկայացնել:

Դատարանի կարգադրությունները կամ վարչական որոշումները, որոնցով հատուցում է շնորհվում անհատին, ով կորուստ կամ վնաս է կրել պետական մարմինների պատճառով, պետք է կատարվեն ողջամիտ ժամկետում (տե՛ս վերևում՝ Սկզբունք 14): Վնաս կրած անհատին միշտ չէ, որ կարող է երաշխավորվել անհապաղ հատուցում, եթե այն պետական մարմնի կողմից առաջարկվում է *ex gratia* (կամավոր հիմունքներով): Որոշ ազգային համակարգերում հատուցման մասին որոշումը կարող է անհապաղ կատարվել, իսկ մյուս համակարգերում որոշման կատարումն առանձին հատուկ ընթացակարգ է, որը կարող է հետաձգման պատճառ դառնալ: Կարող են գոյություն ունենալ այլ գործնական խոչընդոտներ, որոնք կանխում են անհատների՝ ողջամիտ ժամկետում հատուցում ստանալը, օրինակ՝ պետական մարմիններին հասանելի միջոցների պակաս, պետական մարմինների անգործություն և որոշ ազգային համակարգերում գործող կանոններ, որոնք

խոչընդոտում են պետական մարմինների դեմ կայացված որոշումների կատարումը: Այս դժվարությունները հաղթահարելու նպատակով, Թիվ R (84) 15 առաջարկությամբ պահանջվում է, որ առանձին հատուկ ընթացակարգերը, եթե այդպիսիք առկա են, լինեն հեշտությամբ հասանելի և ոչ ժամանակատար, ինչպես նաև առաջարկվում է, որ պետական մարմիններն ունենան բավարար միջոցներ՝ փոխհատուցման կարգադրությունների պահանջները բավարարելու համար: Առանձին պետական պաշտոնատար անձանց անգործությունը կամ չարամիտ վարքագիծը կանխարգելելու համար որոշ ազգային համակարգեր նախատեսում են տվյալ պաշտոնատար անձանց անձնական պատասխանատվությունը՝ հատուցման վերաբերյալ դատական կարգադրությունները կամ վարչական որոշումները վերջիններիս կողմից ողջամիտ ժամկետում չկատարելու համար:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Դե Սոուզա Ռիբեյրոն ընդդեմ Ֆրանսիայի [De Souza Ribeiro v. France]* գործում դիմումատուն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածներով բողոք է ներկայացրել առ այն, որ ինքը ֆրանսիական իրավունքի համաձայն չի ունեցել իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց՝ դեպի Բրազիլիա իր արտաքսման հետևանքով իր մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին անօրինական միջամտության վերաբերյալ իր կողմից ներկայացված բողոքի առջևությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով՝ ազգային մարմիններն առաջնային պատասխանատվություն են կրում երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման և կատարման ապահովման համար: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունն ազգային մակարդակում՝ կոնվենցիոն իրավունքներն ու ազատություններն ըստ էության կիրառելու համար՝ անկախ այն բանից, թե ինչ ձևով են դրանք ապահովվում ներպետական իրավակարգում: Յետևաբար, սույն հոդվածի նպատակն է պահանջել տրամադրել իրավական պաշտպանության ներպետական միջոց, որը հնարավորություն կտա իրավասու ազգային մարմինն ինչպես գործ ունենալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխան «փաստարկելի բողոքի» հետ, այնպես էլ տրամադրել դատական պաշտպանության պատշաճ միջոց: Պայմանավորվող պետությունների՝ 13-րդ հոդվածի համաձայն պարտավորությունների շրջանակը փոփոխվում է՝ դիմումատուի բողոքի բնույթով պայմանավորված: Պետություններին տրվում է որոշակի հայեցողություն՝ կապված սույն դրույթի համաձայն իրենց պարտավորությունների կատարման եղանակի հետ: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվում է, որ իրավական պաշտպանության միջոցը լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության շրջանակներում: 13-րդ հոդվածի իմաստով իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը չի ենթադրում դիմումատուի համար անկասկած դրական արդյունք: Ինչպես նաև չի ենթադրում, որ այդ դրույթում նշված

«մարմինները» լինեն դատական մարմիններ: Այնուամենայնիվ, դրանց լիազորությունները և դրանց կողմից ապահովվող դատավարական երաշխիքները վերաբերելի են տրամադրվող իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը որոշելիս: Եթե տվյալ «մարմինը» դատական մարմին չէ, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գնահատում է դրա անկախությունը և դիմումատուին առաջարկված դատավարական երաշխիքները՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ մարմինն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է տրամադրել: Բացի այդ, նույնիսկ եթե իրավական պաշտպանության մեկ միջոցն ինքնին չի համապատասխանում 13-րդ հոդվածի պահանջներին, ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների ամբողջությունը կարող է ապահովել դա: Արդյունավետ լինելու համար 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է հասանելի լինի թե գործնականում, և թե օրենսդրության շրջանակներում, մասնավորապես այն առումով, որ դրանից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ: Բացի այդ, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ինքնին ուղղիչ գործողության արագությանը, քանի որ հասկանալի է, որ միջոցների պատշաճ բնույթը կարող է խաթարվել ավելորդ ձգձգմամբ: Տե՛ս նաև վերևում 5-րդ, 6-րդ և 12-րդ սկզբունքներում վկայակոչված՝ *Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի* [*Rysovskyy v. Ukraine*] գործը, ինչպես նաև *Ջաբարին ընդդեմ Թուրքիայի* [*Jabari v. Turkey*] գործը, որում թուրքական իշխանությունները հրաժարվել էին ըստ էության քննել դիմումատուի՝ ապաստան ստանալու համար ներկայացված պահանջը, քանի որ վերջինս պահանջը ներկայացրել էր ազգային օրենսդրությամբ սահմանված հնգօրյա ժամկետը լրանալուց հետո: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ ապաստանի դիմում ներկայացնելու համար այդպիսի կարճ ժամկետի ավտոմատ և մեխանիկական կիրառումը պետք է դիտարկել որպես հակասություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում ձևակերպված հիմնարար արժեքի պաշտպանությանը: Դատարանը նաև արձանագրել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմումատուն չի ունեցել իր արտաքսումը կասեցնող որևէ իրավական պաշտպանության միջոցի մատչելիություն:

## Գլուխ IV

# Վերանայումներ և բողոքներ

V գլխում սահմանվում են այն սկզբունքները, որոնք վերաբերում են պետական մարմինների որոշումների դեմ ներկայացված բողոքներին՝ ներառյալ պետական մարմինների կողմից իրենց սեփական նախաձեռնությամբ ընդունված որոշումները, օրինակ՝ այն որոշումները, որոնք վերաբերում են անհատների հարկային պարտավորություններին կամ հարկաբյուջետային այլ գանձումների կամ սոցիալական ապահովագրության վճարներին:

Այն հնարավորությունը, որը տրվում է անհատներին դիմելու պետական մարմինների կողմից ընդունված որոշումների վերանայման համար, թե՛ ժամանակակից ժողովրդավարական հասարակության և թե՛ արդյունավետ վարչարարության կարևոր տարրերից է: Դատարաններ ներկայացված բողոքները և վարչական ակտերի դատական վերանայումն օրենքի գերակայությամբ և իշխանությունների տարանջատմամբ ղեկավարվող պետության էական տարրերն են: 19-21-րդ սկզբունքները վերաբերում են, համապատասխանաբար, բողոքարկման իրավունքին, միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանությանը և դատական որոշումների կատարմանը: Այնուամենայնիվ, վերանայման մյուս ուղիները, որոնք ավելի արագ, մատչելի և պակաս ձևական են, հավասարապես կարևոր են անհատների համար, մասնավորապես՝ ներքին (կամ վարչական) վերանայումները, որոնք իրականացվում են հենց պետական մարմնի կողմից, և արտադատական կարգով վերանայումները, որոնք իրականացվում են օմբուդսմենի<sup>8</sup> կամ նմանատիպ ինստիտուտի կողմից: 17-րդ և 18-րդ սկզբունքներն առնչվում են վերանայման և բողոքարկման արտադատական այս ձևերին:

Վարչական որոշումների դեմ ներկայացվող բողոքների մոնիթորինգի վերաբերյալ գործնական ցուցումներ պարունակվում են Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի (Շվեդիա) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱԿԿ/ԺՅՄԻԳ) կողմից հրապարակված ձեռնարկում:<sup>9</sup> Ձեռնարկն ուղղված է դատավարության

8. Անգլերեն տարբերակում օգտագործվում է «օմբուդսպետրոն (օմբուդսպետրոններ)» եզրույթը, որը նախընտրվել է «օմբուդսմեն (օմբուդսմեններ)» եզրույթից, որն էլ կիրառվում է անգլերենով գրված սկզբնական փաստաթղթերում: «Օմբուդսպետրոն (օմբուդսպետրոններ)» եզրույթը ֆրանսերեն տեքստում օգտագործվում է լիովին համապատասխան եզրույթի բացակայության պատճառով, բացառությամբ այն դեպքերի, երբ (եթե համատեքստը թույլ է տալիս) օգտագործվում է «միջնորդ» (մեդիատոր) եզրույթը:
9. *Ձեռնարկ՝ վարչական արդարադատության մոնիթորինգի վերաբերյալ, 2013թ., ISBN 978-92-9234-871-7:*

մոնիթորինգ իրականացնող անձնակազմին, այդ թվում՝ մոնիթորինգի գործողությունների ղեկավարներին, դատական դիտորդներին, դատարանի անձնակազմին և հաշվետվություն ներկայացնող ծառայողներին: Ձեռնարկը կարող է օգտակար լինել այն անձանց համար («դատավարական դիտորդներ»), ովքեր շահագրգռված են ստեղծելու այնպիսի համակարգեր, որոնք հնարավորություն կտան մարդու իրավունքների չափանիշների տեսանկյունից արդյունավետորեն վերահսկել անհատների և պետական մարմինների միջև վեճերի վերաբերյալ դատական վարույթները:

## Սկզբունք 17. Ներքին վերանայում

Պետական մարմնի կողմից կայացված վարչական որոշման հետևանքով բացասական ազդեցություն կրած յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու այդ որոշման ներքին վերանայում:

### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդվածներ 22, 23.2)
- ▶ Վարչական մարմինների և մասնավոր կողմերի միջև դատական քննության այլընտրանքների վերաբերյալ Rec(2001)9 առաջարկություն

### Մեկնաբանություն

Ներքին վերանայման բնույթը պայմանավորված կլինի վերանայման ենթակա վարչական որոշման տեսակով: Այն պետք է իրականացվի պետական մարմնում գործող իրավասու անձանց կողմից: Ներքին վերանայումը կարող է լինել նախապայման՝ դատարան բողոք ներկայացնելու համար: Ներքին վերանայման համար պահանջն ինքնին պետք է կասեցնի դատարան բողոք ներկայացնելու ժամկետը: Անհատը պետք է գերծ լինի վարչական որոշումը բողոքարկելու կամ դրա ներքին վերանայման պահանջ ներկայացնելու համար պետական մարմնի կողմից որևէ նախապաշարումից:

Այն դեպքում, երբ դատարաններն իրավասու չեն գործն ըստ եռթյան վերանայելու կամ փոխարինելու որոշումը, երբ այդ որոշումը կայացվում է իր հայեցողության շրջանակներում գործող պետական մարմնի կողմից, հենց այդ պետական մարմնի վրա է դրվում իր գործողություններում առկա թերությունները շտկելը:

Ներքին վերանայման սկզբունքը հիմնված է այն ենթադրության վրա, որ ներքին վերանայումները նախորդում են դատական վարույթներին, և դա նախընտրելի տարբերակն է՝ չնայած, որ որոշ իրավական համակարգերում դատարան բողոք ներկայացնելու հետևանքով ներքին վերանայումը կասեցվում է այնքան ժամանակով, քանի դեռ դատարանը բողոքի առնչությամբ որոշում չի կայացրել:

I և II գլուխներում նկարագրված նյութափրավական և ընթացակարգային սկզբունքները կիրառվում են նաև ներքին վերանայումների նկատմամբ: Որոշ դեպքերում ներքին վերանայումը կարող է պետական մարմնի ներքին որոշումների կայացման գործընթացի մաս կազմել: Եթե ընթացակարգային սկզբունքները պահպանվել են այն ժամանակ, երբ կայացվել է նախնական որոշումը, վերանայումը կարող է կրճատել այդ ընթացակարգերը, եթե դրանով չեն սահմանափակվում անհատի իրավունքներն ու շահերը:

Կարևոր է տարբերակել հենց պետական մարմնում իրականացվող ներքին վերանայումները պաշտոնական վերանայման մարմիններից, որոնք այնպես են ստեղծված, որ անհատներն ունենան վարչական բողոքարկման հնարավորություն: Վերջինս պետք է անկախ լինի այն պետական մարմնից, որի որոշումը վիճարկվում է, և պետք է պահպանի 19-21-րդ սկզբունքները (դատական վերանայում և բողոքներ): Ներքին վերանայումները դատական քննության և դատական հայցի մի քանի այլընտրանքներից են՝ պետական մարմինների և անհատների միջև վեճերը լուծելու համար: Մյուս այլընտրանքներն են հաշտեցումը, միջնորդությունը, բանակցությունների միջոցով կարգավորումը և արբիտրաժը:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Ծֆայոն ընդդեմ Միացյալ Թագավորության [Tsfayo v. the United Kingdom]* գործում դիմումատուն բողոք է ներկայացրել Բնակարանային արտոնությունների վերանայման խորհրդի տեղական մարմին (HBRB)՝ ընդդեմ միևնույն տեղական մարմնի (Համերամիթի և Ֆուլիեմի Լոնդոն վարչական շրջան) այն որոշման, որով մերժվել է տեղական խորհրդի ժամկետանց հարկի և բնակարանային նպաստների վճարումը: Տեղական մարմինը մերժել էր տիկին Ծֆայոյի պահանջն առ այն, որ վերջինս չէր ստացել համապատասխան գրությունն իր նպաստների թարմացման վերաբերյալ: Նրա բողոքը մերժվել էր HBRB-ի կողմից, և հետագայում բարձր ատյանի դատարանը մերժել էր HBRB-ի որոշման դատական վերանայումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6.1 հոդվածով նախատեսված՝ տիկին Ծֆայոյի իրավունքների խախտում, քանի որ այն չի համարել, որ վերանայման խորհուրդն անկախ էր տեղական մարմնից և, հետևաբար, այն անաչառ չէր եղել իր գործընթացներում:<sup>10</sup>

### Սկզբունք 18. Արտադատական կարգով վերանայում

Անկախ ոչ դատական մարմինները լիազորված են վերանայելու վարչական որոշումների օրինականությունն ու արդարացիությունը:

10. *Իռլանդիայի մարդու իրավունքների հանձնաժողով, IHRC (2012թ.)*, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Ուղեցույց՝ քաղաքացիական և հանրային ծառայության վերաբերյալ:

## Աղբյուրներ

- ▶ Օմբուդսմենի ինստիտուտի վերաբերյալ թիվ R (85) 13 առաջարկություն
- ▶ Անդամ պետությունների օմբուդսմենների միջև, ինչպես նաև Նրանց և Եվրոպայի խորհրդի միջև համագործակցության վերաբերյալ (85) 8 բանաձև

## Մեկնաբանություն

Անկախ ոչ դատական մարմիններն այս սկզբունքի նպատակներով ներառում են օմբուդսմենների, խորհրդարանական հանձնակատարների, հանրային պաշտպանների, միջնորդների և նմանատիպ այլ մարմինների կամ անձանց, որոնք պատասխանատու են պետական մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունն ու արդարացիությունը վերանայելու համար: Նրանց դերը լրացնում է դատարանների դերը և զգալիորեն նպաստում անհատների պաշտպանությանը պետական մարմինների հետ Նրանց փոխհարաբերություններում:

Որպեսզի այդ մարմիններն իրենց դերն արդյունավետորեն կատարեն, կարևոր է, որ լիազորված լինեն ունենալու մատչելիություն պետական մարմինների կողմից պահվող՝ բանավոր և գրավոր բոլոր այն տեղեկություններին (համապատասխան նամակագրություն, հանդիպումների արձանագրություններ և մյուս բոլոր համապատասխան գրառումները), որոնք վերջիններս անհրաժեշտ են համարում: Այդ տեղեկությունները թույլ կտան Նրանց քննություններ նախաձեռնել, սահմանել իրենց սեփական աշխատանքային մեթոդները (այդ թվում՝ ոչ պաշտոնական ընթացակարգերը), եզրակացություններ տալ առանձին բողոքների վերաբերյալ, կարծիքներ հայտնել և առաջարկություններ ներկայացնել վարչական իրավունքում և գործելակերպում փոփոխություններ կատարելու համար: Պետական մարմինները պարտավոր են լիարժեք համագործակցել անկախ ոչ դատական մարմինների հետ: Միջազգային մակարդակում օմբուդսմենների, խորհրդարանական հանձնակատարների, միջնորդների և նմանատիպ գործառույթներ իրականացնող անձանց միջև համագործակցությունը հատկապես խրախուսվում է Եվրոպայի խորհրդի կողմից:

Կարևոր է նաև պահպանել հանրային վստահությունն այս անկախ մարմինների բարեվարքության, անաչառության և արդյունավետության նկատմամբ, որոնք գերադասելի է, որ առնվազն օմբուդսմենի դեպքում ընտրվեն խորհրդարանի կողմից: Օմբուդսմենի ինստիտուտը (որը հաճախ կոչվում է խորհրդարանական օմբուդսմեն, եթե տվյալ անձը Նշանակվել է խորհրդարանի կողմից) տարածվել է աշխարհի բոլոր հատվածներում գտնվող բազմաթիվ երկրներում: Փորձը ցույց է տալիս, որ օմբուդսմենի կարծիքները ոչ միայն ազդեցություն են ունենում առանձին դեպքերի վրա, երբ անհատը վիճարկում է որևէ վարչական ակտ կամ բողոք է ներկայացնում որևէ պետական պաշտոնատար անձի վարքագծի վերաբերյալ, այլ նաև կարող է կարևոր գործոն լինել վարչակազմի գործունեությունը և պետական պաշտոնատար անձանց վարքագիծը կարգավորող ընդհանուր սկզբունքների

և կանոնների բարելավման գործընթացում: Խորհրդարանի կողմից ընտրված օմբուդսմենը կարող է նաև նպաստել պետական մարմինների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ամրապնդմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը *Լեանդերն ընդդեմ Շվեդիայի* [*Leander v. Sweden*] գործում դիմումատուն, *inter alia*, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն բողոքել է առ այն, որ ոստիկանության գաղտնի մատյաններում տեղեկություններ են պարունակվել իր մասնավոր կյանքի վերաբերյալ, և ինքը հնարավորություն չի ունեցել հերքելու դրանք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի, եթե անհատը փաստարկելի պնդում է ներկայացնում առ այն, որը ինքը Կոնվենցիայով ամրագրված իրավունքների խախտման զոհ է, ապա նա պետք է ունենա պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք՝ ինչպես պահանջի առնչությամբ որոշում կայացվելու, այնպես էլ, համապատասխան դեպքերում, հատուցում ստանալու համար: 13-րդ հոդվածում նշված մարմինը պարտադիր չէ, որ լինի դատական մարմին, սակայն եթե այն դատական մարմին չէ, ապա վերջինիս լիազորություններն ու դրա կողմից տրվող երաշխիքները կարևոր են որոշելու համար, թե արդյոք իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ է:

## Սկզբունք 19. Բողոքարկման իրավունք

Յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա պահանջելու իր իրավունքների և շահերի վրա անմիջականորեն ազդող ցանկացած վարչական որոշման դատական վերանայում՝ ինչպես վիճարկվող որոշման էության, այնպես էլ օրինականության մասով:

## Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 22)
- ▶ Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ Rec(2004)20 առաջարկություն
- ▶ Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16 առաջարկություն (Սկզբունք VII)
- ▶ Արդարադատության մատչելիության խթանմանն ուղղված միջոցների վերաբերյալ թիվ R (81) 7 առաջարկություն
- ▶ Վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացման վերաբերյալ թիվ R (80) 2 առաջարկություն (Սկզբունքներ 9, 10, 11)
- ▶ Իրավաբանական օգնության և խորհրդատվության վերաբերյալ (78) 8 բանաձև



- ▶ Զաղաքացիական, առևտրային և վարչական հարցերով իրավաբանական օգնության վերաբերյալ (76) 5 բանաձև
- ▶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (հոդված 6)

## Մեկնաբանություն

Արդարադատության մատչելիության իրավունքը և արդար լուսմների իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության էական հատկանիշներ են: Օրենքի գերակայությունը նպատակաուղղված է ապահովելու, որ պետական մարմինների կողմից ցանկացած միջամտություն անհատների իրավունքներին ենթարկվի արդյունավետ վերահսկողության, որը սովորաբար ապահովվում է դատարանների կողմից: Դատական վերանայմամբ առաջարկվում են անկախության, անաչառության և պատշաճ ընթացակարգի լավագույն երաշխիքները:

Տարբեր պետությունների սահմանադրական ավանդույթներն ու իրավական համակարգերն առաջարկում են տարբեր լուծումներ այն տրիբունալների բնույթի առնչությամբ, որոնք կարող են վերանայել վարչական որոշումները: Զաղաքացիական իրավունքի ավանդույթի համաձայն՝ դրանք հիմնականում վարչական դատարաններն են, որոնց իրավագործությունը սահմանափակվում է վարչական իրավունքի հարցերով, և որոնք չունեն իրավագործություն մասնավոր դատական քննությունների մասով: Ընդհանուր իրավունքի երկրներում վարչական գործողությունների վերահսկումը իրականացվում է սովորական դատարաններում դատավորների կողմից, որոնց իրավագործությունն ընդգրկում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր իրավունքի հարցեր: Այնուամենայնիվ, երկու ավանդույթներն էլ ընդունում են օրենքով ստեղծված մասնագիտացված տրիբունալները, որոնք վարչական դատարանների ընդհանուր համակարգի կամ սովորական դատարանների համակարգի մաս չեն կազմում, և որոնք ունեն իրավագործություն, որը հատուկ սահմանափակվում է այնպիսի կոնկրետ հարցերով, ինչպիսիք են սոցիալական բարեկեցությունը, լիցենզավորումը, արտոնագրերը և վարչական որոշումների առնչությամբ՝ օրենքով նախատեսված փոխհատուցումը (ինչպես, օրինակ՝ օտարումը): Եթե այդպիսի տրիբունալների կազմը կամ գործունեությունը չի բավարարում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված պահանջները, ապա դրանց որոշումները պետք է բողոքարկվեն այն դատարաններում, որոնք իրոք առաջարկում են այդպիսի երաշխիքներ:

Վիճարկվող վարչական որոշման նկատմամբ բավարար հետաքրքրություն ունեցող բոլոր անձինք պետք է իրավունք ունենան մասնակցելու բողոքարկման գործընթացին: Մեծ թվով անձանց ներգրավմամբ դատական բողոքների դեպքում դատարանը կարող է, եթե դա նախատեսվում է օրենքով, և պատշաճորեն հաշվի առնելով տվյալ անձանց իրավունքներն ու շահերը՝ տարբեր քայլեր ձեռնարկել ընթացակարգն ավելի ռացիոնալ դարձնելու համար (ինչը, այսպիսով, դառնում է «կոլեկտիվ ընթացակարգ»): Սա կարող է ենթադրել, որ ընդհանուր շահեր ունեցող անձանցից կպահանջվի ընտրել մեկ կամ մի քանի ընդհանուր ներկայացուցիչներ, որոշել թեստային գործերը և հրապարակային հայտարարությամբ ծանուցել կարգադրությունների կամ

որոշումների մասին: Ավելին, բոլոր անձինք, առանց որևէ հիմքով խտրականության, պետք է իրավունք ունենան բողոք ներկայացնելու դատարան, և ֆինանսական միջոցների բացակայությունը չպետք է խոչընդոտ լինի արդարադատության մատչելիության համար:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6.1 հոդվածը չի ենթադրում, որ պետությունները պետք է տրամադրեն անվճար իրավաբանական օգնություն «քաղաքացիական իրավունքին» առնչվող յուրաքանչյուր վեճի համար: Հստակ տարբերակվում են 6.3(գ) հոդվածը, որը երաշխավորում է որոշակի պայմանների դեպքում քրեական վարույթներում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, և 6.1 հոդվածը, որը չի կատարում որևէ հղում իրավաբանական օգնությանը: Այնուամենայնիվ, Կոնվենցիան նախատեսված է պաշտպանելու իրավունքները՝ նպատակ ունենալով լինել գործնական և արդյունավետ, մասնավորապես դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ: Հետևաբար, 6.1 հոդվածը կարող է որոշ դեպքերում պահանջել, որ պետություններն անհատներին տրամադրեն փաստաբանի աջակցություն, երբ այդպիսի աջակցությունը պարտադիր է համարվում դատարանի արդյունավետ մատչելիության համար: Այն հարցը, թե արդյոք 6-րդ հոդվածով պահանջվում է իրավաբանական ներկայացուցչություն ասպահովել դատավարության մասնակից անհատի համար պետական մարմնի հետ ունեցած վեճի առնչությամբ, կախված կլինի յուրաքանչյուր գործով կոնկրետ հանգամանքներից: Պարզելու ենթակա հարցն այն է, թե արդյոք, հաշվի առնելով բոլոր հանգամանքները, իրավաբանական օգնության բացակայության պատճառով դիմումատուն կգրկվի արդար լուծման իրավունքից: Հետևաբար, կարող է լինել իրավաբանական օգնության համակարգ, որի միջոցով կընտրվեն այն գործերը, որոնք դեպքում այդպիսի իրավունք կապահովվի: Այնուամենայնիվ, օրենսդիր մարմնի կողմից սահմանված համակարգը պետք է անհատներին առաջարկի լուրջ երաշխիքներ՝ կամայականություններից նրանց պաշտպանելու համար:

Բողոքարկման իրավունքը կիրառվում է ցանկացած պետական մարմնի կողմից ընդունված վարչական որոշումների նկատմամբ՝ անկախ դրանց բովանդակությունից: Այնուամենայնիվ, կան որոշ սահմանափակումներ՝ կապված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառման հետ, քանի որ այն սահմանափակվում է «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» սահմանմամբ: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ *Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի [Ringelsen v. Austria]* գործով վճռից ի վեր աստիճանաբար ընդլայնել է այն, թե ինչ է ընդգրկվում սույն հայեցակարգում՝ անհատների և պետական մարմինների միջև վեճերի համատեքստում՝ 6-րդ հոդվածի նպատակներով, առկա են վեճեր, որոնք դուրս են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակից:

Լայն իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կկիրառվի հանրային իրավունքի վարույթների նկատմամբ, որոնք «վճռորոշ» դեր են խաղում անհատների իրավունքներն ու պարտականությունները որոշելիս՝ անկախ այն բանից, թե դրանք ունեն նյութական թե մասնավոր բնույթ (օրինակ՝ հողօգտագործում, շինարարության թույլտվություններ, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու լիցենզիաներ, կարգապահական վարույթներ), ներառում են

սոցիալական իրավունքներ (օրինակ՝ ներդրումային և ոչ ներդրումային սոցիալական ապահովության նպաստներ), թե վերաբերում են անձնական բնույթի անհատական իրավունքների (օրինակ՝ կյանքի, առողջության կամ առողջ միջավայրի իրավունք, երեխաների խնամք, ուսումնառությանն առնչվող կարգավորումներ, բանտարկյալների իրավունքների սահմանափակումներ, անդամակցություն միավորմանը կամ դրա գրանցում, վարչական փաստաթղթերի մատչելիություն):

Իրենց գործատու-պետական մարմնի հետ ունեցած վեճի պարագայում պետական պաշտոնատար անձինք նույնպես պետք է օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության երաշխիքներից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս ազգային օրենսդրությամբ հստակորեն գրկվել են դատարանի մատչելիության իրավունքից, և պետական պաշտոնատար անձը կամ մասնակցում է պետական իշխանության իրականացմանը, կամ գոյություն ունի «վստահության և հավատարմության հատուկ կապ» պետական պաշտոնատար անձի և պետության միջև՝ որպես իր գործատուի (*Վիլհո Էսկելինեն և այլք ընդդեմ Ֆինլանդիայի [Vilho Eskelinen and Others v. Finland]*): Պետական մարմինների բացառիկ իրավունքներին վերաբերող վեճերը, ինչպիսիք են հարկումը, ներգաղթի քաղաքականությունը, քաղաքացիական ծառայությունը (եթե այն ընդգրկվում է նախկինում նշված թեստում), ինչպես նաև քաղաքական և ընտրական իրավունքները, դուրս կմնան 6-րդ հոդվածի շրջանակից:

6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության երաշխիքներով պահանջվում է, որ վարչական որոշման բողոքարկման վարույթն իրականացվի անկախ և անաչառ տրիբունալի կողմից, լսվի հրապարակային կարգով (ենթարկվի սահմանափակումների պետական քաղաքականության, ազգային անվտանգության, երեխաների շահերի, մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմքերով կամ, եթե դա խիստ անհրաժեշտ է՝ ելնելով արդարադատության շահերից), ինչպես նաև ապահովի, որ որոշումներն ընդունվեն ողջամիտ ժամկետում, հանրորեն հրապարակվեն և բնույթով լինեն մրցակցային: Դրանցով պետք է նաև ապահովվեն կողմերի հավասարություն, ապացույցների բացահայտում և անհատների անձնական ներկայություն, որը նրանց հնարավորություն կտա մասնակցելու վարույթին (անհրաժեշտության դեպքում):<sup>11</sup>

Կարևոր է նշել, որ վարչական որոշման դատական վերանայումն առաջին ատյանում իրականացվող դատական լսում է, այլ ոչ թե ստորադաս դատարանի որոշման դեմ բողոքարկման գործընթաց, ուստի կիրառվում են 6-րդ հոդվածի բոլոր պահանջները:

Բողոքը կարող է ներկայացվել վարչական կամ քաղաքացիական դատարան և պետք է հնարավորություն տա վերանայելու վիճարկվող որոշման և՛

11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի այն սկզբունքների խտացված ամփոփ շարադրանքի համար, որոնք վերաբերում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության երաշխիքներին և ուղղված են գործող փաստաբաններին, տե՛ս նաև Վիտկաուսկաս Դ. և Դիկով Գ. (2012 թվական), *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված արդար դատաքննության իրավունքի պաշտպանություն*, Եվրոպայի խորհուրդ, 2012թ.:

Եռթյունը, և՛ օրինականությունը, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների իրականացման ընթացքում ընդունված որոշումները: Ընդհանուր առմամբ ընդունված է, որ պետական մարմինն չի կարող դատական կարգով պարտադրվել իրականացնել որևէ լիազորություն, որը զուտ հայեցողական է: Այնուամենայնիվ, պետական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների իրականացման դատական վերանայումն ապահովում է, որ այդպիսի լիազորություններն իրականացվեն օրենքով սահմանված շրջանակներում և նպատակներով:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Թաշքեր և այլք ընդդեմ Թուրքիայի [Taşkın and Others v. Turkey]* գործում (տե՛ս 9-րդ սկզբունքում ներկայացված փաստերը) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետական մարմինները բնապահպանական և տնտեսական քաղաքականության բարդ հարցեր որոշելիս պետք է ապահովեն, որ որոշումների կայացման գործընթացում հաշվի առնվեն այն անհատների իրավունքներն ու շահերը, որոնց՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված իրավունքները կարող են շոշափվել: Եթե այդ անհատները համարեն, որ որոշումների կայացման գործընթացում բավարար չափով հաշվի չեն առնվել իրենց շահերը, ապա նրանք պետք է հնարավորություն ունենան դիմելու դատարան: *Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի [Klass and Others v. Germany]* գործում (տե՛ս 7-րդ սկզբունքում ներկայացված փաստերը) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ օրենքի գերակայությունը ենթադրում է, *inter alia*, որ գործադիր մարմինների կողմից միջամտությունն անհատի իրավունքներին պետք է ենթարկվի արդյունավետ վերահսկողության, ինչը սովորաբար պետք է ապահովվի դատարանների կողմից՝ առնվազն որպես վերջին միջոց: Դատական վերահսկողությունն ապահովում է անկախության, անաչառության և պատշաճ ընթացակարգի լավագույն երաշխիքը:

*Էյրին ընդդեմ Իռլանդիայի [Airey v. Ireland]* գործում դիմումատուն բողոքել է, որ ինքը չի ունեցել դատարանի արդյունավետ մատչելիություն, քանի որ Իռլանդիայում իրավաբանական օգնություն չէր նախատեսվում ոչ քրեական գործերի համար, և ինքը չի կարողացել վարձել փաստաբան՝ իրեն ամուսնալուծության վարույթում ներկայացնելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ, որն իրավաբանական օգնություն է նախատեսում ոչ քրեական գործերի համար, իսկ 6.3.(գ) հոդվածը վերաբերում է միայն քրեական վարույթներին: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 6.1 հոդվածով երբեմն պետություններին կարող է պարտավորեցվել տրամադրել փաստաբանի աջակցություն այն դեպքում, երբ այդպիսի աջակցությունն անհրաժեշտ է համարվում դատարանի արդյունավետ մատչելիության համար՝ իրավաբանական ներկայացուցչության պարտադիր լինելու կամ գործի կամ վարույթի բարդության պատճառով: *Փի-ն, Սի-ն և Էս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [P, C. and S. v. the United Kingdom]* գործում, որում դիմումատուները բողոքել են երեխաների խնամքին վերաբերող դատական վարույթում իրավաբանական ներկայացուցչության

բացակայությունից, Դատարանը գտել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել իրավաչափ սահմանափակումների: Այդպիսի սահմանափակումներն անհամատեղելի չեն լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե դրանք չեն խաթարում իրավունքի բուն էությունը, եթե հետապնդում են իրավաչափ նպատակ, և եթե առկա է համաչափության ողջամիտ հարաբերակցություն օգտագործված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Հնարավոր է, որ արդարադատության իրականացմանը վերաբերող այլ գործոններ (ինչպիսիք են հարցի հրատապությունը կամ այլ անձանց իրավունքները) նույնպես սահմանափակող դեր խաղան կոնկրետ գործում աջակցության տրամադրման հարցում՝ չնայած, որ այդպիսի պատճառները նույնպես պետք է բավարարեն վերը նշված թեստերի պահանջները:

## Սկզբունք 20. Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանություն

Դատարանները և վարչական տրիբունալները լիազորված են տրամադրելու միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանություն՝ մինչև վարչական որոշման դեմ ներկայացված բողոքի լուծումը:

### Աղբյուր

- ▶ Վարչական հարցերում ժամանակավոր դատական պաշտպանության վերաբերյալ թիվ R (89) 8 առաջարկություն

### Մեկնաբանություն

Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանությունն այն կարևորագույն միջոցներից մեկն է, որի միջոցով անհատին կարող է երաշխավորվել պետական մարմնի դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ այն պահպանում է (կամ վերականգնում է) ստատուս-քվոն իր օգտին մինչև բողոքարկման արդյունքը: Սա կարևոր է, քանի որ նույնիսկ դատական համակարգերի առավել արդյունավետության պայմաններում շատ գործերի բարդությունը հանգեցնում է զգալի հետաձգման՝ մինչև բողոքի լուծումը: Հետևաբար, վարչական որոշման կասեցումը կամ մինչև բողոքարկման արդյունքը դրա կատարումը սահմանափակող կարգադրությունը կարևոր է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների համակարգի համար:

Այդպիսի պաշտպանությունը կարող է տրամադրվել վարչական որոշման կատարումը (ամբողջությամբ կամ մասնակիորեն) կասեցնելու, մինչև վարչական որոշումն իրավիճակի վերականգնումը (ամբողջությամբ կամ մասնակիորեն) կարգադրելու կամ ցանկացած այլ կարգադրության ձևով, որը համապատասխանում է գործի հանգամանքներին և դատարանի կամ վարչական տրիբունալի լիազորությունների սահմաններում է:

Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանության սկզբունքը կիրառվում է հատկապես այն դեպքերում, երբ անհատը կրելու է լուրջ վնաս կամ կորուստ, որը պետական մարմինը դժվարանալու է փոխհատուցել, եթե բողոքարկումը հաջող պարտ ունենա:

Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանությունն անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ վարչական որոշումը ենթակա է անհապաղ կատարման կամ արդեն կատարվել է: Ցանկացած պահանջ, որի կատարումը հետաձգվում, սահմանափակվում կամ փոփոխվում է այն անհատի առկաությամբ, որն այն վիճարկում է, պետք է, հետևաբար, ուսումնասիրվի արագորեն: Սա նշանակում է, որ ստանդարտ դատավարական ժամկետները կարող են զգալիորեն կրճատվել, իսկ ամբողջական լուծմները՝ սահմանափակվել: Վարույթը, այնուամենայնիվ, պետք է շարունակի լինել մրցակցային, որի նպատակը տարբեր մրցակցող շահերի միջև, չնայած ժամանակավորապես, հաշտեցման հասնելն է: Վարույթում պետք է ներգրավվեն դիմումատուն և պետական մարմնի ներկայացուցիչը, ինչպես նաև վիճարկվող վարչական որոշման հետևանքով անմիջական ազդեցություն կրած ցանկացած այլ կողմ: Այլ անձանց, որոնք չեն կրել անմիջական ազդեցություն, կարող է թույլատրվել ներկայացնել իրենց տեսակետները, սակայն անպայման չէ, որ վերջիններս կանչվեն դատարան: Եթե հրատապությունը պահանջում է, որ դիմումը լսվի *ex parte* (այսինքն՝ միայն բողոք բերողի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ), և դատարանը որոշում է ժամանակավոր պաշտպանության վերաբերյալ կարգադրություն անել, ապա այն պետք է լինի միայն ժամանակավոր կարգադրություն, մինչև դրանից հետո հնարավորինս շուտ կկազմակերպվի լուծմ ներգրավված բոլոր կողմերի մասնակցությամբ:

Ժամանակավոր պաշտպանության կարգադրություն անելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է գնահատի անհատի շահերը՝ նախնական գոյություն ունեցող իրավիճակը պահպանելու առումով՝ ի հակադրություն հանրային շահի և երրորդ կողմերի շահերի՝ վարչական որոշումը կատարելու առումով: Համապատասխան գործոնները պետք է ներառեն պատճառված վնասի կամ կորստի աստիճանը, պատճառված ցանկացած վնասի կամ կորստի համար փոխհատուցման հնարավորությունը և բողոքի՝ հաջողությամբ լուծվելու հեռանկարները (օրինակ՝ անհատից պահանջելով ապահովել *prima facie* (առերևույթ) ապացույցներով կամ լավ հիմնավորված գործ՝ առանց նախօրոք դատելու բողոքարկման արդյունքի մասին): Դատարանը կարող է պայմաններ սահմանել ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ կարգադրության մեջ և այն կարող է հետագայում փոփոխել այդ կարգադրությունը:

## Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

*Ռուսկն ընդդեմ Շվեդիայի [Rousk v. Sweden]* գործում դիմումատուի բնակարանը վաճառվել էր հանրային աճուրդում՝ հարկային մարմինների որոշմանը համապատասխան, մինչդեռ դիմումատուի բողոքն ընդդեմ այդ որոշման դեռևս դատարանում քննվում էր: Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանը գտել է, որ տեղի է ունեցել դիմումատուի իրավունքների խախտում՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, քանի որ իշխանությունները հրաժարվել են հետաձգել վարչական որոշման կատարումը՝ մինչև դրա դատական վերանայման ավարտը: Դատարանը գտել է, որ այս իրավիճակը չափազանց ծանր բեռ է առաջացրել դիմումատուի համար:

## Սկզբունք 21. Դատական որոշումների կատարում

Պետք է ստեղծվի իրավական դաշտ՝ ապահովելու, որ պետական մարմինները ողջամիտ ժամկետում իրականացնեն դատական կարգադրությունները՝ ներառյալ փոխհատուցման վճարման վերաբերյալ կարգադրությունները:

### Աղբյուրներ

- ▶ Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7 առաջարկություն (հոդված 23.3)
- ▶ Վարչական իրավունքի ոլորտում վարչական և դատական որոշումների կատարման վերաբերյալ Rec(2003)16 առաջարկություն (Սկզբունքներ II.1, II.2)

### Մեկնաբանություն

Եթե պետական մարմինը չի կատարել դատական կարգադրությունը, որը կայացվել է անհատի կողմից հաջողված բողոքարկման արդյունքում, ապա պետք է իրականացվի համապատասխան ընթացակարգ՝ դրա պատշաճ կատարումն ապահովելու համար (*Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի [Agrokompleks v. Ukraine]*): Փոխհատուցման վերաբերյալ կարգադրությունները պետք է կատարվեն ողջամիտ ժամկետում (տե՛ս վերևում՝ Սկզբունք 16): Ազգային իրավունքով պետք է նաև սահմանվի դրույթ, համաձայն որի՝ վարչական որոշումների վերաբերյալ դատական որոշումների իրականացման համար պատասխանատու պետական պաշտոնատար անձինք այդ որոշումները չիրականացնելու դեպքում անհատապես կենթարկվեն պատասխանատվության՝ կարգապահական, քաղաքացիական կամ քրեական վարույթի շրջանակներում:

### Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Տե՛ս *Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի [Agrokompleks v. Ukraine]* գործը, որը վկայակոչվել է 14-րդ սկզբունքի առնչությամբ:

## Հավելված I

# Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերը, որոնք առնչվում են սույն ձեռնարկում նշված սկզբունքներին

---

### Կոնվենցիաներ

**«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (ETS No. 5)** (նաև կոչվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա)

Արդար դատաքննության իրավունք (հոդված 6)

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք (հոդված 8)

Արտահայտվելու ազատություն (հոդված 10)

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք (հոդված 13)

Խտրականության արգելում (հոդված 14)

**«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի արձանագրություն (ETS No. 9)**

Սեփականության պաշտպանություն (հոդված 1)

Կրթության իրավունք (հոդված 2)

Ազատ ընտրությունների իրավունք (հոդված 3)

**«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 12 արձանագրություն (ETS No. 177)**

Խտրականության համընդհանուր արգելումը (հոդված 1)

**«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա (ETS No. 108)**

Առարկան և նպատակը (հոդված 1)

Սահմանումներ (հոդված 2)

Գործողության ոլորտը (հոդված 3)



Կողմերի պարտականությունները (հոդված 4)

Տվյալների որակը (հոդված 5)

Տվյալների հատուկ կատեգորիաները (հոդված 6)

Տվյալների անվտանգությունը (հոդված 7)

Տվյալների սուբյեկտների լրացուցիչ երաշխիքները (հոդված 8)

Բացառությունները և սահմանափակումները (հոդված 9)

Պատժամիջոցները և պաշտպանության միջոցները (հոդված 10)

Առավել լայն պաշտպանությունը (հոդված 11)

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրություն (CETS No. 223)<sup>12</sup>

### **Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (ETS No. 148)**

Վարչական մարմինները և հանրային ծառայությունները (հոդված 10)

### **«Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիա (ETS No. 157)**

Խտրականության արգելքը, լիակատար և արդյունավետ հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումները (հոդված 4)

Փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ հաղորդելու իրավունքը (հոդված 9)

Մասնավոր կյանքում և հանրային վայրերում փոքրամասնության լեզուն կիրառելու իրավունքը (հոդված 10.1)

Փոքրամասնության լեզվի կիրառումը վարչական մարմինների հետ հարաբերություններում (հոդված 10.2)

### **Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա (ETS No. 174)**

Նպատակը (հոդված 1)

Կոռուպցիայի սահմանումը (հոդված 2)

Վնասի փոխհատուցումը (հոդված 3)

Պետության պատասխանատվությունը (հոդված 5)

Չայցվորի մեղքը (հոդված 6)

Չայցային վաղեմություն (հոդված 7)

Պայմանագրերի վավերականությունը (հոդված 8)

Ժամանակավոր միջոցները (հոդված 12)

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (CETS No. 205)<sup>13</sup>

Ընդհանուր դրույթներ (հոդված 1)

12. Հրապարակման պահին ուժի մեջ չէ:

13. Հրապարակման պահին ուժի մեջ չէ:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը (հոդված 2)

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հնարավոր սահմանափակումները (հոդված 3)

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության համար հարցումը (հոդված 4)

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության համար ներկայացված հարցմանն ընթացք տալը (հոդված 5)

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության ձևերը (հոդված 6)

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության համար գանձվող վճարները (հոդված 7)

Բողոքարկման ընթացակարգը (հոդված 8)

Լրացուցիչ միջոցառումներ (հոդված 9)

Պետական մարմինների նախաձեռնությամբ հրապարակված փաստաթղթերը (հոդված 10)

## Նախարարների կոմիտեի առաջարկությունները և բանաձևերը

(հակադարձ ժամանակագրական կարգով)

**«Անձնական տվյալների մշակումը զբաղվածության համատեքստում»**

Նախարարների կոմիտեի կողմից 2015 թվականի ապրիլի 1-ին Նախարարների տեղակալների 1224-րդ նիստում ընդունված CM/Rec(2015)5 առաջարկություն

**«Անհատների պաշտպանությունը պրոֆիլավորման համատեքստում անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում»**

Նախարարների կոմիտեի կողմից 2010 թվականի նոյեմբերի 23-ին Նախարարների տեղակալների 1099-րդ նիստում ընդունված CM/Rec(2010)13 առաջարկություն

**«Արդյունավետ վարչարարություն»**

Նախարարների կոմիտեի կողմից 2007 թվականի հունիսի 20-ին Նախարարների տեղակալների 999-րդ նիստում ընդունված CM/Rec(2007)7 առաջարկություն

**«Տեղական և տարածաշրջանային հանրային ծառայություններ»**

Նախարարների կոմիտեի կողմից 2007 թվականի հունվարի 31-ին Նախարարների տեղակալների 985-րդ նիստում ընդունված CM/Rec(2007)4 առաջարկություն

**«Վարչական ակտերի դատական վերանայում»**

Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի դեկտեմբերի 15-ին Նախարարների տեղակալների 909-րդ նիստում ընդունված Rec(2004)20 առաջարկություն

**«Վարչական իրավունքի ոլորտում վարչական և դատական որոշումների կատարումը»**

Նախարարների կոմիտեի կողմից 2003 թվականի սեպտեմբերի 9-ին Նախարարների տեղակալների 851-րդ նիստում ընդունված Rec(2003)16 առաջարկություն

**«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 2002 թվականի փետրվարի 21-ին Նախարարների տեղակալների 784-րդ նիստում ընդունված Rec(2002)2 առաջարկություն

**«Վարչական մարմինների և մասնավոր կողմերի միջև դատական քննության այլընտրանքներ»**

Նախարարների կոմիտեի կողմից 2001 թվականի սեպտեմբերի 5-ին Նախարարների տեղակալների 762-րդ նիստում ընդունված Rec(2001)9 առաջարկություն

**«Պետական պաշտոնատար անձանց կարգավիճակը Եվրոպայում»**

Նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի փետրվարի 24-ին Նախարարների տեղակալների 699-րդ նիստում ընդունված Թիվ R (2000) 6 առաջարկություն

**«Վիճակագրական նպատակներով հավաքված և մշակված անձնական տվյալների պաշտպանություն»**

Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի սեպտեմբերի 30-ին Նախարարների տեղակալների 602-րդ նիստում ընդունված Թիվ R (97) 18 առաջարկություն

**«Տեղական հանրային ծառայությունները և դրանցից օգտվողների իրավունքները»**

Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի ապրիլի 1-ին Նախարարների տեղակալների 587-րդ նիստում ընդունված Թիվ R (97) 7 առաջարկություն (թարմացվել է CM/Rec(2007)4 առաջարկությամբ)

**«Բժշկական տվյալների պաշտպանությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի փետրվարի 13-ին Նախարարների տեղակալների 584-րդ նիստում ընդունված Թիվ R (97) 5 առաջարկություն

**«Անձնական տվյալների պաշտպանությունը հեռահաղորդակցական ծառայությունների ոլորտում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հեռախոսային ծառայություններին»**

Նախարարների կոմիտեի կողմից 1995 թվականի փետրվարի 7-ին Նախարարների տեղակալների 528-րդ նիստում ընդունված Թիվ R (95) 4 առաջարկություն

**«Պետական մարմինների կողմից պահվող անձնական տվյալների հաղորդումը երրորդ կողմերին»**

Նախարարների կոմիտեի կողմից 1991 թվականի սեպտեմբերի 9-ին Նախարարների տեղակալների 461-րդ նիստում ընդունված Թիվ R (91) 10 առաջարկություն

**«Վարչական պատժամիջոցներ»**

Նախարարների կոմիտեի կողմից 1991 թվականի փետրվարի 13-ին Նախարարների տեղակալների 452-րդ նիստում ընդունված Թիվ R (91) 1 առաջարկություն

**«Վարչական հարցերում ժամանակավոր դատական պաշտպանություն»**

Նախարարների կոմիտեի կողմից 1989 թվականի սեպտեմբերի 13-ին Նախարարների տեղակալների 428-րդ նիստում ընդունված Թիվ R (89) 8 առաջարկություն

**«Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգեր»**

Նախարարների կոմիտեի կողմից 1987 թվականի սեպտեմբերի 17-ին Նախարարների տեղակալների 410-րդ նիստում ընդունված Թիվ R (87) 16 առաջարկություն

**«Ոստիկանության ոլորտում անձնական տվյալների օգտագործման կարգավորումը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1987 թվականի սեպտեմբերի 17-ին Նախարարների տեղակալների 410-րդ նիստում ընդունված Թիվ R (87) 15 առաջարկություն

**«Դատարանների գերծանրաբեռնվածությունը կանխելու և նվազեցնելու միջոցները»**

Նախարարների կոմիտեի կողմից 1986 թվականի սեպտեմբերի 16-ին Նախարարների տեղակալների 399-րդ նիստում ընդունված Թիվ R (86) 12 առաջարկություն

**«Սոցիալական ապահովության նպատակներով օգտագործվող անձնական տվյալների պաշտպանությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1986 թվականի հունվարի 23-ին Նախարարների տեղակալների 392-րդ նիստում ընդունված Թիվ R (86) 1 առաջարկություն

**«Օմբուդսմենի ինստիտուտը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականի սեպտեմբերի 23-ին Նախարարների տեղակալների 388-րդ նիստում ընդունված Թիվ R (85) 13 առաջարկություն

**«Չանրային պատասխանատվությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1984 թվականի սեպտեմբերի 18-ին Նախարարների տեղակալների 375-րդ նիստում ընդունված Թիվ R (84) 15 առաջարկություն

**«Արդարադատության մատչելիության խթանմանն ուղղված միջոցները»**

Նախարարների կոմիտեի կողմից 1981 թվականի մայիսի 14-ին իր 68-րդ նիստում ընդունված Թիվ R (81) 7 առաջարկություն

**«Վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացումը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1980 թվականի մարտի 11-ին Նախարարների տեղակալների 316-րդ նիստում ընդունված Թիվ R (80) 2 առաջարկություն

**«Անդամ պետությունների օմբուդսմենների միջև, ինչպես նաև նրանց և Եվրոպայի խորհրդի միջև համագործակցությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականի սեպտեմբերի 23-ին Նախարարների տեղակալների 388-րդ նիստում ընդունված (85) 8 բանաձև

**«Իրավաբանական օգնությունը և խորհրդատվությունը»**

Նախարարների կոմիտեի կողմից 1978 թվականի մարտի 2-ին Նախարարների տեղակալների 284-րդ նիստում ընդունված (78) 8 բանաձև

**«Անհատի պաշտպանությունը վարչական մարմինների ակտերի առնչությամբ»**

Նախարարների կոմիտեի կողմից 1977 թվականի սեպտեմբերի 28-ին Նախարարների տեղակալների 275-րդ նիստում ընդունված (77) 31 բանաձև

**«Իրավաբանական օգնությունը քաղաքացիական, առևտրային և վարչական հարցերով»**

Նախարարների կոմիտեի կողմից 1976 թվականի փետրվարի 18-ին Նախարարների տեղակալների 254-րդ նիստում ընդունված (76) 5 բանաձև

## Հավելված II

# Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որն առնչվում է սույն ձեռնարկում նշված սկզբունքներին

### Թվարկված՝ այբբենական կարգով

**Ա. Մենարինի Դայգնոսթիքս Ս.ռ.լ.-ն ընդդեմ Իտալիայի**, թիվ 43509/08, 2011 թվականի սեպտեմբերի 27 (Սկզբունք 15)

**Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի**, թիվ 23465/03, 2011 թվականի հոկտեմբերի 6 (Սկզբունքներ 14 և 21)

**Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1998 թվականի սեպտեմբերի 2, *Վճիռների և որոշումների մասին զեկուլյցներ* 1998-VI (Սկզբունք 3)

**Էյրին ընդդեմ Իռլանդիայի**, 1979 թվականի հոկտեմբերի 9, շարք Ա թիվ 32 (Սկզբունք 19)

**Բիլանի Նագին ընդդեմ Հունգարիայի** [ՄԴ], թիվ 53080/13, ՄԻԵԴ 2016 (Սկզբունք 5)

**Բեյելերն ընդդեմ Իտալիայի** [ՄԴ], թիվ 33202/96, ՄԻԵԴ 2000-I (Սկզբունք 12)

**Բլադեստ Տրոմսոն և Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի** [ՄԴ], թիվ 21980/93, ՄԻԵԴ 1999-III (Սկզբունք 6)

**Բրումարեսկունն ընդդեմ Ռումինիայի** [ՄԴ], թիվ 28342/95, ՄԻԵԴ 1999-VII (Սկզբունք 5)

**Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 15339/02 և ևս 4-ը, ՄԻԵԴ 2008 (քաղվածքներ) (Սկզբունք 6)

**Բուշեմին ընդդեմ Իտալիայի**, թիվ 29569/95, ՄԻԵԴ 1999-VI (Սկզբունք 10)

**Շահալն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1996 թվականի նոյեմբերի 15, Վճիռների և որոշումների մասին գեկոյցներ 1996-V (Սկզբունք 11)

**Դը ժուֆորը դը լա Պղաղելն ընդդեմ Ֆրանսիայի**, 1992 թվականի դեկտեմբերի 16, շարք Ա թիվ 253-Բ (Սկզբունք 13),

**Դե Սոուզա Ռիբեյրոն ընդդեմ Ֆրանսիայի** [ՄՊ], թիվ 22689/07, ՄԻԵԴ 2012 (Սկզբունք 16)

**Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի**, թիվ 30499/03, 2011 թվականի փետրվարի 10 (Սկզբունքներ 12 և 14)

**Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների**, 1976 թվականի հունիսի 8, շարք Ա թիվ 22 (Սկզբունք 15)

**Ֆերրազինին ընդդեմ Իտալիայի** [ՄՊ], թիվ 44759/98, ՄԻԵԴ 2001-VII

**Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1989 թվականի հուլիսի 7, շարք Ա թիվ 160 (Սկզբունք 7)

**Նյաորեն ընդդեմ Ֆրանսիայի**, թիվ 40031/98, ՄԻԵԴ 2000-IX (Սկզբունք 2)

**Գուլջան ընդդեմ Մոլդովայի** [ՄՊ], թիվ 14277/04, ՄԻԵԴ 2008 (Սկզբունք 6)

**Հարալամբին ընդդեմ Ռումինիայի**, թիվ 21737/03, 2009 թվականի հոկտեմբերի 27 (Սկզբունք 7)

**Հաթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության** [ՄՊ], թիվ 36022/97, ՄԻԵԴ 2003-VIII (Սկզբունք 9)

**Հորնսբին ընդդեմ Հունաստանի**, 1997 թվականի մարտի 19, Վճիռների և որոշումների մասին գեկոյցներ 1997-II (Սկզբունք 14)

**Հաթթեն Հապսկան ընդդեմ Լեհաստանի** [ՄՊ], թիվ 35014/97, ՄԻԵԴ 2006-VIM (Սկզբունք 4)

**Ջաբարին ընդդեմ Թուրքիայի**, թիվ 40035/98, ՄԻԵԴ 2000-VIII (Սկզբունք 16)

**Ջերսիլոն ընդդեմ Դանիայի**, 1994 թվականի սեպտեմբերի 23, շարք Ա թիվ 298 (Սկզբունք 6)

**Կ.Յ.-ն և այլք ընդդեմ Սլովակիայի**, թիվ 32881/04, ՄԻԵԴ 2009 (քաղվածքներ) (Սկզբունք 7)

**Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ 35394/97, ՄԻԵԴ 2000-V (Սկզբունք 5)

**Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի**, 1978 թվականի սեպտեմբերի 6, շարք Ա թիվ 28 (Սկզբունքներ 7 և 19),

**Կոպեկին ընդդեմ Սլովակիայի** [ՄՊ], թիվ 44912/98, ՄԻԵԴ 2004-IX (Սկզբունք 5)

**Կուխարեսը և Կուխարեսան ընդդեմ Լատվիայի** (որոշում), թիվ 71557/01, 2004 թվականի դեկտեմբերի 7 (Սկզբունք 8)

**Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 57818/09 և ևս 14-ը, 2017 թվականի փետրվարի 7 (Սկզբունք 1)

**Լեանդերն ընդդեմ Շվեդիայի**, 1987 թվականի մարտի 26, շարք Ա թիվ 116 (Սկզբունք 18)

**Լուեզոն ընդդեմ Ֆրանսիայի**, թիվ 46809/99, 2004 թվականի սեպտեմբերի 28 (Սկզբունք 6)

**Մաուլյան ընդդեմ Ֆրանսիայի** [ՄՊ], թիվ 39652/98, ՄԻԵԴ 2000-X

**Մազյար Յելսինկի Բիզոթցազն ընդդեմ Հունգարայի** [ՄՊ], թիվ 18030/11, 2016 թվականի նոյեմբերի 8 (Սկզբունք 6)

**Մարքսն ընդդեմ Բելգիայի**, 1979 թվականի հունիսի 13, շարք Ա թիվ 31 (Սկզբունք 5)

**Մարկովը և Մարկովան ընդդեմ Ուկրաինայի** (որոշում), թիվ 37734/07, 2015 թվականի հոկտեմբերի 13 (Սկզբունք 8)

**ՄքՄայքլն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1995 թվականի փետրվարի 24, շարք Ա թիվ 307-Բ (Սկզբունք 10)

**«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մովսեսյանն ընդդեմ Հայասանի**, թիվ 32283/04, 2008 թվականի հունիսի 17 (Սկզբունք 13)

**Մոսկալն ընդդեմ Լեհաստանի**, թիվ 10373/05, 2009 թվականի սեպտեմբերի 15 (Սկզբունք 12)

**Օբզերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1991 թվականի նոյեմբերի 26, շարք Ա թիվ 216 (Սկզբունք 6)

**Օներյոլդզն ընդդեմ Թուրքիայի** [ՄՊ], թիվ 48939/99, ՄԻԵԴ 2004-XII (Սկզբունք 12)

**Փի-ն, Սի-ն և Էս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ 56547/00, ECHR 2002-VI (Սկզբունք 19)

**Պիեռ-Բլոիսն ընդդեմ Ֆրանսիայի**, 1997 թվականի հոկտեմբերի 21, Վճիռների և որոշումների մասին գեկույցներ 1997-VI

**«Փայն Վելլի Դիվելփմաթս» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Իռլանդիայի**, 1991 թվականի նոյեմբերի 29, շարք Ա թիվ 222 (Սկզբունք 5)

**Պրեսսոս Լավիերա Կոմպանի Էս. Էյ.-ը և այլք ընդդեմ Բելգիայի**, 1995 թվականի նոյեմբերի 20, շարք Ա թիվ 332 (Սկզբունք 5)

**Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 58255/00, ՄԻԵԴ 2004-XI (քաղվածքներ) (Սկզբունք 1)

**Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի**, 1971 թվականի հուլիսի 16, շարք Ա թիվ 13 (Սկզբունք 19)

**Ռուսկն ընդդեմ Շվեդիայի**, թիվ 27183/04, 2013 թվականի հուլիսի 25 (Սկզբունք 20)

**Ռիստվակին ընդդեմ Ուկրաինայի**, թիվ 29979/04, 2011 թվականի հոկտեմբերի 20 (Սկզբունքներ 5, 6, 12 և 16)

**Ս.-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության** [ՄՊ], թիվ 30562/04 և 30566/04, ՄԻԵԴ 2008 (Սկզբունք 7)

**Սեգերշտեդթ Վիբերգը և այլք ընդդեմ Շվեդիայի**, թիվ 62332/00, ՄԻԵԴ 2006-VII (Սկզբունք 7)



**Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1989 թվականի հուլիսի 7, շարք Ա թիվ 161 (Սկզբունք 4)

**Սթրեթչն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ 44277/98, 2003 թվականի հունիսի 24 (Սկզբունք 1)

**Թաշքը և այլք ընդդեմ Թուրքիայի**, թիվ 46117/99, ՄԻԵԴ 2004-X (Սկզբունքներ 9 և 19)

**Սանդեյ Թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 1)**, 1979 թվականի ապրիլի 26, շարք Ա թիվ 30 (Սկզբունք 1)

**Թորգեր Թորգերսոնն ընդդեմ Իսլանդիայի**, 1992 թվականի հունիսի 25, շարք Ա թիվ 239 (Սկզբունք 6)

**Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1995 թվականի հուլիսի 13, շարք Ա թիվ 316-Բ (Սկզբունք 1)

**ԾՖայոն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ 60860/00, 2006 թվականի նոյեմբերի 14 (Սկզբունք 17)

**Վիլոն Էսկելինեն և այլք ընդդեմ Ֆինլանդիայի [ՄՊ]**, թիվ 63235/00, ՄԻԵԴ 2007-II (Սկզբունք 19)

**Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի**, թիվ 52806/09 և 22703/10, 2013 թվականի դեկտեմբերի 5 (Սկզբունք 6)

**Չինտարասն ընդդեմ Շվեդիայի** (որոշում), թիվ 55741/00, 2004 թվականի հունիսի 22 (Սկզբունքներ 1 և 4)

**Չարբ Ադամին ընդդեմ Մալթայի**, թիվ 17209/02, ՄԻԵԴ 2006-VIM (Սկզբունք 2)

## Թվարկված՝ ըստ սկզբունքների

### Սկզբունք 1. Օրինականություն և համապատասխանություն օրենքով նախատեսված նպատակին

**Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 57818/09 և ևս 14-ը, 2017 թվականի փետրվարի 7

**Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 58255/00, ՄԻԵԴ 2004-XI (քաղվածքներ)

**Սթրեթչն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ 44277/98, 2003 թվականի հունիսի 24

**Սանդեյ Թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 1)**, 1979 թվականի ապրիլի 26, շարք Ա թիվ 30

**Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1995 թվականի հուլիսի 13, շարք Ա թիվ 316-Բ

**Չինտարասն ընդդեմ Շվեդիայի** (որոշում), թիվ 55741/00, 2004 թվականի հունիսի 22

## **Սկզբունք 2. Հավասար վերաբերմունք**

*Նյաորեն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 40031/98, ՄԻԵԴ 2000-IX

*Չարք Ադամին ընդդեմ Մալթայի*, թիվ 17209/02, ՄԻԵԴ 2006-VIII

## **Սկզբունք 3. Օբյեկտիվություն և անառաչություն**

*Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1998 թվականի սեպտեմբերի 2, *Վճիռների և որոշումների մասին զեկուլյցներ* 1998-VI

## **Սկզբունք 4. Համաչափություն**

*Հաթթեն Չապսկան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ], թիվ 35014/97, ՄԻԵԴ 2006-VIII

*Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1989 թվականի հունիսի 7, շարք Ա թիվ 161

*Չինտարասն ընդդեմ Շվեդիայի (որոշում)*, թիվ 55741/00, 2004 թվականի հունիսի 22

## **Սկզբունք 5. Իրավական որոշակիություն**

*Բիլանի Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], թիվ 53080/13, ՄԻԵԴ 2016

*Բրոմմարեսկուն ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ], թիվ 28342/95, ՄԻԵԴ 1999-VII

*Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 35394/97, ՄԻԵԴ 2000-V

*Կոպեկին ընդդեմ Սլովակիայի* [ՄՊ], թիվ 44912/98, ՄԻԵԴ 2004-IX

*Մարքսն ընդդեմ Բելգիայի*, 1979 թվականի հունիսի 13, շարք Ա թիվ 31  
*«Փայն Վելլի Դիվելփմիթս» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Իռլանդիայի*, 1991 թվականի նոյեմբերի 29, շարք Ա թիվ 222

*Պրեսսոսու Նավիերա Կոմպանի Էս. Էյ.-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, 1995 թվականի նոյեմբերի 20, շարք Ա թիվ 332

*Ռիսոմակին ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 29979/04, 2011 թվականի հոկտեմբերի 20

## **Սկզբունք 6. Թափանցիկություն**

*Բլադետ Տրոմսոն և Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի* [ՄՊ], թիվ 21980/93, ՄԻԵԴ 1999-III

*Բուդալան և այլք ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 15339/02 և ևս 4-ը, ՄԻԵԴ 2008 (քաղվածքներ)

*Գուլջան ընդդեմ Մոլդովայի* [ՄՊ], թիվ 14277/04, ՄԻԵԴ 2008

*Ջերսիլոն ընդդեմ Դանիայի*, 1994 թվականի սեպտեմբերի 23, շարք Ա թիվ 298

**Լուեզոն ընդդեմ Ֆրանսիայի**, թիվ 46809/99, 2004 թվականի սեպտեմբերի 28

**Մազյար Հելսինկի Բիզոթցազն ընդդեմ Հունգարայի [ՄՊ]**, թիվ 18030/11, 2016 թվականի նոյեմբերի 8

**Օբզերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1991 թվականի նոյեմբերի 26, շարք Ա թիվ 216

**Ռիստվակին ընդդեմ Ուկրաինայի**, թիվ 29979/04, 2011 թվականի հոկտեմբերի 20

**Թորգեր Թորգերսոնն ընդդեմ Իսլանդիայի**, 1992 թվականի հունիսի 25, շարք Ա թիվ 239

**Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի**, թիվ 52806/09 և 22703/10, 2013 թվականի դեկտեմբերի 5

## **Սկզբունք 7. Մասնավոր կյանքի անձեռնմխելիություն և անձնական տվյալների պաշտպանություն**

**Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության**, 1989 թվականի հուլիսի 7, շարք Ա թիվ 160

**Հարալամբին ընդդեմ Ռումինիայի**, թիվ 21737/03, 2009 թվականի հոկտեմբերի 27

**Կ.Յ.-ն և այլք ընդդեմ Սլովակիայի**, թիվ 32881/04, ՄԻԵԴ 2009 (քաղվածքներ)

**Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի**, 1978 թվականի սեպտեմբերի 6, շարք Ա թիվ 28

**Ս.-ն և Մարիերն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]**, թիվ 30562/04 և 30566/04, ՄԻԵԴ 2008

**Սեգերշտեդթ Վիբերգը և այլք ընդդեմ Շվեդիայի**, թիվ 62332/00, ՄԻԵԴ 2006-VII

## **Սկզբունք 8. Մատչելիություն**

**Կուխարեսը և Կուխարեսան ընդդեմ Լատվիայի** (որոշում), թիվ 71557/01, 2004 թվականի դեկտեմբերի 7

**Մարկովը և Մարկովան ընդդեմ Ուկրաինայի** (որոշում), թիվ 37734/07, 2015 թվականի հոկտեմբերի 13

## **Սկզբունք 9. Մասնակցություն**

**Հաթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]**, թիվ 36022/97, ՄԻԵԴ 2003-VIII

**Թաշքնը և այլք ընդդեմ Թուրքիայի**, թիվ 46117/99, ՄԻԵԴ 2004-X

## **Սկզբունք 10. Լսված լինելու իրավունք**

*Բուշեմին ընդդեմ Իտալիայի*, թիվ 29569/95, ՄԻԵԴ 1999-VI

*ՄքՄայքլն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1995 թվականի փետրվարի 24, շարք Ա թիվ 307-Բ

## **Սկզբունք 11. Ներկայացուցչություն և աջակցություն**

*Շահալն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1996 թվականի նոյեմբերի 15, Վճիռների և որոշումների մասին գեկույցներ 1996-V

## **Սկզբունք 12. Ժամկետներ**

*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], թիվ 33202/96, ՄԻԵԴ 2000-I

*Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 30499/03, 2011 թվականի փետրվարի 10

*Մոսկալն ընդդեմ Լեհաստանի*, թիվ 10373/05, 2009 թվականի սեպտեմբերի 15

*Օսերյոլդզն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 48939/99, ՄԻԵԴ 2004-XII

*Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 29979/04, 2011 թվականի հոկտեմբերի 20

## **Սկզբունք 13. Վարչական որոշումների ձևը և ծանուցումը**

*Դը ժուֆորը դը լա Պղադելն ընդդեմ Ֆրանսիայի*, 1992 թվականի դեկտեմբերի 16, շարք Ա թիվ 253-Բ

*«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 32283/04, 2008 թվականի հունիսի 17

## **Սկզբունք 14. Վարչական որոշումների կատարում**

*Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 23465/03, 2011 թվականի հոկտեմբերի 6

*Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 30499/03, 2011 թվականի փետրվարի 10

*Հորնսբին ընդդեմ Հունաստանի*, 1997 թվականի մարտի 19, Վճիռների և որոշումների մասին գեկույցներ 1997-II

## **Սկզբունք 15. Վարչական պատժամիջոցներ**

*Ա. Մենարինի Դայզնոսթիքս Ս.ռ.լ.-ն ընդդեմ Իտալիայի*, թիվ 43509/08, 2011 թվականի սեպտեմբերի 27

*Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, 1976 թվականի հունիսի 8, շարք Ա թիվ 22

## **Սկզբունք 16. Պատասխանատվություն և հատուցում**

*Դե Սոուզա Ռիբեյրոն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], թիվ 22689/07, ՄԻԵԴ 2012  
*Ջաբարին ընդդեմ Թուրքիայի*, թիվ 40035/98, ՄԻԵԴ 2000-VIII  
*Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 29979/04, 2011 թվականի հոկտեմբերի 20

## **Սկզբունք 17. Ներքին վերանայում**

*ԾՖայոն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 60860/00, 2006 թվականի նոյեմբերի 14

## **Սկզբունք 18. Արտադատական կարգով վերանայում**

*Լեանդերն ընդդեմ Շվեդիայի*, 1987 թվականի մարտի 26, շարք Ա թիվ 116

## **Սկզբունք 19. Բողոքարկման իրավունք**

*Էյրին ընդդեմ Իռլանդիայի*, 1979 թվականի հոկտեմբերի 9, շարք Ա թիվ 32

*Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի*, 1978 թվականի սեպտեմբերի 6, շարք Ա թիվ 28

*Փի-ն, Սի-ն և Էս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 56547/00, ՄԻԵԴ 2002-VI

*Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի*, 1971 թվականի հուլիսի 16, շարք Ա թիվ 13

*Թաշքնը և այլք ընդդեմ Թուրքիայի*, թիվ 46117/99, ՄԻԵԴ 2004-X

*Վիլիո Էսկելինեն և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ], թիվ 63235/00, ՄԻԵԴ 2007-II

## **Սկզբունք 20. Միջանկյալ կամ ժամանակավոր պաշտպանություն**

*Ռուսկն ընդդեմ Շվեդիայի*, թիվ 27183/04, 2013 թվականի հուլիսի 25

## **Սկզբունք 21. Դատական որոշումների կատարում**

*Ագրոկոմպլեքսն ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 23465/03, 2011 թվականի հոկտեմբերի 6



Agents de vente des publications du Conseil de l'Europe  
Եվրոպայի խորհրդի հրատարակումների վաճառքի գործակալներ

**ԲԵԼԳԻԱ**

Եվրոպական գրախանութ  
Ռյու դե Ի'Օրմ, 1 BE-1040  
ԲՐՅՈՒՄԵԼ  
Հեռ` + 32 (0)2 231 04 35  
Ֆաքս` + 32 (0)2 735 08 60  
Էլ. փոստ` info@libeurop.eu  
http://www.libeurop.be

Jean De Lannoy/DL Services  
c/o Michot Warehouses  
Bergense steenweg 77  
Chaussee de Mons BE-1600  
SINT PIETERS LEEUW  
Ֆաքս` + 32 (0)2 706 52 27  
Էլ. փոստ` jean.de.lannoy@  
dl-servi.com http://www.  
jean-de-lannoy.be

**ԿԱՆԱԴԱ**

Renouf Publishing Co. Ltd.  
22-1010 Polytek Street  
CDN-OTTAWA, ONT K1J 9J1  
Հեռ` + 1 613 745 2665  
Ֆաքս` + 1 613 745 7660  
Toll-Free  
Հեռ` (866) 767-6766  
Էլ. փոստ` order.dept@  
renoufbooks.com http://www.  
renoufbooks.com

**ԽՈՐՎԱԹԻԱ**

Robert's Plus d.o.o.  
Marasovigeva 67 HR-21000  
SPLIT  
Հեռ` + 385 21 315 800,  
801,802, 803  
Ֆաքս` + 385 21 315 804  
Էլ. փոստ` robertsplus@  
robertsplus.hr

**ՉԵԽԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Suweco CZ, s.r.o.  
Klecakova 347 CZ-180 21  
PRAHA 9 Հեռ` + 420 2 424 59  
204 Ֆաքս` + 420 2 848 21 646  
Էլ. փոստ` import@suweco.cz  
http://www.suweco.cz

**ԴԱՆԻԱ**

GAD  
Vimmelskaffet 32 DK-1161  
KØBENHAVN K Հեռ` + 45 77  
66 60 00 Ֆաքս` + 45 77 66 60  
01 Էլ. փոստ` reception@gad.  
dk http://www.gad.dk

**ՖԻՆԼԱՆԴԻԱ**

Ակադեմիական գրախանութ  
PO Box 128  
Կենտրոնական փողոց 1  
FI-00100 ՀԵԼՍԻՆԿԻ  
Հեռ` + 358 (0)9 121 4430  
Ֆաքս` + 358 (0)9 121 4242  
Էլ. փոստ` akatilaus@  
akateeminen.com  
http://www.akateeminen.com

**ՖՐԱՆՍԻԱ**

Խնդրում ենք ուղիղ կապ  
հաստատել/  
Merci de contacter directement  
Council of Europe Publishing  
Editions du Conseil de l'Europe  
F-67075 USRՎԱՐՈՒՐԳ Cedex  
Հեռ` + 33 (0)3 88 41 25 81  
Ֆաքս` + 33 (0)3 88 41 39 10  
Էլ. փոստ` publishing@coe.int  
http://book.coe.int

Librairie Kleber 1, rue des  
Francs-Bourgeois F-67000  
USRՎԱՐՈՒՐԳ  
Հեռ` + 33 (0)3 88 15 78 88  
Ֆաքս` + 33 (0)3 88 15 78 80  
Էլ. փոստ` librairie-kleber@coe.int  
http://www.librairie-kleber.com

**ՆՈՐՎԵԳԻԱ**

Akademika  
Postboks 84 Blindern  
NO-0314 OSLO  
Հեռ` + 47 2 218 8100  
Ֆաքս` + 47 2 218 8103  
Էլ. փոստ` support@  
akademika.no  
http://www.akademika.no

**ԼԵՅՊԱՏԱՆ**

Ars Polona JSC  
25 Obbroncow Street  
PL-03-933 ՎԱՐՇԱՎԱ  
Հեռ` + 48 (0)22 509 86 00  
Ֆաքս` + 48 (0)22 509 86 10  
Էլ. փոստ` arspolona@  
arspolona.com.pl  
http://www.arspolona.com.pl

**ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ**

Marka Lda  
Rua dos Correios 61-3  
PT-1100-162 LISBOA  
Հեռ` 351 21 3224040  
Ֆաքս` 351 21 3224044  
Էլ. փոստ` apoio.clientes@  
marka.pt  
www.marka.pt

**ՌՈՒՍԱՍԱՆԻ  
ՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ**

Վես միր  
17բ, Բուսլերովյա փող.  
- Գրասենյակ 338 RU-117342  
ՄՈՍԿՎԱ  
Հեռ` + 7 495 739 0971  
Ֆաքս` + 7 495 739 0971  
Էլ. փոստ` orders@vesmir-  
books.ru http://www.  
vesmirbooks.ru

**ՇՎԵՑՅԱՐԻԱ**

Planetis Sarl 16, chemin des  
Pins CH-1273 ARZIER  
Հեռ` + 41 22 366 51 77  
Ֆաքս` + 41 22 366 51 78  
Էլ. փոստ` info@planetis.ch

**ԹԱՅՎԱՆ**

Tycoon Information Inc.  
5th Floor, No. 500, Chang-  
Chun Road  
Taipei, Taiwan  
Հեռ` 886-2-8712 8886  
Ֆաքս` 886-2-8712 4747, 8712  
4777  
Էլ. փոստ` info@tycoon-info.  
com.tw  
orders@tycoon-info.com.tw

**ՄԻԱՑՅԱԼ**

**ԹԱՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**  
The Stationery Office Ltd PO  
Box 29  
GB-NORWICH NR3 1GN Հեռ`  
+ 44 (0)870 600 5522  
Ֆաքս` + 44 (0)870 600 5533  
Էլ. փոստ` book.enquiries@tso.  
co.uk http://www.tsoshop.co.uk

**ՄԻԱՑՅԱԼ ԱՆՋԱՆՂԵՐ ԵՎ  
ԿԱՆԱԴԱ**

Manhattan Publishing Co  
670 White Plains Road  
USA-10583 SCARSDALE, NY  
Հեռ` + 1 914 472 4650  
Ֆաքս` + 1 914 472 4316  
Էլ. փոստ` coe@manhattanpub-  
lishing.com  
http://www.manhattanpublish-  
ing.com

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն  
F-67075 USRՎԱՐՈՒՐԳ Սեղեթս

Հեռ` + 33 (0)3 88 41 25 81 - Ֆաքս` + 33 (0)3 88 41 39 10 - Էլ. փոստ` publishing@  
coe.int - Կայքէջ` http://book.coe.int

Պետական վարչարարությունն առաջին հերթին մեզ համար է, մեր իրավունքների պաշտպանության համար և հանուն հանրային բարիքի:

Սույն ձեռնարկը կհետաքրքրի բոլոր այն անձանց, ովքեր մտահոգված են պետական վարչակազմի պատշաճ գործունեությամբ՝ այն անհատներին, որոնք դիմում են հանրային ծառայությունների և գործողությունների համար, և այն պետական պաշտոնատար անձանց, որոնք ընթացք են տալիս նրանց դիմումներին, պետական վարչակազմի գործունեության վերանայման գործընթացում ներգրավված փաստաբաններին, դատավորներին և օմբուդսմեններին, ինչպես նաև պետական վարչարարության ոլորտի բարեփոխումների հետ առնչվող քաղաքականություն մշակողներին և օրենսդիրներին:

Ձեռնարկը սահմանում և բացատրում է անհատների և պետական մարմինների միջև հարաբերություններին առնչվող՝ վարչական իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային սկզբունքները, որոնք ուղեկցվում են մեկնաբանություններով՝ հիմնավորված Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերին (կոնվենցիաներ, առաջարկություններ և բանաձևեր) արված հղումներով, որոնցից մշակվել է սկզբունքներից յուրաքանչյուրը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքին արված հղումներով:

[www.coe.int](http://www.coe.int)

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

<http://book.coe.int>  
ISBN 978-92-871-8768-0  
PDF only €9/US\$18

